

## Ց Ա Ն Կ Ե Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՐՏԱՀԱՆՎՈՂ  
ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՎ  
ՏԱՐԱՆՑԻԿ ՓՈԽԱԴՐՎՈՂ ԵՐԿԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ՝  
ՀՍԿՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ  
ՓՈԽԱՆՑՎՈՂ ԵՐԿԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ  
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՏԱՎՈՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ՝ ՀՍԿՎՈՂ  
ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Օգտագործվող տերմինների սահմանումը .....	3
Կատեգորիա 0. Միջուկային նյութեր, տեղակայանքներ և սարքավորումներ.....	40
Կատեգորիա 1. Հատուկ նյութեր և հարակից սարքավորումներ.....	66
Կատեգորիա 2. Նյութերի մշակում.....	142
Կատեգորիա 3. Էլեկտրոնիկա.....	199
Կատեգորիա 4. Համակարգիչներ.....	248
Կատեգորիա 5. Հեռահաղորդակցություն և ինֆորմացիայի պաշտպանություն.....	258
Կատեգորիա 6. Տվիչներ և լազերներ.....	280
Կատեգորիա 7. Նավագնացության սարքավորումներ և ավիացիոն էլեկտրոնիկա...	339
Կատեգորիա 8. Ծովագնացություն.....	359
Կատեգորիա 9. Ավիատիեզերական ապարատներ և հրթիռային շարժիչներ.....	374
Այբբենական ցանկ.....	405
Ծածկագրերի ցանկ.....	471

## ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՀՄԱՆՈՒՄԸ

«Վերին չակերտներում “...”» նշված տերմինների սահմանումները տրվում է են տվյալ հոդվածին վերաբերող Տեխնիկական ծանոթագրության մեջ:

<<Ստորին չակերտներում «...» >> նշված տերմինների սահմանումը գետեղված է ստորև.

*N.B. (նոտա բենե կամ հատուկ ծանոթագրություն) Կատեգորիաներին վերաբերող հղումները տրվում են փակագծերում՝ տերմինի սահմանումից հետո:*

Ճշտություն>> (2, 6) – մեծություն, որը սովորաբար չափվում է սխալանքի միջոցով, որը նշանակում է տվյալ մեծության առավելագույն շեղումը ընդունված ստանդարտից կամ ճիշտ նշանակությունից՝ լինի դա դրական, թե բացասական:

<<Թռիչքի կառավարման ակտիվ համակարգեր>> (7) - համակարգեր, որոնք գործում են <<թռչող ապարատների>> և հրթիռների անցանկալի շեղումների ու կառուցվածքային բեռնվածության կանխարգելման համար, ինչը կատարվում է ավտոմատ կառավարման իրականացման նպատակով մի քանի չափողական տվիչների ելքային ազդանշանների ինքնավար մշակման և անհրաժեշտ նախազուշակյան հրամանների արձակման միջոցով:

<<Ակտիվ պիկսել>> (6 8) – պինդ մարմնի վանդակի նվազագույն (միավոր) տարր, որն օժտված է ֆոտոէլեկտրական փոխանցման ֆունկցիայով լուսային (էլեկտրամագնիսական) ճառագայթման ազդեցության ժամանակ:

<<Ռազմական կիրառության համար հարմարեցված>> (1) - ենթարկված ցանկացած ձևափոխությունների կամ ընտրության՝ ըստ որոշակի հատկանիշների (օրինակ ընտրության՝ ըստ խառնուկների քանակի, պահեստավորման համար պիտանիության ժամկետի, վարակունակության, հատկանիշների փոխանցման, ուլտրամանուշակագույն ճառագայթման նկատմամբ դիմակայունության)՝ մարդկանց և կենդանիների վրա ազդեցության արդյունավետությունը բարձրացնելու կամ սարքավորումների, հողի պտղաբերության կամ շրջակա միջավայրի բնութագրերը վատթարացնելու նպատակով:

<<Ճշգրտված պիկային կատարում>> (4) ճշգրտված պիկային հզորություն, որով <<թվային համակարգիչները>> կատարում են 64 բիտանոց կամ ավելի մեծ թվերի լողացող կետի հավելումներով և բազմապատկումներով գործողություններ, և

արտահայտված է միջինացված տեռաֆլոփներով (WT) մեկ վայրկյանում  $10^{12}$  ճշգրտված լողացող կետի գործողություններով:

ՀԾ. տես Կատեգորիա 4, Տեխնիկական ծանոթագրություն:

<<Թռչող ապարատ>> (1, 7, 9) – օդային թռիչքների համար նախատեսված միջոց՝ հաստատուն կամ փոփոխական երկրաչափություն ունեցող թևերով, պտտվող թևով (ուղղաթիռ), դարձովի տանող պտուտակով կամ տանող թևով:

Հ.Ծ. Տե՛ս նաև <<Քաղաքացիական նշանակության թռչող ապարատ>>:

<<Բոլոր հատուցումները առկա են>> (2) նշանակում է հաշվի են առնվել առանձին վերցված հաստոցային մոդելի համար սիստեմատիկ դիրքավորման բոլոր սխալները նվազագույնի հասցնող, արտադրողին մատչելի բոլոր իրականալի միջոցները:

<<Հատկացված է Միջազգային հեռահաղորդակցման միության (ITU) կողմից>> (3 5) նշանակում է հաճախականության լայնությունների հատկացումը համաձայն Միջազգային հեռահաղորդակցման միության (ITU) ռադիո հաճախականությունների կանոնակարգման ընթացիկ խմբագրությանը՝ նախնական, թույլատրված և երկրորդական ծառայությունների համար:

ՀԾ. *Լրացուցիչ և այլընտրանքային հատկացումները ընդգրկված չեն:*

<<Պատահական անկյունային դեգերում>> (7) նշանակում է անկյունային սխալ, որն առաջանում է ժամանկի ընթացքում, որը անկյունային առումով սպիտակ աղմուկի արդյունքն է: (IEEE STD 528-2001)

<<Անկյունային դիրքի թեքում>> (2) - անկյունային դիրքի և փաստացի դիրքի միջև առավելագույն տարբերությունը՝ ըստ անկյան, որը չափվում է շատ բարձր ճշգրտությամբ այն բանից հետո, երբ մշակումից հետո ամրացված մասը թեքված է ելակետային դիրքի նկատմամբ (տե՛ս VDI/VDE2617, Աշխատանքային տարբերակ. <<Կոորդինատների չափման մեխանիզմներից թեքումների կախվածության աղյուսակ>>):

<<APP>> (4) <<Ճշգրտված պիկային կատարում>>:

<<Ասիմետրիկ ալգորիթմ>> (5) նշանակում է ծածկագրային ալգորիթմ, որը ծածկագրման և վերծանման համար օգտագործում է մաթեմատիկորեն փոխկապակցված տարբեր բանալիներ:

Հ.Ծ. <<Ասիմետրիկ ալգորիթմների>> տարածված գործածում է վերծանման բանալիների կառավարումը:

<<Թիրախի ավտոմատ ուղեկցում>> (6) - մշակման մեթոդ, որը ավտոմատ կերպով որոշում և որպես ելքային ազդանշան՝ ապահովում է թիրախի առավել հավանական դիրքի արտարկված նշանակությունը ժամանակի իրական մասշտաբում:

<<Գազաթնակետային միջին հզորություն>> (6) – ջոուլներով արտահայտված էներգիայի իմպուլսը՝ բաժանած վայրկյաններով արտահայտված իմպուլսի տևողության վրա:

<<Հիմնական տրամաբանական սխեմայի տարածման հապաղման ժամանակ>> (3) – նշանակում է տարածման հապաղման ժամանակի արժեքը, որը համապատասխանում է <<մոնոլիտիկ ինտեգրալային շղթայում>> օգտագործված հիմնական տրամաբանական սխեմային: <<Մոնոլիտիկ ինտեգրալային շղթաների>> <<ընտանիքի>> համար դա կարող է հատկորոշվել կամ որպես տիպական տրամաբանական սխեմայում տարածման հապաղման ժամանակը որևէ տրված <<ընտանիքում>> կամ որպես տիպական տարածման հապաղման ժամանակը որևէ <<ընտանիքի>> տրամաբանական սխեմայում:

Հ.Օ. 1. <<Հիմնական տրամաբանական շղթայի տարածման հապաղման ժամանակը>> չպետք է շփոթել բարդ <<մոնոլիտիկ ինտեգրալային շղթայի>> ելքային ու մուտքային ազդանշանների հապաղման ժամանակի հետ:

Հ.Օ. 2. <<Ընտանիքը>> կազմված է բոլոր այն ինտեգրալային շղթաներից, որոնց կարող են վերաբերել հետևյալ հատկանիշները, որպես դրանց արտադրության մեթոդաբանական և սպիցիֆիկացիաներ բացի նրանց համապատասխան ֆունկցիաներից.

ա. Ընդհանուր մեքենայական և ծրագրային (հարդվերային և սոֆթվերային) ճարտարապետություն

բ. Ընդհանուր դիզայնային և պրոցեսային տեխնոլոգիա և

գ. Ընդհանուր հիմնական բնութագրեր:

<<Արմատական գիտական հետազոտություններ>> (ամբողջ Ցանկը) - փորձարարական կամ տեսական աշխատանքներ, որոնք գլխավորապես կատարվում են հիմնական սկզբունքների կամ դիտարկված փաստերի վերաբերյալ նոր գիտելիքներ ձեռք բերելու նպատակով և անմիջականորեն ուղղված չեն կոնկրետ գործնական նպատակի նվաճմանը կամ կոնկրետ առաջադրանքի լուծմանը:

<<Տեղաշարժման լարումը>> (աքսելերոմետր) (7) նշանակում է սահմանված ժամանակում աքսելերոմետրի ելքային ցուցանիշ, որը չափվում է աշխատանքի որոշված պայմանների առկայության դեպքում և որևէ կապ չունի մուտքային արագացման կամ ռոտացիայի հետ: <<Տեղաշարժման լարումը>> արտահայտվում է գրամներով կամ մետր/քառակուսի վայրկյանով (գ կամ մ/վ<sup>2</sup>): (IEEE Std 528-2001) (միկրո գ-ն հավասար է  $1 * 10^{-6}$  գ):

<<Տեղաշարժ>> (գիրոսկոպ) (7) նշանակում է սահմանված ժամանակում գիրոսկոպի միջին ելքային ցուցանիշ, որը չափվում է աշխատանքի որոշված պայմանների առկայության դեպքում և որևէ կապ չունի մուտքային ռոտացիայի կամ արագացման հետ: <<Տեղաշարժման լարումը>> սովորաբար արտահայտվում է աստիճան/ժամով (աստ/ժ): (IEEE Std 528-2001).

<<Բռունցքային էֆեկտ>> (էքսցենտրիսիտետ) (2) – Հիմնական իլի առանցքային շեղումը մեկ պտույտի արդյունքում, որը չափված է իլի տափակապիչին ուղղահայաց հարթության վրա՝ իլի պտտման մակերեսի վրա չափված կետում (տե՛ս ISO 230/1-1986, կետ 5.63):

<<Ածխածնային հյուսվածքի նախաձևեր/կաղապարներ>> (1) նշանակում է նախապես պատրաստ ստված արտաքին շերտով չպատված կամ պատված հյուսվածքներ, որոնց նպատակն է պարորոդ արտաքին շրջանակ դառնալ որևէ մասի համար մինչև <<մատրիցը>> ներկայացվի <<բաղադրանյութ>> կազմելու համար:

<<CE>> նշանակում է <<հաշվարկման տար>>:

<<CEP>> (հավասար հավանականության շրջան) (7) ճշգրտության չափ է. նշանակետում տեղադրված շրջանի շառավիղը, որի վրա է ընկնելու հարվածի ուժի 50%-ը:

<<Քիմիական լազեր>> (6) – <<լազեր>>, որում գրգռվող միջավայրը ձևավորվում է քիմիական ռեակցիայի առաջացրած էներգիայի հաշվին:

<<Քիմիական խառնուրդ>> (1) նշանակում է կարծր, հեղուկ կամ գազային նյութ ստացված երկու կամ ավելի բաղադրանյութերից, որոնք միմյանց հետ ռեակցիայի մեջ չեն մտնում այն պայմաններում, որոնցում խառնուրդը պատրաստվել է:

<<Հոսանքով վերահսկվող պոչային պտուտակի կամ հոսանքով վերահսկվող ուղղորդման վերահսկիչ համակարգ>> (7) – համակարգեր են, որոնք օգտագործում են ալեքտրոնամիկ մակերեսների վրա ազդող օդային հոսքերը՝ այդ մակերեսներից ծագող ուժերի ուժեղացման կամ հսկման համար>>:

<<Քաղաքացիական նշանակության թռչող ապարատներ>> (1, 7, 9) – Թռիչքային պիտանության <<թռչող ապարատներ>>, որոնք թվարկված են հրատարակված ցանկերում պարունակվող նշանակություններին համապատասխան՝ ներքին և արտաքին քաղաքացիական նշանակության առևտրային ավիատրոլիներով թռիչքների կատարման, քաղաքացիական նպատակներով օրինականացված մասնավոր օգտագործման կամ գործարար նպատակներով օգտագործման համար.

Հ.Օ. Տես նաև <<թռչող ապարատներ>>

<<Փոխիյուսված>> (1) – նշանակում է ջերմապլաստիկ մանրաթելերի փաթաթվածքների փոխադարձ միահյուսում և մանրաթելերի ուժեղացում՝

մանրաթելերով ամրանավորված ամբողջական <<մատրիցային>> միահյուսվածք ստանալու նպատակով:

<<Մանրացում>> (1) - աղալու կամ տրորելու միջոցով նյութի մանրացման գործընթացը:

<<Փոխանցում ընդհանուր կապուղիով>> (5) - փոխանցման մեթոդ, որի դեպքում մի կապուղիով, նշված հաղորդումների միջոցով, կայանների միջև փոխանցվում է ինֆորմացիա կապուղիների կամ կանչերի քանակի վերաբերյալ կամ ցանցի կառավարման համար օգտագործվող այլ ինֆորմացիա:

<<Հաղորդակցման կապուղու կարգավորիչ>> (4) – սինքրոնային կամ ասինքրոնային թվային տեղեկության հոսքը կառավարող ֆիզիկական ինտերֆեյս: Այն կարող է ներկատուցվել համակարգչում կամ հեռահաղորդակցության սարքավորման մեջ հաղորդակցման կապ ապահովելու համար:

<<Հատուցման համակարգ>> (6) բաղկացած է նախնական սկալարային տվիչից, մեկ կամ ավելի երկրորդական տվիչներից (օրինակ, վեկտորային մագնիտոմետրերը) որոշակի ծրագրային ապահովման հետ, որը թույլ է տալիս կրճատել պլատֆորմի կարծրամարմին պտույտի աղմուկը:

<<Կոմպոզիտային>> կառուցվածքներ (1, 2, 6, 8, 9) – նշանակում է <<մատրիցա>> և լրացուցիչ ֆազ կամ լրացուցիչ ֆազեր, որոնք կազմված են որոշակի նպատակի կամ նպատակների համար նախատեսված մասնիկներից, ամրանավորող լցավորիչներից, մանրաթելերից կամ դրանց ցանկացած համադրությունից:

<<Բաղադրիչ պտտվող սեղան>> (2) – սեղան, որը թույլ է տալիս դետալը պտտել և թեքել երկու ոչ զուգահեռ առանցքների շուրջը, որը կարող է միաժամանակ կոորդինացվել <<Եզրագծային կառավարման>> համար:

<<Հաշվողական տարր>> (<<ՀՏ>>) (4) - թվաբանական կամ տրամաբանական գործողություններ կատարող նվազագույն հաշվողական միավորը:

<<III/V բաղադրիչներ>> (3 6) նշանակում է պոլիբյուրեղային կամ երկակի կամ բաղադրիչ մոնոբյուրեղային ապրանքներ՝ բաղկացած Մենդելևևի քիմիական աղյուսակի IIIԱ և VԱ տարրերի խմբերից (օր.՝ գալիումի արսենիդ, գալիումի-ալյումինի արսենիդ, ինդիումի ֆոսֆորիդ):

<<Եզրագծային կառավարում>> (2) – նշանակում է շարժում <<թվային կառավարում>> ունեցող երկու կամ ավելի առանցքներով, որն իրականացվում է այն հրահանգներին համապատասխան, որոնցով որոշվում է հաջորդ պահանջվող դիրքը և դեպի այդ դիրքը մատուցման համար պահանջվող արագությունները: Այդ մատուցման արագությունները փոփոխվում են միմյանց հետ փոխգործողության մեջ, ինչը և ստեղծում է որոնվող եզրագիծը (ISO/DIS 2806-1980):

<<Կրիտիկական ջերմաստիճան>> (1, 3, 6) - (երբեմն կոչվում է անցումային ջերմաստիճան) որոշակի <<գերհաղորդիչ>> նյութի ջերմաստիճան, որի դեպքում նյութը կորցնում է դիմադրողականությունը անցնող էլեկտրական հոսանքի նկատմամբ:

<<Գաղտնագրություն>> (5) - Իրավիճակ, որն ընդգրկում է ինֆորմացիայի փոխակերպման սկզբունքներ, միջոցներ և եղանակներ՝ ինֆորմացիայի բովանդակությունը թաքցնելու և ինֆորմացիայի ձևափոխումը կամ չլիազորված օգտագործումը կանխարգելելու նպատակով: Գաղտնագրությունը սահմանափակված է ինֆորմացիայի փոխակերպմամբ՝ մեկ կամ ավելի <<գաղտնի պարամետրերի>> (օրինակ՝ գաղտնագրային փոփոխականների) օգտագործման կամ գաղտնաբանալու համապատասխան կառավարման միջոցով:

Ն.Օ. <<Գաղտնի պարամետր>> - միայն որոշակի խումբի անձանց հայտնի և մյուս անձանցից թաքցվող հաստատուն մեծություն կամ գաղտնաբանալի:

<<CW լազեր>> (6) նշանակում է <<լազեր>>, որը տալիս է նոմինալ կայուն էներգիա ավելի քան 0,25 վայրկյանի ընթացքում:

<<Տվյալային հիմքով ուղղորդված նավարկում>> ("DBRN") (7) Համակարգային միջոց, որն օգտագործում է նախօրոք չափված գեո-քարտեզային տվյալների տարբեր ինտեգրված աղբյուրներ, հարաշարժ պայմաններում ճշգրիտ նավարկային տեղեկատվություն տալու համար: Տվյալների աղբյուրների մեջ մտնում են բաթիմետրիկ քարտեզները, աստղային քարտեզները, գրավիտացիոն քարտեզները, մագնիսական քարտեզները կամ եռատարածաձափ թվային երկրային քարտեզները>>

<<Դեֆորմացվող հայելիներ>> (6) (հայտնի են նաև որպես հարմարվողական օպտիկական հայելիներ) - հայելիներ, որոնք ունեն.

ա. Մեկ չընդհատվող օպտիկական արտացոլող մակերես, որը դինամիկ կերպով դեֆորմացվում է առանձին ուժերի կամ ոլորող մոմենտների կիրառման միջոցով՝ հայելու վրա ընկնող օպտիկական ազդանշանի աղավաղումը համակշռելու համար.

բ. Բազմատարր օպտիկական արտացոլիչներ, որոնց դիրքը առանձին ու անկախորեն փոփոխվում է որոշակի ուժերի կամ ոլորող մոմենտների կիրառման միջոցով՝ հայելու վրա ընկնող օպտիկական ազդանշանի աղավաղումը համակշռելու համար:

<<Աղքատացված ուրան>> (0) – ուրան, որի մեջ 235 իզոտոպի պարունակությունն ավելի ցածր է, քան բնական ուրանի մեջ:

<<Մշակում>> (ամբողջ ցանկը) – վերաբերում է աշխատանքի բոլոր փուլերին, մինչև սերիական արտադրությունը. ինչպես օրինակ՝ նախագծումը, նախագծային հետազոտությունները, նախագծային տարբերակների վերլուծությունը, նախագծման հայեցակարգի մշակումը, նախատիպերի (փորձարարական նմուշների) հավաքում և փորձարկում, փորձնական արտադրության սխեմայի ստեղծում և տեխնիկական



փաստաթղթերի մշակում, տեխնիկական փաստաթղթերն արտադրություն փոխանցելու գործընթացը, ենթակառուցվածքային նախագծում, մակետավորումը:

<<Դիֆուզիոն եռակցում>> (1, 2, 9) – առնվազն երկու առանձին մետաղների պինդմարմնային մոլեկուլային միացում մեկ միասնական ամբողջության մեջ, որի ընդհանուր ուժը հավասարագոր է առավել թույլ նյութի կապող ուժին:

<<Թվային համակարգիչ>> (4, 5) – սարքավորում, որը կարող է մեկ կամ մի քանի դիսկրետային փոփոխականների ձևով կատարել բոլոր հետևյալ գործառույթները.

ա. Ընդունել տվյալներ,

բ. Տվյալները կամ հրամանները պահել մշտական կամ փոփոխվող (վերագրանցող) պահպանող սարքերի վրա,

գ. Մշակել տվյալներ ծրագրավորված և փոփոխելի հրահանգների հաջորդականություններով,

դ. Ապահովել տվյալների ելք:

Հ/Ծ. Հրամանների գրանցված հաջորդականությունների փոփոխումը ներառում է մշտական հիշողության սարքի փոխարինումը, բայց ոչ փոպադարձ միացումների կամ քայլաշարերի ֆիզիկական փոփոխությունը:

<<Թվային փոխանցման ընդհանուր արագություն>> (5) նշանակում է բիտերի ընդհանուր քանակը, որն ուղղակիորեն փոխանցվում է ցանկացած տեսակի կրիչով: համապատասխան սարքավորումների միջև՝ թվային փոխանցման համակարգում:

Հ.Ծ. Տես նաև <<թվային փոխանցման ընդհանուր արագություն>>:

<<Անմիջական հիդրավիկ մամլում>> (2) - դեֆորմացիայի պրոցես, որի ընթացքում կիրառվում է նախաշինվածքի հետ անմիջական շփման մեջ գտնվող՝ հեղուկով լցված ճկուն խցիկ:

<<Դրեյֆի արագություն>> (գիրոսկոպի) (7) – նշանակում է գիրո ելքի բաղադրիչը , որը անկախ է մուտքի պտույտից: Այն արտահայտվում է որպես անկյունային արագություն: (IEEE STD 528-2001).

<<Դինամիկ հարմարվողական ուղենշում>> (5) – նշանակում է հաղորդումների երթուղիների ավտոմատ փոփոխություն՝ ցանցի աշխատանքի ընթացիկ պայմանների չափման և վերլուծության հիման վրա:

Հ.Ծ. Այստեղ չեն ընդգրկվում նախորոշված ինֆորմացիայի հիման վրա կատարված հաղորդումների երթուղիների փոփոխության մասին որոշումների դեպքերը:

<<Ազդանշանի դինամիկ վերլուծիչներ>> (6) - <<ազդանշանի վերլուծիչներ>>, որոնք օգտագործում են ազդանշանի թվային ընտրանքը և դրա փոխակերպման մեթոդը՝ տվյալ ազդանշանի ֆուրյեի սպեկտրը ստանալու համար, ներառյալ դրա լայնույթի և ֆազի մասին տեղեկությունները:

Հ.Ծ. Տես նաև <<ազդանշանի վերլուծիչներ>>

<<Արդյունավետ գրամ>> (0, 1) - <<հատուկ ճեղքվող նյութերի>> համար նշանակում է.

ա. Իզոտոպի կշիռը գրամներով՝ Պլուտոնիումի իզոտոպների կամ ուրան –233 իզոտոպների համար

բ. Ուրան-235 իզոտոպներով հարստացված ուրանի համար (1% կամ ավելի)՝ տարրի կշիռը գրամներով, բազմապատկած հարստացման չափի քառակուսիով՝ արտահայտված որպես տասնորդական կոտորակ ըստ կշռի:

գ. Ուրան-235 իզոտոպով հարստացված ուրանի համար (1%-ից պակաս)՝ տարրի կշիռը գրամներով, բազմապատկած 0.0001-ով.

<<Էլեկտրոնային հավաքվածք>> (2, 3, 4, 5) - էլեկտրոնային բաղադրիչների (օրինակ՝ <<սխեմայի էլեմենտների>>, <<դիսկրետային բաղադրիչների>>, ինտեգրալային սխեմաների և այլն) որոշ քանակություն, որոնք միացված են որոշակի գործառույթ (ներ) կատարելու համար և ենթակա են փոխարինման ու քանդման:

Հ.Ծ. 1. <<Սխեմայի տարրը>> էլեկտրոնային սխեմայի առանձին ակտիվ կամ պասիվ մասն է, ինչպես մեկ դիոդը, տրանզիստորը, ռեզիստորը, կոնդենսատորը և այլն:

Հ.Ծ. 2. <<Դիսկրետ բաղադրիչը>> <<սխեմայի տարր>> է՝ արտաքին կապի ելուստներ ունեցող առանձին պատյանով:

<<Ֆազավորված ալեհավաքի վանդակ՝ ճառագայթի էլեկտրոնային տեսաձրումով>> (5, 6) - ալեհավաք, որը ճառագայթը ձևավորում է ֆազային հարաբերակցության ընտրության միջոցով, այսինքն՝ ճառագայթի ուղղությունը կառավարվում է ճառագայթող տարրերի գրգռման կոմպլեքսային գործակիցների ընտրությամբ, և այդ ճառագայթի ուղղությունը կարող է փոխվել ըստ ազիմուտի անկյան և տեղի անկյան, կամ երկուսը միասին՝ ինչպես ընդունման, այնպես էլ փոխանցման ժամանակ էլեկտրական ազդանշանի գործադրման միջոցով:

<<Աշխատանքային օրգաններ>> (2) – բոնիչներ, <<ակտիվ գործիքային հանգույցներ>> և ցանկացած այլ գործիքներ, որոնք ամրացվում են հենավանդակի վրա՝ <<ռոբոտի>> ձեռքի մանիպուլյատորի ծայրին:

Հ.Ծ. <<Ակտիվ գործիքային հանգույցներ>> - սարքեր՝ չափող սովիչների նախաշինվածքին (դետալին) կցելու կամ վերջինիս տեղափոխման կամ մշակման նպատակով էներգիա հաղորդելու համար:

<<Համարժեք խտություն>> (6) – օպտիկական մակերևույթի վրա պրոյեկտված պատկերի մակերեսի միավորին բաժին ընկնող օպտակական միավորների զանգվածը:

<<Փորձագիտական համակարգեր>> (7) – նշանակում է համակարգեր, որոնք արդյունքներն ապահովում են <<ծրագրից>> անկախ պահպանվող տեղեկությունների վերաբերյալ կանոնների կիրառման միջոցով և օժտված են հետևյալ բնութագրերից որևէ մեկով.

ա. Օգտագործողի կողմից մուտքագրված <<էլքային տեքստի>> ավտոմատ ձևափոխում.

բ. Քվազի-բնական լեզվում եղած որոշ կարգի պրոբլեմների հետ կապված գիտելիքների ապահովում, կամ

գ. Դրանց մշակման համար պահանջվող գիտելիքների ձեռք բերում (ազդանշանային ուսուցում).

<<Պայթուցիկ նյութեր>> (1) նշանակում է պինդ, հեղուկ կամ գազային նյութեր կամ նյութերի խառնուրդներ, որոնք զենագլխիկներում, ոչնչացնող և այլ հարմարանքներում որպես առաջնային մասնիկ, միջանկյալ կամ հիմնական դետոնատոր կիրառության մեջ նախատեսված են պայթման համար:

<<ՏԱԴԵԿ>> -<<շարժիչի լիովին ինքնավար էլեկտրոնային-թվային հսկիչ>>:

<<Սխալի հանդուրժում>> (4) համակարգչային համակարգի կարողությունն է՝ իր մեքենայական կամ ծրագրային մասի որևէ սխալից հետո շարունակել աշխատել առանց մարդկային միջամտության, սպասարկման որոշակի մակարդակի վրա, որն ապահովում է գործողության շարունակականությունը, տվյալների ամբողջականությունը և ծառայության վերականգնումը որոշակի ժամանակի ընթացքում:

<<Հյուսվածքային կամ մանրաթելային նյութերը>> (0, 1, 2, 8) ներառում են.

- a. Չընդհատվող <<մոնոմանրաթելերը>>,
- b. Չընդհատվող <<հյուսքաթելերը>> և <<նախաթելերը>>;
- c. <<Ժապավենները>>, հյուսվածքները, պատահական հանգույցներն ու հյուսքերը;
- d. Կտրատված հյուսվածքները, ծտապելային հյուսվածքները և երկշերտ փոխադարձաբար հյուսված հաստ կտորները;
- e. Ցանկացած կոշտ թելերը, մոնոկրիստալային կամ բազմակրիստալային;
- f. արոմատիկ պոլիամիդային նյութերը:

<<Թաղանթային ինտեգրալային սխեմաներ>> (3) - <<սխեմայի տարրերի>> կամ մետաղական միացությունների հավաքակազմ, որը ձևավորվում է մեկուսացնող <<միջադիրի>> մակերեսը հաստ կամ բարակ թաղանթով պատելու միջոցով:

Հ.Ծ. <<Սխեմայի տարրը>> իրենից էլեկտրոնային սխեմայի առանձին ակտիվ կամ պասիվ մաս է, այնպիսին, ինչպիսին է մեկ դիոդր, տրանզիստորը, ռեզիստորը, կոնդենսատորը և այլն:

<<Ֆիքսված>> (5) նշանակում է, որ կողավորման կամ սեղմման ակտիվիթիվը չի կարող փոխել ներսից տրվող պարամետրերը (օրինակ՝ գաղտնագրային պարամետրերը կամ գաղտնաբանալու պարամետրերը) և չի կարող ձևափոխվել օգտագործողի կողմից:

<<Թռիչքի կառավարման համակարգի օպտիկական տվիչների ցանց>> (7) - <<Լազերի>> ճառագայթներ օգտագործող տեղաբաշխված օպտիկական տվիչների ցանց, որն ապահովում է թռիչքի կառավարման տվյալները իրական ժամանակում՝ թռչող ապարատի կողմից մշակելու համար:

<<Թռիչքի հետագծի օպտիմալացում>> (7) - պահանջվող քառաչափ (տարածության և ժամանակի մեջ) հետագծից շեղումները նվազագույնին հասցնելու ընթացակարգ՝ բնութագրերը առավելագույնին հասցնելու կամ առաջադրանքների կատարման արդյունավետությունը բարձրացնելու հիման վրա:

<<Կիզակետային հարթության ցանց>> (6) - գծային կամ երկչափ հարթության /պլանարային/ շերտ կամ պլանարային շերտերի համակցություն, առանձին դետեկտորային տարրերով ընթերցող էլեկտրոնիկա ունեցող կամ չունեցող առանձին տվիչների համադրությամբ, որն աշխատում է կիզակետային հարթության մեջ:

Հ/Ծ. Այս սահմանումը չի ընդգրկում առանձին դետեկտորների կամ ցանկացած երկ-, եռա- կամ քառատարր տվիչների հավաքակազմը, եթե բացակայում են այդ տարրերի մեջ ժամանակավոր հապաղում ներմուծելու կամ ինտեգրման գործողությունները:

<<Դիապագոնի կոտորակային երկարություն>> (3) նշանակում է <<դիապագոնի ակնթարթային երկարությունը>> բաժանած կենտրոնի հաճախականության վրա, տոկոսային արտահայտությամբ:

<<Հաճախականության փոփոխում>> (5) – նշանակում է <<ընդլայնված սպեկտրի>> ձև, որի դեպքում մեկ հաղորդակցման կապուղու փոխանցման հաճախականությունը փոխվում է դիսկրետ քայլերի պատահական կամ կեղծ-պատահական հաջորդականության միջոցով:

<<Հաճախականության փոխարկման ժամանակ>> (3 5) - այն առավելագույն ժամանակը (օրինակ՝ հապաղման), որը պահանջվում է, որպեսզի ելքային ազդանշանը փոխարկվի մի հաճախականությունից մյուսին՝ հետևյալ բնութագրերից որևէ մեկին հասնելու համար.

ա. հաճախականության սահմանային արժեքից 100 Հց սահմաններում.

բ. սահմանային արժեքից 1 դԲ սահմաններում գտնվող մակարդակին:

<<Հաճախականությունների սինթեզատոր>> (3) - ազդանշանի ցանկացած տեսակի գեներատոր կամ հաճախականությունների աղբյուր, որը, անկախ գեներացիայի

օգտագործվող մեթոդից, ապահովում է միաժամանակ կամ փոփոխակի կերպով առաջացող մեկ կամ մի քանի ազդանշանների լրակազմ, որոնք նպատակաուղղված կերպով կորզվում կամ սինքրոնացվում են հաճախականությունների ստանդարտների ավելի փոքր քանակության միջոցով:

<<Շարժիչի լիովին ինքնավար էլեկտրոնային-թվային կարգավորիչ>> ("FADEC") (7, 9) – գազատուրբինային շարժիչների կամ համակցված ցիկլով շարժիչների կառավարման էլեկտրոնային համակարգ՝ փոփոխական պարամետրերի կառավարման համար թվային էՀՄ-ի օգտագործմամբ, որը շարժիչի աշխատանքային պայմանների ընդգրկություն կարգավորում է շարժիչի քարշուժը կամ լիսեռի վրա առաջացած էլքային հզորության մակարդակը՝ վառելիքի ծախսի կարգավորման սկզբից մինչև դրա մատակարարման ավարտը:

<<Հալչող>> (1) նշանակում է ջերմության, ճառագայթման, կատալիզատորների և այլնի ազդեցության տակ խաչաձև միացման կամ պոլիմերացման կամ առանց պիրոլիզի (ածխայնացման) հալչելու ունակություն:

<<Գազային փոշիացում>> (1) բարձր ճնշման գազային շիթում հալված վիճակում գտնվող մետաղական համաձուլվածքի փոշիացման պրոցեսը 500 մկմ (միկրոմետր) կամ ավելի փոքր տրամագծով մասնիկների:

<<Աշխարհագրորեն տեղաբաշխված>> (6) - այն օբյեկտի դիրքը, որը ցանկացած այլ օբյեկտի դիրքից ցանկացած ուղղությամբ հեռացած է ավելի քան 1500 մ: Շարժական տվիչները միշտ համարվում են <<աշխարհագրորեն տեղաբաշխված>>

<<Ուղղորդման համակարգեր>> (7) – համակարգեր, որոնք տրանսպորտային միջոցի դիրքի ու արագության չափման և հաշվարկման գործընթացը (նավիգացիա, օդանավագնացություն) միավորում են հրամանների հաշվարկման և դեպի թռիչքի կառավարման համակարգերն ուղարկման գործընթացի հետ՝ տրանսպորտային միջոցի հետագծի ուղղման նպատակով:

<<Տաք իզոստատիկ ձևափոխում>> (2) – Ձուլվող կաղապարների մամլման պրոցես ավելի քան 375 K ջերմաստիճանի պայմաններում (102°C՝ հերմետիկ ծավալում տարբեր միջավայրերի (գազային, հեղուկ, պինդ մասնիկներ և այլն) միջով)՝ բոլոր ուղղություններով հավասար ուժեր առաջացնելու համար՝ ձուլվող կաղապարների մեջ ներքին խոռոչները նվազեցնելու կամ վերացնելու նպատակով:

<<Հիբրիդային համակարգիչ>> (4) – սարքավորում, որը նախատեսված է բոլոր հետևյալ ֆունկցիաները կատարելու համար.

ա. տվյալների ընդունում.

բ. տվյալների մշակում ինչպես անալոգային, այնպես էլ թվային ներկայացմամբ.

գ. տվյալների արտաբերման ապահովում:

<<Հիբրիդային ինտեգրալային սխեմա>> (3) – ինտեգրալային սխեմաների, <<սխեմայի տարրերով>> կամ <<դիսկրետ բաղադրիչներով>> ինտեգրալային

սխեմայի կամայական համադրություն, որոնք միացված են որոշակի ֆունկցիաների կատարման համար և օժտված են բոլոր հետևյալ բնութագրերով.

ա. Պարունակում են առնվազն մեկ անպատյան սարք.

բ. Բաղադրիչները մեկը մյուսին են միացվում ինտեգրալային սխեմաների արտադրության տիպական մեթոդների օգտագործմամբ.

գ. Հանդիսանում է մեկ միասնական ամբողջություն և փոխարինվում է ամբողջությամբ:

դ. Նորմալ վիճակում տարանջատման ենթակա չէ:

Հ.Օ. 1. <<Սխեմայի տարրը>> էլեկտրոնային սխեմայի առանձին ակտիվ կամ պասիվ մաս է՝ այնպիսին, ինչպիսին են մեկ դիոդը, տրանզիստորը, ռեզիստորը, կոնդենսատորը և այլն:

Հ.Օ. 2. <<Դիսկրետ բաղադրիչը>> <<սխեմայի տարր>> է՝ արտաքին կապի ելուստներ ունեցող առանձին պատյանով:

<<Պատկերի որակի բարելավում>> (4) – նշանակում է ինֆորմացիա կրող պատկերների մշակումը այնպիսի ալգորիթմների միջոցով, ինչպիսիք են օրինակ՝ սեղմումը ժամանակի մեջ, ֆիլտրումը, պարամետրերի գնահատումը, ընտրանքը հարաբերակցումը, կրճատումը կամ փոխակերպումը ներկայացման մի ոլորտից մյուսին (օրինակ՝ Ֆուրիեյի կամ Վոլշի արագ փոխակերպումը): Այդպիսի մշակումը չի ընդգրկում այն ալգորիթմները, որոնք օգտագործում են միայն գծային փոխակերպում կամ առանձին պատկերի պտտում, ինչպիսիք են, օրինակ՝ տեղաշարժը, հատկանիշների կլանումը, գրանցումը կամ սխալ գունաներկումը:

<<Իմունոտոքսիններ>> (1) – միաբջջե մոնոկլոնալ հակամարմինների և <<տոքսինների>> կամ <<ենթատոքսինների>> զուգակցիչ, որն ընտրովի ներգործում է հիվանդ բջջիների վրա:

<<Հանրային օգտագործման համար մատչելի>> (GTN NTN GSN), այստեղ նշանակում է <<տեխնոլոգիա>> կամ <<համակարգչային ապահովում>>, որը հետագա տարածման միջոցով տրամադրվել է անսահմանափակ հանրային օգտագործման համար (հեղինակային իրավունքների սահմանափակումները չեն հանում <<տեխնոլոգիան>> կամ <<համակարգչային ապահովումը>> <<հանրային օգտագործման համար մատչելիությունից>>):

<<Ինֆորմացիայի պաշտպանություն>> (4, 5) - բոլոր միջոցները և գործողությունները, որոնք ապահովում են ինֆորմացիայի կամ կապի մատչելիությունը, գաղտնիությունը կամ ամբողջականությունը, բացի անսարքությունից նախապաշտպանող միջոցներից և գործառույթներից: Ինֆորմացիայի պաշտպանությունը ներառում է <<գաղտնագրությունը>>, <<գաղտնավերլուծությունը>>, պաշտպանությունը սեփական ճառագայթումից և համակարգչի պաշտպանությունը:

Հ.Ծ. <<Գաղտնավերլուծությունը>> գաղտնագրային համակարգի կամ դրա ելքային ու մուտքային ազդանշանների վերլուծությունն է՝ գաղտնի պարամետրերի կամ զգայուն տեղեկությունների, ներառյալ՝ բաց տեքստի վերծանման նպատակով:

<<Հաճախականությունների ակնթարթային տիրույթ>> (3, 5, 7) – տիրույթ, որում ելքային ազդանշանի ուժգնության մակարդակը մնում է հաստատուն 3 դեցիբելի սահմաններում՝ առանց հիմնական աշխատանքային պարամետրերի ճշգրտման:

<<Գործիքային հեռավություն>> (6) - ռադարի ազդեցության միանշանակ որոշվող հեռավությունը:

<<Մեկուսացում>> (9) - կիրառվում է հրթիռի շարժիչի բաղադրամասերի (իրանները, ծայրափողակները, մուտքային անցքերը, իրանների կափարիչները) նկատմամբ և ընդգրկում է ջերմամշակված կամ կիսաջերմամշակված կաուչուկային թերթանյութ: Այն կարող ընդգրկել նաև ամորտիզացիոն միջադիրները կամ հետզցովի փեղկերը:

<<Փոխկապակցված ռադարային տվիչներ>> (6) նշանակում է փոխկապակցված երկու կամ ավելի ռադարային տվիչներ, երբ դրանք իրական ժամանակում փոխադարձաբար տվյալներ են փոխանակում:

<<Ներքին երեսապատումը>> (9) հարմարեցված է կարծր հրթիռային վառելանյութի և այն կրող բակի պատերի կամ դրա մեկուսիչ շերտի միջև: Սովորաբար հեղուկ պոլիմերային հիմքով հրադիմացկուն կամ մեկուսիչ նյութերի շերտ է, օրինակ ածխածնով հագեցած հիդրոքսիլային մշակումով պոլիբուտադիեն (HTPB) կամ այլ պոլիմեր՝ ավելացված կարծրացնող ազենտներով՝ փչված կամ քսված բակի ներքին մակերեսի վրա:

<<Ներքին մագնիսական գրադիոմետրը>> (6) եզակի մագնիսական դաշտ ճանաչող մարտկոց է, հարակից էլեկտրոնիկայով, որի գործողության արդյունքը մագնիսական դաշտի շեղումի չափումն է:

Հ.Ծ. *Տես նաև <<մագնիսական գրադիոմետր>>*

<<Մեկուսացված կենդանի կուլտուրաներ>> (1) – ներառում է ոչ ակտիվ վիճակում գտնվող, ինչպես նաև չոր պատրաստուքների տեսքով հանդես եկող կենդանի կուլտուրաները:

<<Իզոստատիկ մամլիչներ>> (2) – սարքավորում, որն ունակ է մամլել հերմետիկ ծավալում տարբեր միջավայրերի (գազային, հեղուկ, պինդ մասնիկների և այլն)՝ այդ հերմետիկ ծավալի ներսում նախաշինվածքի կամ նյութի վրա բոլոր ուղղություններով հավասարաչափ ճնշում առաջացնելու համար:

<<Լազեր>> (0, 2, 3, 5, 6, 7, 8, 9) - բաղադրատարրերի ամբողջություն, որը ստեղծում է ինչպես տարածության, այնպես էլ ժամանակի մեջ կոհերենտ լուսային ճառագայթում, որը ուժեղացվում է ճառագայթման խթանված էմիսիայի միջոցով:

Հ.Ծ. Տես նաև <<Քիմիական լազեր>>, <<Բարոդակության մոդուլյացիա ունեցող լազեր>>, <<Գերբարձր հզորության լազեր>>, <<Վերատուղողողելի լազեր>>:

<<Լազերի տևողություն>> (6) նշանակում է այն ժամանակը, որի ընթացքում <<լազերը>> ճառագայթ է արձակում, որը <<պուլսային լազերի>> համար համապատասխանում է այն ժամանակին, որի ընթացքում մեկ զարկ կամ հաջորդական զարկերի շարք է ճառագայթվում:

<<Օդից թեթև փոխադրամիջոցներ>> (9) նշանակում է օդապարիկներ և օդանավեր, որոնք գործում են տաք օդի կամ այլ օդից թեթև գազերի շնորհիվ, ինչպես օրինակ հելիումի կամ ջրածնի:

<<Գծայնություն>> (2) (սովորաբար չափվում է ոչ գծային պարամետրերի միջոցով) - իրական բնութագրի (սանդղակի վերին և ստորին ցուցմունքների միջինը) առավելագույն (դրական կամ բացասական) շեղումը ուղիղ գծից, որն ունի այնպիսի տեղակայություն, որպեսզի հավասարեցնի և նվազագույնի հասցնի առավելագույն շեղումները:

<<Լոկալ ցանց>> (4 5) – տվյալների փոխանցման համակարգ, որն օժտված է բոլոր հետևյալ բնութագրերով.

ա. Թույլ է տալիս, որ կամայական թվով անկախ <<տեղեկատվական սարքերը>> անմիջականորեն կապվեն մեկը մյուսի հետ, և

բ. Սահմանափակված է միջին չափերի աշխարհագրական գոտիով (օրինակ՝ ծառայողական շենքի, գործարանի, մի խումբ մասնաշենքերի կամ պահեստային շինությունների սահմաններով):

Հ.Ծ. <<Տեղակատվական սարք>> նշանակում է թվային տվյալների հաջորդականությունների փոխանցման կամ ընդունման ունակությամբ օժտված սարքավորում:

<<Մագնիսական գրադիենտաչափեր>> (6) – սարքեր, որոնք նախատեսված են տվյալ սարքի նկատմամբ արտաքին աղբյուրների մագնիսական դաշտերի տարածական փոփոխությունների չափման համար: Դրանք կազմված են բազմաթիվ <<մագնիսաչափերից>> և համապատասխան էլեկտրոնային բլոկից, որի էլքի մոտ չափվում է մագնիսական դաշտի գրադիենտը:

Հ.Ծ. Տես նաև <<ներքին մագնիսական գրադիենտաչափեր>>:

<<Մագնիսաչափեր>> (6) - սարքեր, որոնք նախատեսված են տվյալ սարքի արտաքին աղբյուրների մագնիսական դաշտերը չափելու համար: Դրանք կազմված են մագնիսական դաշտի առանձին չափողական տարրից և դրա հետ կապված էլեկտրոնային բլոկից, որի էլքի մոտ չափվում է մագնիսական դաշտը:

<<Օպերատիվ հիշողություն>> (4) – տվյալների կամ հրամանների պահպանման հիմնական տեղը կենտրոնական պրոցեսորի կողմից դրանցից արագ օգտվելու



հնարավորությունն ապահովելու նպատակով: Բաղկացած է <<թվային համակարգչի>> ներքին հիշողությունից և դրա ստորակարգային ընդլայնման ցանկացած միջոցներից, ինչպիսիք են քեշ-հիշողությունը կամ զուգահեռ մուտքի ընդլայնված հիշողությունը:

<<UF<sub>6</sub>-ի նկատմամբ կոռոզիակայուն նյութեր>> (0) - կարող են լինել՝ պղինձը, չժանգոտվող պողպատը, ալյումինը, ալյումինի օքսիդը, ալյումինային համաձուլվածքները, նիկելի կամ նիկելի 60% կամ ավելի պարունակություն ունեցող (ըստ քաշի) համաձուլվածքը և UF<sub>6</sub>-ի նկատմամբ կայուն ֆտորացված ածխաջրածնային պոլիմերները, որոնք համապատասխանում են բաժանման պրոցեսի տեսակին:

<<Մատրից>> (1, 2, 8, 9) - մասնիկներով, թելանման բյուրեղներով կամ մանրաթելերով լցված ամուր, հոծ նյութ:

<<Չափման սխալանք>> (2) - բնորոշ պարամետր, որը որոշում է, թե չափված նշանակությունից ինչպիսի ընդգրկույթում է գտնվում փաստացի նշանակությունը, որը չափվում է 9-5% հավանականությամբ: Այդ մեծությունը ընդգրկում է չհամակշռված կանոնավոր շեղումները, չհամակշռված խաղացքը և պատահական շեղումները (տ՝ են ISO 10360-2 կամ VDI/VDE 2617):

<<Մեխանիկական լեզիրում>> (1) – լեզիրումի պրոցես, որը ծագում է փոշիների և լիգատորի մամլման, տրոհման և մեխանիկական ներգործությամբ նոր միացության առաջացման միջոցով: Համապատասխան փոշիների ավելացման միջոցով համաձուլվածքին կարող են ավելացվել ոչ մետաղական մասնիկներ:

<<Հալույթի կլանում>> (1) – համաձուլվածքի՝ ժապավենի կամ թելերի տեսք ունեցող արտադրանքի կլանում և <<արագ պնդացման>> պրոցեսը՝ պտտվող սառեցվող սկավառակի կարճ սեգմենտը հալված մետաղական համաձուլվածքով լցված գուռի մեջ մտցնելու միջոցով:

Հ.Օ. <<Արագ պնդացում>> - հալված նյութի արագ պնդացումը՝ 1,000 Կ/վրկ գերազանցող սառեցման արագությունների պայմաններում:

<<Հալույթի սպինինգ>> (1) - սառեցվող սկավառակի վրա թափվող հալված մետաղի հոսքի <<արագ պնդացման>> պրոցես, որի արդյունքում ստացվում է մետաղալարի, ժապավենի, թեփուկաձև կամ փաթիլաձև մասնիկների տեսք ունեցող արտադրանք (Կատեգորիա 1):

Հ.Օ. <<Արագ պնդացում>> - պրոցես, որի ժամանակ տեղի է ունենում նյութի հալույթի պնդացում՝ 1000 Կ/վրկ գերազանցող սառեցման արագությունների պայմաններում:

<<Միկրոպրոցեսորի միկրոսխեմա>> (3) – թվաբանական-տրամաբանական սարք (ԹՏՍ) պարունակող <<միասնական ինտեգրալային սխեմա>> կամ <<բազմաբյուրեղային ինտեգրալային սխեմա>>, որն ընդունակ է արտաքին հիշողության մեջ կատարել ընդհանուր նշանակության հրամանների հաջորդականությունները:

4.Ծ. 1. <<Միկրոպրոցեսորի միկրոսխեմաները>> սովորաբար չեն պարունակում օգտագործողի համար մատչելի օպերատիվ հիշողություն, չնայած տրամաբանական գործառնությունների կատարման ժամանակ կարող է օգտագործվել միկրոսխեմայի հիշողությունը:

4.Ծ. 2. Այս սահմանումն ընդգրկում է ինտեգրալային միկրոսխեմաների այն համակարգերը, որոնք նախատեսված են միկրոպրոցեսորի միկրոսխեմաների գործողության համար:

<<Միկրոհամակարգչի միկրոսխեմա>> (3) – թվաբանական-տրամաբանական սարք (ԹՏՍ) պարունակող <<միասնական ինտեգրալային սխեմա>> կամ <<բազմաբյուրեղային ինտեգրալային սխեմա>>, որն ընդունակ է կատարել ներքին հիշող սարքի ընդհանուր նշանակության հրամանները, որոնք կիրառելի են ներքին հիշողության մեջ պարունակվող տվյալների նկատմամբ:

4.Ծ. 3. Ներքին հիշողությունը կարող է ընդլայնվել արտաքին հիշողության հաշվին:

<<Միկրոօրգանիզմներ>> (1, 2) – մանրէներ, վիրուսներ, միկոպլազմաներ, ռիկեցիաներ, իլամիդներ կամ սունկեր, որոնք ունեն բնական ծագում կամ փոփոխվել են <<մեկուսացված կուլտուրաների>> ձևերի կամ հանդիսանում են որպես նյութ, ներառյալ սնուցող միջավայրը, որը կանխամտածված կերպով վարակվել կամ աղտոտվել է նշված կուլտուրաներով:

<<Հրթիռներ>> (1, 3, 5, 6, 7, 9) - բարդ հրթիռային համակարգեր կամ անօդաչու տիեզերական ապարատներ, որոնք ընդունակ են առնվազն 500 կգ կշիռ ունեցող բեռը հասցնելու անվազն 300 կմ տարածության վրա:

<<Միաթելք>> (1) կամ մանրաթելի նվազագույն բաղադրիչը հանդիսացող թելիկ, որի տրամագիծը սովորաբար կազմում է մի քանի միկրոմետր:

<<Մոնոլիտ ինտեգրալային սխեմա>> (3) - պասիվ կամ ակտիվ <<սխեմայի տարրերի>> համադրություն, որը՝

ա. Ստեղծված է դիֆուզիոն պրոցեսների միջոցով, կիսահաղորդիչ նյութի առանձին կտորի, այսպես կոչված՝ միկրոբյուրեղի ներսում կամ մակերեսի վրա

իմպլանտացիայի կամ նստեցման պրոցեսների միջոցով.

բ. Կարող է համարվել անխախտորեն միացված, և

գ. Կարող է կատարել սխեմայի գործառնություններ:

4.Ծ. 4. <<Սխեմայի տարրը>> էլեկտրոնային սխեմայի առանձին ակտիվ կամ պասիվ մաս է, այնպիսին, ինչպիսին է մեկ դիոդը, տրանզիստորը, ռեզիստորը, կոնդենսատորը և այլն:

<<Պատկերների միասպեկտր տվիչներ>> (6) – տվիչներ, որոնք ընդունակ են պատկերի մասին ինֆորմացիա ստանալ մեկ դիսկրետ սպեկտրային ընդգրկությից:

<<Բազմաչիպային ինտեգրալային սխեմա>> (3) – ընդհանուր <<տակդիրի>> վրա գտնվող մեկ կամ ավելի <<մոնոլիտիկ ինտեգրալային սխեմաներ>>:

<<Պատկերների բազմասպեկտր տվիչներ>> (6) – տվիչներ, որոնք ընդունակ են իրականացնել տեսատվյալների միաժամանակյա կամ հաջորդական հավաքագրում երկու կամ ավելի դիսկրետ սպեկտրային ընդգրկություններից: Ավելի քան քսան դիսկրետ սպեկտրային ընդգրկություններ ունեցող տվիչները հայտնի են որպես պատկերների հիպերսպեկտրային տվիչներ:

<<Բնական ուրան>> (0) - բնական պայմաններում հանդիպող ուրանի իզոտոպեր պարունակող խառնուրդ:

<<Ցանցի մուտքի հսկիչ>> (4) - բաշխված կոմուտացիոն ցանցի ֆիզիկական ինտերֆեյս: Այն օգտագործում է ընդհանուր միջավայր, որը գործում է <<թվային փոխանցման միատեսակ արագություններով՝ կատարելով փոխանցումների կարգավորում (օրինակ՝ կրողի հսկողությունը կամ հայտնաբերումը): Անկախ ցանկացած այլ հաղորդումներից, այն ընտրում է իրեն հասցեագրված տվյալների փաթեթը կամ տվյալների խումբը (օրինակ՝ IEE 802): Այն համակարգ մուտք գործելն ապահովող բլոկ է, որը կարող է ներկառուցվել համակարգչում կամ հեռահաղորդակցության սարքավորման մեջ:

<<Նեյրոնային համակարգիչ>> (4) – հաշվողական սարք, որը նախագծված կամ ձևավորված է նեյրոնների կամ նեյրոնների ամբողջության վարքը նմանակելու համար, օրինակ՝ հաշվողական սարք, որը բնութագրվում է ապարատի ընդունակությամբ՝ նախորդ տեղեկության հիման վրա մոդուլացնելու բազմաթիվ հաշվողական բաղադրիչների կշիռը և փոխադարձ կապերի քանակը:

<<Միջուկային ռեակտոր>> (0) ամբողջական ռեակտոր, որը կարող է աշխատել այնպես, որ պահպանվի ինքնավերաարտադրվող տրոհման շղթայական ռեակցիան: <<Միջուկային ռեակտոր՝ը ներառում է իր ներսում գտնվող կամ ռեակտորի իրանին միացած բոլոր առարկաները, ակտիվ գոտում էներգիայի մակարդակը կառավարող սարքավորումը, և բաղադրամասերը, որոնք սովորաբար գտնվում են անմիջական շփման մեջ կամ կառավարում են ռեակտորի ակտիվ գոտու առաջին կոնտուրի ջերմափոխանակությունը:

<<Թվային ծրագրային կառավարում>> (2) – թվային տվյալներ օգտագործող սարքի կողմից իրականացվող գործընթացի ավտոմատ կառավարում, որոնք սովորաբար մուտքագրվում են գործընթացի իրականացման հետ մեկտեղ (աղբյուրը՝ 150 2382):

<<Օբյեկտային կող>> (9) – իրականացման ենթակա՝ մեկ կամ ավելի պրոցեսների համապատասխան ներկայացման ձև (<<ծրագրի տեքստը>> կամ ծրագրի լեզուն), որը փոխակերպված է ծրագրավորող համակարգի կողմից:

<<Օպտիկական ուժեղացում>> (5) (օպտիկական կապի մեջ) - առանձին օպտիկական աղբյուրով միացած օպտիկական ազդանշանների ուժեղացման մեթոդ՝

առանց փոխակերպելու էլեկտրական ազդանշանների՝ օգտագործելով կիսահաղորդչային օպտիկական ուժեղացուցիչներ, մանրաթելային-օպտիկական լյումինեսցենտային ուժեղացուցիչներ:

<<Օպտիկական համակարգիչ>> (4) - սարքավորում, որը նախագծված կամ ձևավորված է տվյալների ներկայացման նպատակով լույսի օգտագործման համար, հաշվողական տրամաբանության տարրեր, որոնք հիմնված են անմիջականորեն կապված օպտիկական սարքերով:

<<Օպտիկական ինտեգրալային սխեմա>> (3) - միասնական ինտեգրալային սխեմա կամ հիբրիդային ինտեգրալային սխեմա, որը պարունակում է մեկ կամ ավելի մասեր՝ նախատեսված որպես ֆոտոընդունիչ կամ ֆոտոկատոդ՝ օպտիկական և էլեկտրա օպտիկական գործառույթներ կատարելու համար:

<<Օպտիկական կոմուտացում>> (5) - օպտիկական ձև ունեցող ազդանշանների ուղենշում կամ կոմուտացում՝ առանց փոխակերպելու էլեկտրական ազդանշանների:

<<Հոսանքի գումարային խտություն>> (3) - փաթույթների ընդհանուր քանակը սուլենոիդում (այսինքն՝ փաթույթների թվի գումարը բազմապատկած յուրաքանչյուր փաթույթի առավելագույն հոսանքով)՝ բաժանած սուլենոիդի լայնական հատույթի ընդհանուր մակերեսի վրա (ներառյալ գերհաղորդական փաթույթները, մետաղական մատրիցը, որում ընդգրկված են գերհաղորդական փաթույթները, թաղանթանյութը, սառեցման փողը և այլն):

<<Մասնակից պետություն>> (7, 9) – Վասսենարյան համաձայնության մասնակից հանդիսացող պետություն: (Տես՝ [www.wassenaar.org](http://www.wassenaar.org))

<<Պիկային հզորություն>> (6) նշանակում է հզորության այն բարձրագույն մակարդակը, որը ստացվում է <<լազերի գործողության տևողության>> ընթացքում:

<<Անձնական ցանց>> (5) նշանակում է տվյալների հաղորդման համակարգ, որը բնութագրվում է հետևյալ բոլոր հատկանիշներով.

ա. Թույլ է տալիս ինքնուրույնաբար կամ փոխկապակցված գործող կամայական թվով <<տեղեկատվական սարքերի>>-ին ուղղակիորեն հաղորդակցվել միմյանց հետ, և

բ. Սահմանափակվում է առանձին անհատի կամ սարքի կառավարման համակարգի (օր.՝ առանձին սենյակի, գրասենյակի կամ ավտոմեքենայի) անմիջական հարևանությամբ գտնվող սարքերի միջև տեղի ունեցող հաղորդակցությամբ:

### **Տեխնիկական ծանոթագրություն.**

**<<Տեղեկատվական սարքեր>> նշանակում է թվային հաջորդական տեղեկատվություն հաղորդող կամ ստացող սարքավորում:**

<<Անձնական սմարթ-քարտ>> (5) - անձնական սմարթ-քարտ կամ էլեկտրոնային եղանակով ընթերցելի անձնական փաստաթուղթ (օր.՝ էլ-անձնագիր), որը պարունակում է, յուրահատուկ կիրառման համար արտադրողի կողմից ծրագրավորված ներկառուցված միկրոսխեմա, որը չի կարող վերածրագրավորվել սպառողի կողմից:

<<Հզորության կառավարում>> (7) - բարձրաչափի կողմից փոխանցվող ազդանշանի հզորության չափումը այնպես, որ <<թռչող ապարատի>> բարձրության ազդանշանի հզորությունը միշտ պահպանվի որոշակի բարձրության համար պահանջվող նվազագույն մակարդակի վրա:

<<Ճնշման տվիչ>> (2) - ճնշման չափումները էլեկտրական ազդանշանի փոխակերպելու համար նախատեսված սարք:

<<Նախապես անջատված>> (0, 1) - նշանակում է ցանկացած պրոցեսի կիրառում՝ հսկվող իզոտոպի խտությունը մեծացնելու համար:

<<Թռիչքի ուղղակի կառավարում>> (7) - թռչող ապարատի կայունացում կամ ուժի աղբյուրների (իմպուլսի) մանևրում՝ հարթությունների աերոդինամիկ կառավարման կամ քարշուժի վեկտորի փոփոխման միջոցով:

<<Հիմնական տարր>> (4) - տարրը համարվում է հիմնական միայն այն դեպքում, երբ այն փոխարինելու արժեքը կազմում է այն համակարգի ընդհանուր գնի 35%-ը, որին վերաբերում է տվյալ տարրը: Տարրի գինը համարվում է այն գինը, որը դրա դիմաց վճարվում է համակարգը արտադրողի կամ արտադրանքը հավաքողի կողմից: Ընդհանուր գինը արտադրության կամ առաքումների կոմպեկտավորման վայրում գործող միջազգային գինն է:

<<Արտադրություն>> (ընդհանուր տեխնոլոգիական ծանոթագրություն, բոլորը) - ներառում է արտադրության բոլոր փուլերը՝ ինչպես օրինակ շինարարությունը, արտադրական ճաարտարագիտությունը, նախագծումը, արտադրությունը պատրաստումը, հավաքումը (տեղադրումը), ստուգումը, փորձարկումը, որակի երաշխավորումը:

<<Արտադրական սարքավորում>> (1, 7, 9) - գործիքային միջոցների, նմուշների, սեղմիչ հարմարանքների, կալակների, լիսեռիկների, արտապարուրակիչների, ամրանների, կարգավորման մեխանիզմների, փորձարկման սարքավորումների, այլ սարքավորման և դրա բաղադրիչների հավաքակազմ, որոնք հատուկ մշակված են կամ ձևափոխված են այնպես, որպեսզի <<մշակման>> ենթարկվեն <<արտադրության>> մեկ կամ մի քանի փուլերում:

<<Արտադրական միջոցներ>> (7 9) - նշանակում է սարքավորում և դրա համար հատուկ մշակված ծրագրային ապահովում, ուստի սարքավորում, որը

ներկառուցված է <<մշակման>> տեղակայանքներում կամ <<արտադրության>> մեկ կամ մի քանի փուլերում:

<<Ծրագիր>> (2, 6) – նշանակում է հրամանների հաջորդականություն՝ որևէ գործընթաց իրականացնելու համար կամ որը կարելի է փոխակերպել համակարգչի կողմից կատարելի ձևի:

<<Իմպուլսի սեղմում>> (6) – նշանակում է երկար տևողությամբ ռադարային ազդանշանի իմպուլսի գաղտնագրում և փոխակերպում ավելի կարճ տևողության՝ պահպանելով իմպուլսի բարձր էներգետիկ առավելությունները:

<<Իմպուլսի տևողություն>> (6) – <<Լազերի>> իմպուլսի ճառագայթման տևողություն, որը չափված է իմպուլսի ամբողջական տևողության կեսի (FWHI) մակարդակով:

<<Պուլսային լազեր>> (6) նշանակում է <<լազեր>> <<պուլսային տևողությամբ>>, որը հավասար է կամ պակաս է 0.25 վայրկյանից:

<<Քվանտային ծածկագրումը>> (5) նշանակում է տեխնիկաների մի ընտանիք <<ծածկագրման>> ընդհանուր բանալու համար, որը ստացվում է որևէ ֆիզիկական համակարգի քվանտային մեխանիկական հատկությունների չափման միջոցով (ներառյալ այն ֆիզիկական հատկությունները, որոնք բացառապես կառավարվում են քվանտային օպտիկայի, քվանտային դաշտային տեսության կամ քվանտային էլեկտրադինամիկայի միջոցով):

<<Q-միացումով լազեր>> (6) նշանակում է <<լազեր>>, որում էներգիան կուտակված է բնակեցման ինվերսիայի կամ օպտիկական ռեզոնատորի մեջ և համապատասխանաբար արտանետվում է ճառագայթային զարկով:

<<Ռադարի հաճախականության ուժգնություն>> (6) նշանակում է ցանկացած տեխնիկա, որը կեղծ պատահական հերթականությամբ փոխում է պուլսային ռադարի փոխանցիչի կրող հաճախականությունը կամ զարկերի շարքերի միջև տրոհությունը՝ այն չափով, որը հավասար է կամ ավելի մեծ է քան պուլսային դիապագոնի երկարությունը:

<<Ռադարի տարածման սպեկտր>> (6) նշանակում է ցանկացած մոդուլացիոն տեխնիկա, այն էներգիան տարածելու համար, որը ծագել է հարաբերականորեն նեղ դիապագոն ունեցող հաճախականություն ունեցող մի ազդանշանից՝ մեկ ավելի լայն դիապագոն ունեցող հաճախականության՝ օգտագործելով պատահական կամ կեղծ-պատահական կողավորումը:

<<Ժամանակի իրական մասշտաբում Հաճախականությունների տիրույթ>> (3) <<ազդանշանի դինամիկ վերլուծիչները>> ազդանշանի հաճախականությունների առավել լայն ընդգրկույթն է, որը վերլուծիչը կարող է արձակել անդրադարձվող կամ հիշող սարքի վրա՝ առանց խախտելու մուտքային ինֆորմացիայի վերլուծության

անընդհատությունը: Բազմակապուղի վերլուծիչների համար, <<Ժամանակի իրական մասշտաբում հաճախականությունների տիրույթի>> գնահատման ժամանակ պետք է օգտագործվի կապուղու այն փոխդասավորությունում, որն ունի տվյալ պարամետրի ամենամեծ արժեքը:

<<Մշակում ժամանակի իրական մասշտաբում>> (6, 7) - տվյալների մշակում համակարգչային համակարգով, որը համակարգի արձագանքի երաշխավորված ժամանակի ընթացքում ապահովում է սպասարկման անհրաժեշտ մակարդակը՝ որպես առկա ռեսուրսների գործառույթ, անկախ ծանրաբեռնվածության աստիճանից՝ արտաքին իրադարձության ազդեցությամբ համակարգի խթանման պայմաններում:

<<Կրկնելիություն>> (7) նշանակում է միևնույն փոփոխականի կրկնվող չափումների միջև համաձայնության մոտիկությունը, երբ պայմանների փոփոխություն կամ չգործելու հատվածներ են պատահում չափումների միջև (Հղում՝ IEEE STD 528-2001 (մեկ սիգմա ստանդարտ շեղում)):

<<Պահանջվող>> (ընդհանուր տեխնոլոգիական ծանոթագրություն 1-9) – վերաբերում է է <<տեխնոլոգիայի>> միայն այն մասին, որը թույլ է տալիս հասնել բնութագրերի կամ գործառույթների հսկվող մակարդակներին, բնութագրերին կամ ֆունկցիաներին: Նման <<պահանջվող>> <<տեխնոլոգիան>> կարող է օգտագործվել տարբեր ապրանքների մեջ:

<<Ռեգլյուցիա/Թողատվություն>> (2) – չափող սարքի ցուցմունքների ամենափոքր աճը. թվային սարքերում՝ փոքրագույն նշանակալի բիտը (աղբյուրը՝ ANSI B-89.1.12):

<<Խոռվությունների զսպման ռեակտիվ>> (1) նշանակում է նյութեր, որոնք խոռվությունների զսպման նպատակներով կիրառման ակնկալվող պայմաններում մարդու վրա արագորեն ունենում են ֆիզիկական գրգռվածության կամ թուլության ազդեցություն, որը կարճ ժամանակում վերանում է:

### ***Տեխնիկական ծանոթագրություն.***

#### ***Արցունքաբեր գազերը պատկանում են <<Խոռվությունների զսպման ռեակտիվների>> ենթախմբին:***

<<Ռոբոտ>> (2, 8) – մանիպուլյատոր, որը կարող է գործողություններ կատարել անընդհատ կերպով կամ երկու որոշակի կետերի միջև, ունենալ չափող տվիչներ և օժտված լինել բոլոր հետևյալ բնութագրերով.

ա. Բազմաֆունկցիոնալություն.

բ. Նյութը, մասերը, գործիքները կամ հատուկ սարքերը որոշակի դիրքում տեղակայելու կամ վերալարելի շարժումների միջոցով դրանք եռաչափ տարածության մեջ կողմնորոշելու ունակություն.

գ. Կարող է կառավարել փակ կամ բաց հաղորդաշղթայով երեք կամ ավելի օժանդակ շարժաբեռներ, այդ թվում՝ քայլային շարժիչներ, և

դ. Ունի <<օգտագործողի համար մատչելի ծրագրավորման հնարավորություն՝ մտապահելու կամ համակարգչի օգտագործման հաշվին ուսուցման մեթոդ կիրառելու միջոցով, որի դեպքում համակարգիչը կարող է հանդես գալ որպես ծրագրավորվող տրամաբանական կարգավորիչ, այսինքն՝ գործել առանց մեխանիկական միջամտության:

4.Օ Վերը նկարագրված սահմանումը չի կիրառվում հետևյալ սարքերի նկատմամբ.

1. Միայն ձեռքով կամ հեռակարգավորման օպերատորի կողմից կառավարվող մանիպուլյատորներ.

2. Գործողությունների անփոփոխ հաջորդականություն ունեցող մանպուլյատորներ, որոնց շարքին են դասվում ավտոմատացված շարժվող սարքերը, որոնք գործում են շարժումների՝ մեխանիկորեն ֆիքսվող ծրագրավորելի տեսակներին համապատասխան: Ծրագիրը մեխանիկորեն սահմանափակված է սևեռակներով, ինչպիսիք են բույթերը կամ բռունցքները: Շարժումների հաջորդականությունը և հետագծերի կամ անկյունների ընտրությունը չեն կարող փոփոխվել կամ փոխարինվել մեխանիկական, էլեկտրոնային կամ էլեկտրական միջոցներով:

3. Գործողությունների փոփոխական հաջորդականություն ունեցող՝ մեխանիկորեն կառավարելի մանիպուլյատորներ, որոնց շարքին են դասվում ավտոմատացված շարժվող սարքերը, որոնք գործում են շարժումների՝ մեխանիկորեն ֆիքսվող ծրագրավորելի տեսակներին համապատասխան: Ծրագիրը մեխանիկորեն սահմանափակված է ֆիքսված, բայց վերասարքավորելի հարմարանքներով, ինչպիսիք են բույթերը կամ բռունցքները: Շարժումների հաջորդականությունը և հետագծերի կամ անկյունների ընտրությունը հանդիսանում է փոփոխական՝ ծրագրի սահմանված կառուցվածքի շրջանակներում: Ծրագրի կառուցվածքի փոփոխումը կամ ձևափոխումը (օրինակ՝ բույթերի փոփոխությունը կամ բռունցքների փոխարինումը)՝ մեկ կամ մի քանի կոորդինատներով կատարվող շարժման նկատմամբ, իրականացվում է միայն մեխանիկական գործողությունների միջոցով.

4. Գործողությունների փոփոխական հաջորդականություն ունեցող՝ ոչ օժանդակ կառավարելի մանիպուլյատորներ, որոնք դասվում են ավտոմատացված շարժվող սարքերի շարքին, որոնք գործում են շարժումների՝ մեխանիկորեն ֆիքսվող ծրագրավորելի տեսակներին համապատասխան: Ծրագիրը ենթակա է փոփոխության, սակայն գործողությունների հաջորդականությունը փոխվում է միայն մեխանիկորեն ֆիքսված էլեկտրական սարքերից կամ վերասարքավորելի սևեռակներից դուրս եկող երկուական ազդանշանի օգնությամբ:

5. Ծակոտաքարտերի ընդունիչ ունեցող վերհան սարքերը, որոնք դասվում են դեկարտյան կոորդինատներում գործող մանիպուլյատորների շարքին, որոնք պատրաստված են որպես նյութերի պահպանման բունկերների անբաժանելի մասեր և նախատեսված են այդ բունկերների պարունակությունը մատչելի դարձնելու համար՝ դրանց բեռնման կամ բեռնաթափման նպատակով:

<<Կենտրոնախույս ուժերով փոշիացում>> (1) – հալված մետաղի հոսքի կամ գուռում գտնվող հալված մետաղի փոշիացումը 500 մկմ կամ ավելի փոքր տրամագծով մասնիկների՝ կենտրոնախույս ուժերի գործադրման միջոցով:



<<Հաստաթել>> (1) մոտավորապես զուգահեռ դիրքերում գտնվող <<միաթելքերի>> (սովորաբար 12-120) խուրձ:

**Հ.Ծ. <<Փունջր>> միաթելքերի փունջ է (սովորաբար 200 –ից ավելի, դասավորված միմյանց մոտավորապես զուգահեռ դիրքով:**

<<Գործողության փուլ>> (2) (ժամանակից դուրս գործողության) նշանակում է ռադիալ փոխարինում հիմնական սոնու մեկ պտույտով՝ չափված մի հարթության վրա, որը ուղղահայաց է սոնու առանցքին այն կետում, որը գտնվում է արտաքին կամ ներքին պտտվող մակերևույթների վրա (Հղում ISO 230/1 1986, պարբերություն 5.61):

<<Մասշտաբային գործակից>> (7) (գիրո կամ աքսելերոմետր) - ելքային ազդանշանի և չափվող մուտքային ազդանշանի փոփոխությունների հարաբերակցությունը: Մասշտաբային գործակիցը սովորաբար գնահատվում է որպես ուղիղ գծի թեքվածք, որը կարող է կառուցվել փոքրագույն քառակուսիների մեթոդով՝ այն սվայլներին համապատասխան, որոնք ստացվել են տրված սահմաններում տեղի ունեցած մուտքային ազդանշանի փոփոխությունների չափման ժամանակ:

<<Իրականացման ժամանակ>> (3) նշանակում է այն ժամանակը, որը պահանջվում է որպեսզի արդյունքը ստացվի վերջնական արժեքի կես բիտի ընթացքում, երբ փոփոխվում է փոխարկիչի ցանկացած երկու մակարդակների միջև:

<<ԳԲՀԼ>> (SHPL) - <<Գերբարձր հզորության լազեր>>:

<<Ազդանշանի վերլուծիչ>> (3) նշանակում է սարք, որը կարող է չափել և ցուցադրել բազմա-հաճախական ազդանշանի եզակի-հաճախական բաղադրիչների հիմնական առանձնահատկությունների չափումը և ցուցադրումը:

<<Ազդանշանի մշակում>> (3, 4, 6, 7) - արտաքին ազդանշանների մշակում ալգորիթմների միջոցով, ինչպիսիք են օրինակ՝ սեղմումը ժամանակի մեջ, ֆիլտրումը, պարամետրերի գնահատումը, ընտրումը, հարաբերակցումը, մարացումը կամ փոխակերպումը ներկայացման մի ոլորտից մյուսին (օրինակ՝ Ֆուրիեյի արագ փոխակերպումը կամ Վոլշի փոխակերպումը):

<<Ծրագրային ապահովում>> (բոլորը) – ցանկացած տեսակի կրիչի վրա գրանցված մեկ կամ ավելի <<ծրագրերի>> կամ <<միկրոծրագրերի>> հավաքակազմ:

**Հ.Ծ.** <<Միկրոծրագիր>> նշանակում է հատուկ հիշողության մեջ պարունակվող տարրական հրամանների հաջորդականություն, որոնց կատարմանը սկիզբ է դրվում հրամանների ռեգիստրում հրաման մուտքագրելու միջոցով:

<<Ելակետային տեքստ>> (կամ ելակետային լեզուն) (4, 6, 7, 9) մեկ կամ ավելի գործընթացների համապատասխան ներկայացում, որոնք ծրագրավորող համակարգի միջոցով կարող են փոխակերպվել սարքավորման կողմից իրականացման համար համապատասխան ձևի (<<օբյեկտային կոդի>> (կամ օբյեկտային լեզվի)):

<<Տիեզերական ապարատներ>> (7, 9) - ակտիվ և պասիվ արբանյակներ և զոնդեր:

<<Տիեզերքում կիրառման համար պիտանի>> (3, 6) – սարքավորումներ, որոնք նախագծվել, պատրաստվել և անցել են էլեկտրական ու մեխանիկական հատուկ պահանջների կամ գործելու պայմանների համար սահմանված պահանջների հետ համապատասխանության փորձարկում՝ 100 կմ կամ ավելի մեծ բարձրությունների վրա գործող արբանյակների կամ բարձր թռչող ապարատների արձակման և ծավալման ժամանակ կիրառելու համար.

<<Հատուկ ճեղքվող նյութ>> (0) - դրանք են պլուտոնիում – 239, ուրան -233, <<235 կամ 233 իզոտոպներով հարստացված ուրանը>> կամ վերը նշվածը պարունակող ցանկացած այլ նյութ:

<<Յուրահատուկ մոդել>> (0, 1, 9) դա Յունգի մոդելն է արտահայտված պասկալներով, հավասար  $N/m^2$  բաժանած յուրահատուկ քաշով  $N/m^3$  -ի մեջ, չափված  $(296 + 2) K ((23 + 2) ^\circ C)$  ջերմաստիճանի և  $(50 ^\circ 5) \%$  հարաբերական խոնավության պայմաններում:

<<Պատման յուրահատուկ ամրություն>> (0, 1, 9) վերջնական պատման ամրությունն է արտահայտված պասկալներով, հավասար  $N/m^2$  բաժանած յուրահատուկ քաշի վրա  $N/m^3$ -ի մեջ, չափված  $(296 ^\circ 2) K ((23 ^\circ 2) ^\circ C)$  ջերմաստիճանի և  $(50 ^\circ 5) \%$  հարաբերական խոնավության պայմաններում:

<<Ցպնում>> (1) նշանակում է հալած մետաղի <<արագ կարծրացման>> գործընթաց՝ ուղղված սառած ձուլակտորի վրա, որից փաթիլանման արդյունք է ստացվում:  
Հ.Օ.: <<արագ կարծարցնել>> հալած նյութի կարծարցում  $1 000 K/-ից ավելի սառեցման պայմաններում$ :

<<Տարածման սպեկտր>> (5) նշանակում է մի տեխնիկա, որով էներգիան հարաբերականորեն նեղ դիսպազոնի հաղորդակցման կապուղիով տարածվում է էներգիայի մի ավելի շատ լայն սպեկտրի վրա:

<<Տարածման սպեկտրի>> ռադար (6) և տես՝ <<Ռադարի տարածման սպեկտր>>:

<<Կայունություն>> (7) – որոշակի պարամետրի ստանդարտ շեղումը (1 սիգմա) դրա՝ ստանդարտ ջերմաստիճանային պայմաններում որոշված չափաբերված նշանակությունից: Արտահայտվում է որպես ժամանակի ֆունկցիա:

<<Պետություններ, որոնք անդամ չեն Քիմիական զենքերի կոնվենցիային>> (1) դրանք այն պետություններն են, որոնցում Քիմիական զենքերի արգելման, չզարգացման և չօգտագործման կոնվենցիան ուժի մեջ չի մտել: (Տես՝ [www.opcw.org](http://www.opcw.org))

<<Միջադիր>> (3) – միացությունների կառուցվածք ունեցող կամ չունեցող հիմնական նյութի թիթեղ, որի վրա կամ որի ներսում կարող են տեղադրվել դիսկրետային բաղադրիչներ կամ ինտեգրալային սխեմաներ, կամ երկուսը միասին:

Հ.Ծ. 1. <<Դիսկրետ բաղադրիչը>> <<սխեմայի տարր>> է՝ ելուստներ ունեցող առանձին պատյանով:

Հ.Ծ. 2. <<Մխեմայի տարրը>> էլեկտրոնային սխեմայի առանձին ակտիվ կամ պասիվ մաս է, այնպիսին, ինչպիսին է մեկ դիոդը, տրանզիստորը, ռեզիստորը, կոնդենսատորը և այլն:

<<Նախաշինվածքներ>> (6) – համաձույլ զանգվածներ, որոնց չափերը բավարարում են այնպիսի օպտիկական տարրերի պատրաստման համար, ինչպիսիք են հայելիները կամ օպտիկական թափանցիկ պատուհանները:

<<Տոքսինի բաղադրիչ մաս>> (1) - ամբողջական <<տոքսինիՍ՝ կառուցվածքայնորեն և ֆունկցիոնալ կերպով առանձնացված բաղադրիչ:

<<Գերհամաձուլվածքներ>> (2, 9) – նիկելի, կոբալտի կամ երկաթի հիմքով համաձուլվածքներ, որոնց ամրությունը ավելի քան 922K (649°C) ջերմաստիճանում և աշխատանքի ու շրջակա միջավայրի լարված պայմաններում գերազանցում է A151 300 սերիայի ցանկացած համաձուլվածքի ամրությանը:

<<Գերհաղորդական>> (1, 3, 6, 8) (գերհաղորդականության էֆեկտի հիման վրա) – տերմինը վերաբերում է այնպիսի նյութերին (օրինակ՝ մետաղներին, համաձուլվածքներին կամ միացություններին), որոնք կարող են լիովին կորցնել էլեկտրական դիմադրողականությունը, ունենալ անսահման բարձր էլեկտրահաղորդականություն և իրենց միջով անցկացնել մեծ էլեկտրական հոսանքներ՝ առանց ջոուլյան տաքացման:

Հ.Ծ. Նյութի <<գերհաղորդական>> վիճակը անհատականորեն բնութագրվում է <<կրիտիկական ջերմաստիճանով>>, կրիտիկական մագնիսական դաշտով, (որը ջերմաստիճանային ֆունկցիա է), և հոսանքի կրիտիկական խտությամբ, որը ինչպես մագնիսական դաշտի, այնպես էլ ջերմաստիճանային ֆունկցիա է:

<<Գերբարձր հզորության լազեր>> (6) – լազեր, որն ընդունակ է 50 միլիվարկյանի ընթացքում ճառագայթել ավելի քան 1կջ էներգիա (ընդհանուր կամ մասնակի), կամ որն ունի միջին կամ ավելի քան 20 կՎտ մշտական աշխատանքի հզորություն:

<<Գերպլաստիկ ձևավորում>> (1, 2) - դեֆորմացման պրոցես՝ այնպիսի մետաղների տաքացման միջոցով, որոնք սենյակային ջերմաստիճանի պայմաններում կատարվող ամրության սովորական փորձարկումների ժամանակ խզման կետում բնութագրվում են երկարացման գործակցի ցածր նշանակություններով (20%-ից պակաս): Մետաղների տաքացման միջոցով գերպլաստիկ ձևավորման պրոցեսը նպատակաուղղված է այնպիսի երկարությունների հասնելու համար, որը առնվազ երկու անգամ գերազանցում է վերոհիշյալ նշանակությունները:

<<Միմետրիկ ալգորիթմ>> (5) նշանակում է ծածկագրային ալգորիթմ, որն օգտագործում է մի ինքնուրույն բանալի երկուստեք ծածկագրման և վերձանման համար:

**Հ.Ծ. <<Միմետրիկ արգորիթմների>> տարածված օգտագործում է տվյալների գաղտնիությունը:**

<<Համակարգային հետքեր>> (6) նշանակում է մշակված, կորելացված (ռադարի նշանակետի տվյալների միակցումը թռիչքային պլանի դիրքի հետ) և օդանավի արդիականացված դիրքի տվյալները, որոնք մատչելի են Օդային վերահսկման կենտրոնի հսկիչներին:

<<Միատուրիկ ցանցով համակարգիչ>> (4) - համակարգիչ, որում տվյալների հոսքը և դրանց փոխակերպումները կարող են դինամիկ կերպով հսկվել օգտագործողի տրամաբանական սխեմայի մակարդակի վրա:

<<Ժապավեն>> (1) - նյութ, որը բաղկացած է իրար հերթագայող կամ միակողմանի ուղղորդված <<միաթելքերից>>, <<փնջերից>>, <<հաստաթելերից>>, <<ճոպաններից>>, <<մանվածքներից>> և այլն, որոնք նախապես ներծծված են խեժով:

**Հ.Ծ. <<Փունջը>> միաթելքերի փունջ է (սովորաբար 200 –ից ավելի, դասավորված միմյանց մոտավորապես զուգահեռ դիրքով:**

<<Տեխնոլոգիա>> (Ընդհանուր տեխնոլոգիական ծանոթագրություն, ամբողջ Ցանկը) – հատուկ տեղեկությունների ամբողջություն, որը պահանջվում է սարքավորման մշակման, արտադրության կամ կիրառման համար: Տեղեկությունը կարող է ստանալ տեխնիկական տվյալների կամ տեխնիկական օգնության ձև:

**Հ.Ծ. 1. <<Տեխնիկական օգնությունը>> կարող է ստանալ այնպիսի ձևեր, ինչպիսիք են՝ հրահանգումը, հմտությունների ձեռքբերման օժանդակությունը, ուսուցումը, արտադրական գիտելիքների հաղորդումը, խորհրդատվական ծառայությունների տրամադրումը: Տեխնիկական օգնությունը կարող է ներառել <<տեխնիկական տվյալների>> փոխանցում:**

**Հ.Ծ.2. <<Տեխնիկական տվյալները>> կարող են ստանալ այնպիսի ձևեր, ինչպիսիք են լուսապատճենները, ծրագրերը, դիագրամները, մոդելները, բանաձևերը, աղյուսակները, տեխնիկական նախագծերը և հատկորոշումները, օգտագործողի համար նախատեսված ձեռնարկները և հրահանգները՝ ձեռագիր տեսքով կամ գրանցված այլ տեսակի կրիչների վրա, ինչպիսիք են սկավառակները, ժապավենները, ՄՀՄ-ները (Մշտական հիշող սարքերը):**

<<Թեքվող իլ>> (2) – գործիքը պահող իլ, որը մշակման ընթացքում փոխում է իր հիմնական առանցքի անկյունային դիրքը մյուս առանցքների նկատմամբ:

<<Ժամանակի հաստատուն>> (6) - այն ժամանակը, որը պահանջվում է, որպեսզի լուսային ազդակը, հոսանքի ավելացման դեպքում, հասնի սահմանային արժեքի 63%-ը կազմող մակարդակին (այսինքն՝ 1-1/e):

<<Թռիչքի ընդհանուր կառավարում>> (7) – նշանակում է <<թռչող ապարատի>> փոփոխական պարամետրերի և դրա թռիչքի հետագծի ավտոմատ կառավարում՝

առաջադրված խնդրի կատարման նպատակով՝ ժամանակի իրական մասշտաբում՝ ըստ առաջադրանքների, վտանգների կամ այլ <<թռչող ապարատների>> վերաբերյալ տվյալներում տեղի ունեցած փոփոխությունների:

<<Թվային փոխանցման ընդհանուր արագություն>> (5) – նշանակում է այն բիտերի քանակը, ներառյալ գծային կոդավորումը, վերադիր ծախսերը ժամանակի մեկ միավորի համար որոնք անցնում են համապատասխան ասրքավորումների միջև թվային փոխանցման համակարգում:

Հ.Օ. Տես նաև <<թվային փոխանցման արագություն>>:

<<Խուրձ>> (1) մի փունջ մոտավորապես զուգահեռ <<մանրաթելեր>>

<<Տոքսիններ>> - (1, 2) նշանակում է կանխամտածված կերպով մեկուսացված պրեպարատների կամ խառնուրդների ձև ունեցող տոքսիններ՝ անկախ այն բանից, թե ինչպես են դրանք արտադրվել, ի տարբերություն այն տոքսինների, որոնք, որպես աղտոտող նյութեր, առկա են օրինակ՝ պաթոլոգիկ նմուշներում, հատիկային մշակաբույսերում, սննդամթերքներում կամ <<միկրոօրգանիզմների>> սերմնային հիմնապաշարում

<<Անցումային լազեր>> (6) – լազեր, որում գեներացիայի միջավայրը հարուցվում է չգրգռված ատոմի կամ մոլեկուլի հետ գրգռված ատոմի կամ մոլեկուլի բախումների ժամանակ էներգիայի անցման միջոցով:

<<Վերալարելի լազեր>> (6) – լազեր, որն ընդունակ է ճառագայթում առաջացնել լազերի մի քանի անցումների ընդգրկույթի բոլոր ալիքների երկարությամբ: Որոշակի գծի ընտրությամբ լազերը առաջացնում է դիսկրետ երկար ալիքների ճառագայթում լազերի մեկ անցման սահմաններում և չի համարվում վերալարելի:

<<Մարդու կողմից չկառավարվող օդային փոխադրական>> (<<UAVՍ>>) (9) նշանակում է ցանկացած օդային փոխադրական, որը կարող է թռիչք սկսել և պահել վերահսկվող թռիչքը և նավարկումը առանց որևէ մարդու ներկայության:

<<235 կամ 233 իզոտոպներով հարստացված ուրան>> (0) – ուրան, որը պարունակում է 235 կամ 233 իզոտոպներ կամ երկուսը միասին՝ այնպիսի քանակությամբ, որ նշված երկու իզոտոպների գումարի հարաբերակցությունը 238 իզոտոպին գերազանցի բնական ուրանի մեջ 235 իզոտոպի հարաբերակցությանը 238 իզոտոպին (0.71% իզոտոպային հարաբերակցություն):

<<Կիրառում>> (Ընդհանուր տեխնոլոգիական ծանոթագրություն, բոլոր կատեգորիաները) - շահագործում, մոնտաժային աշխատանքներ (ներառյալ տեղադրումը), տեխնիկական սպասարկում, վերանորոգում, կապիտալ վերանորոգում, վերականգնում:

<<Օգտագործողին մատչելի ծրագրավորելիություն>> (6) - այնպիսի սարքավորման առկայությունը, որն օգտագործողին հնարավորություն է տալիս ներդնել և փոփոխել ծրագրերը կամ դրանք փոխարինել այլ միջոցներով, ինչպիսիք են.  
ա. Միացումների կամ բաշխումների ֆիզիկական փոփոխությունը,  
բ. Գործառույթների նկատմամբ հսկողության սահմանումը, ներառյալ մուտքագրվող պարամետրերի հսկողությունը:

<<Պատվաստիչ>> (1) դեղագործական արտադրության բժշկական ապրանք, որն ունի արտոնագիր, շուկայական կամ կլինիկական փորձարկման հավաստագիր տրված օգտագործող երկրի կանոնակարգող իշխանություններից կողմից, և կոչված է ուժեղացնելու մարդու կամ կենդանիների իմունոլոգիական արձագանքը՝ նրանց հիվանդությունը դադարեցնելու համար, ում այն ներարկվել է:

<<Վակուումային ստոմիզացիա>> (1) նշանակում է մի գործընթաց՝ ուղված հալած մետաղի շիթը ընդհուպ մինչև 500 միկրոմետր կամ ավելի փոքր կաթիլների վերածելու, որը կատարվում է վակուումի մեջ գազի արագ ներարկման միջոցով:

<<Փոփոխական երկրաչափությամբ պրոֆիլներ>> (7) նշանակում է այն պոչային մասի տարրերը կամ հատվածները կամ օդանավի քթի դիրքը ուղղորդող մասերը կամ հատվածները, որոնց դիրքը կարող է վերահսկել թռիչքը:

<<Մանվածք>> (1): - ոլորված <<փնջերի>> խուրձ  
Հ.Շ. <<Փունջ>> նշանակում է <<միաթելքերի>> խուրձ (սովորաբար 200-ից ավելի մոտավորապես զուգահեռ դիրքում գտնվող) խուրձ:

<<Մինքրոնային թվային փոխանցման ստորակարգություն>> (5) - թվային փոխանցման ստորակարգություն, որը միջոցներ է ապահովում թվային թրաֆիքի բազմաթիվ ձևերի կառավարման, սեղմման և մատչելիության ապահովման համար՝ կիրառելով սինքրոնային փոխանցման ֆորմատը՝ ըստ տարբեր միջավայրերի: Ֆորմատը հիմնված է սինքրոնային փոխանցման տրանսպորտային մոդուլի վրա, որը սահմանված է MKKTT G.703, G.707, G.708, G 709 հրահանգներով և դեռևս լույս չտեսած այլ հրահանգներով: Մինքրոնային թվային փոխանցման ստորակարգության մեջ առաջին մակարդակը հավասար է 155, 52 Մբիտ/վրկ:

<<Եռաչափ վեկտորների ինտենսիվություն>> (4) – միավոր ժամանակում առաջացող վեկտորների քանակը, որոնք պատկանում են 10 պիկսելանոց բաղկացած կիսավեկտորներից, որոնց սահմանափակվածությունը ստուգված է և որոնք ունեն պատահական կողմնորոշում՝ X, Y, Z կոորդինատների նշանակություններով՝ արտահայտված ամբողջական փոփոխականներով կամ ոչ դիսկրետ կետեր ունեցող փոփոխականներով (որոնք էլ որ համապատասխանելու լինեն առավելագույն ինտենսիվությանը):

<<ՍԹՓՍ>> - Մինքրոնային թվային փոխանցման ստորակարգություն:

<<ՀՀՇ>> (Հավասար հավանականության շրջան) (7) – ճշգրտությունը չափող մեծություն. թիրախի շրջանի շառավիղը, որի կենտրոնում գտնվում է նպատակակետը, որոշակի հեռավորությունից ներգործում է օգտակար ծանրաբեռվածության 50%-ը:

<<Կոմուտացնող սարք>> (5) - այնպիսի սարքավորում և դրա հետ կապված ծրագրային ապահովում, որը հնարավոր է դարձնում հաղորդումների փոխանցման ժամանակ իրական կամ վիրտուալ միացումը՝ կոմուտացնող ծանրաբեռնվածության փոխանցման համար:

<<Բարորակության մոդուլյացիա ունեցող լազեր>> (6) – լազեր, որում էներգիան կուտակվում է բնակեցվածության ինվերսիայի միջոցով կամ օպտիկական ռեզոնատորում, այնուհետև ճառագայթվում է իմպուլսային ռեժիմում:

<<Տերմինալ ինտերֆեյսի սարքավորում>> (4) – սարքավորում, որի միջոցով ինֆորմացիան մտնում է հեռահաղորդակցության համակարգ կամ դուրս է գալիս համակարգից, ինչպես օրինակ՝ հեռախոսը, ԷՀՄ տեղեկատվական սարքը, ֆաքսիմիլային ապարատը:

<<Խափանման նկատմամբ դիմակայունություն>> (4) – համակարգչային համակարգի հատկությունը՝ իր ապարատային բաղադրիչում կամ <<ծրագրային ապահովման>> մեջ որևէ անսարքություն առաջանալուց հետո շարունակելու աշխատանքը՝ առանց մարդու միջամտության, ապահովելու աշխատանքի անընդհատություն տվյալների ամբողջականություն և աշխատանքի վերականգնում ժամանակի տրված միջակայքի ընթացքում:

<<Օպտիկական մանրաթելերի նախաձևեր /պրեֆորմաներ/>> (5) – ապակուց, պլաստմասայից կամ այլ նյութերից կազմված թիթեղներ, ձուլակտորներ կամ գլանիկներ, որոնք հատուկ մշակման են ենթարկվել՝ օպտիկական մանրաթելերի պատրաստման ժամանակ կիրառելու համար: Նախաձևերի բնութագրերը որոշում են դրա ձգման հետևանքով ստացված օպտիկական մանրաթելերի հիմնական պարամետրերը:

<<Սպեկտրի ընդլայնում>> (5) – մեթոդ, որի միջոցով էներգիան համեմատաբար նեղ տիրույթ ունեցող կապուղում ընդլայնվում է զգալիորեն լայն էներգետիկ սպեկտրով:

<<ՌԳԿ սպեկտրի ընդլայնում>> (6) – մոդուլացման ցանկացած մեթոդ՝ հաճախականությունների հարաբերականորեն նեղ տիրույթում կենտրոնացած ազդանշանի էներգիան հաճախականությունների ավելի լայն տիրույթում տեղաբաշխելու համար՝ կիրառելով պատահական կամ պսևվոդ պատահական կողավորման մեթոդներ:

<< ՌԳԿ՝ սպեկտրի ընդլայնմամբ >> - տես <<ՌԳԿ սպեկտրի ընդլայնում>>

<<Վերալարելի հաճախականությամբ ՌԳԿ>> - ցանկացած մեթոդ, որը պսևդոպատահական հաջորդականությամբ փոփոխում է ՌԳՍ հաղորդիչի կրող հաճախականությունը իմպուլսների կամ իմպուլսների խմբերի միջև՝ այն մեծության չափով, որը հավասար է կամ գերազանցում է իմպուլսի հաճախականությունների տիրույթի լայնությունը:

<<Սինքրոնային օպտիկական ցանց>> (5) – ցանց, որն ապահովում է կառավարման, խտացման և թվային գրաֆիկի տարբեր ձևերի մատչելիության միջոցներ՝ կիրառելով օպտիկական մանրաթելերով սինքրոնային փոխանցման ֆորմատը: Տվյալ ֆորմատը հանդիսանում է ՍԹՓՍ-ի (Սինխրոնային թվային փոխանցման ստորակարգություն) հյուսիսամերիկյան տարբերակն է, ինչպես նաև օգտագործում է սինքրոնային փոխանցման տրանսպորտային մոդուլը: Սակայն այն սինքրոնային տրանսպորտային ազդանշանն օգտագործում է որպես հիմնական (բազային) մոդուլ՝ առաջին մակարդակի 51, 81 Մբիտ/վրկ արագությամբ (ՍՕՑ ստանդարտները ընդգրկված են ՍԹՓՍ ստանդարտներում):

<<Տվյալների փոխանցման արագություն>> (5) արագություն, որի որոշման ժամանակ՝ ըստ Կապի միջազգային միության (ԿՄՄ) 53-36 Հրահանգների, հաշվի է առնվում, որ ոչ կրկնակի մոդուլացման դեպքում, մեկ վայրկյանում փոխանցման արագությունները՝ արտահայտված բոդերով և բիտերով, մեկը մյուսին հավասար չեն: Պետք է հաշվի առնվեն կոդավորման, ստուգման և սինքրոնիզացման բիթերը:

Հ.Ծ. 1. <<Տվյալների փոխանցման արագությունների>> որոշման ժամանակ ծառայողական և վարչական կապուղիները պետք է բացառվեն:

Հ.Ծ. 2. Դա մեկ ուղղությամբ փոխանցման առավելագույն արագությունն է, այսինքն՝ կամ ընդունման, կամ փոխանցման առավելագույն արագությունը:

<<Թվային փոխանցման արագություն>> (5) – ինֆորմացիայի փոխանցման ընդհանուր արագությունը՝ բիթերով, որն ուղղակիորեն փոխանցվում է ցանկացած միջավայրով:

Հ.Ծ. Տես նաև <<Թվային փոխանցման ընդհանուր արագություն>>:

<<Միասնական տեսական արտադրողականություն>> (<<ՄՏՍՈՒ>>) (3, 4) - հաշվարկների արտադրողականության չափ՝ արտահայտված տեսական գործողությունների միլիոններով՝ վայրկյանում (Մտգ/վրկ), որը ստացվել է <<հաշվողական տարրերի>> (ՀՏ) ագրեգացման արդյունքում:

Հ.Ծ. Տես Կատեգորիա 4-ին կից տեխնիկական ծանոթագրությունը:

<<ՍՕՑ>> - <<սինքրոնային օպտիկական ցանց>>:

<<Սպեկտրային արդյունավետություն>> (5) – պարամետր, որով բնութագրում է այն համակարգի արդյունավետությունը, որում օգտագործվում են մոդուլացման բարդ մեթոդներ, ինչպիսիք են՝ KAM-ը, վանդակային կոդավորումը, Q-ական ՂԾ-ը, և այլն: Որոշվում է ըստ հետևյալ բանաձևի.

թվային փոխանցման արագություն (բիտ/վրկ)



սպեկտրային արդյունավետություն = -----  
-----

սպեկտրի լայնությունը մինուս 6դԲ

մակարդակում (Հց)

<<USU>> - <<միասնական տեսական արտադրողականություն>>

<<Համակարգերի հետագիծ>> (6) – թռիչքի մեջ գտնվող օդանավի դիրքի վերաբերյալ մշակված, հարաբերակցված (նպատակակետի վերաբերյալ ՌԳԿ տվյալների սինթեզը՝ թռիչքային առաջադրանքի տեսանկյունից) և թարմացված տվյալները (հաշվետվությունները), որոնք ներկայացվում են օդային երթևեկության կառավարման կենտրոնի կարգավարներին:

<<Ձգման նկատմամբ տեսակարար ամրություն>> (0, 1) – սա սահմանային ամրությունն է ձգման նկատմամբ՝ արտահայտված Պասկալներով (Ն/քառ. մ), որը չափվել է շրջակա միջավայրի (296 +/- 2) К ( (23 +/- 2) օ С) ջերմաստիճանի և (50 +/- 5) % հարաբերական խոնավության պայմաններում:

<<Առաձգականության տեսակարար մոդուլ>> (0, 1) – սա Յունգի մոդուլն է՝ արտահայտված Պասկալներով (Ն/քառ. մ), որը չափվել է շրջակա միջավայրի (296 +/- 2 К ( (23 +/- 2) օ С) ջերմաստիճանի և (50 +/- 5) % հարաբերական խոնավության պայմաններում:

<<Ներկառուցված ծրագրի կառավարում>> (2, 3, 5) - էլեկտրոնային հիշողության մեջ ներկառուցված հրամաններ օգտագործող կառավարման մեթոդ, որոնք պրոցեսորը կարող է իրականացնել տրված ցանկացած գործառնությունների կառավարման համար:  
Ն.Օ. Սարքավորումը կարող է կառավարելի լինել ներկառուցված ծրագրով՝ անկախ այն բանից, արդյոք էլեկտրոնային հիշողությունը տեղադրված է տվյալ սարքավորման դրսում, թե ներսում:

<<Միջավայրի մուտքն ապահովող սարք>> (5) – սարքավորում, որը պարունակում է կապի մեկ կամ ավելի ինտերֆեյս (<<ցանցի մուտքի կոնտրոլեր>>, <<կապուղու կոնտրոլեր>>, մոդեմ կամ համակարգչային հաղորդաթիթեղ)՝ տերմինալ սարքավորումը ցանցին միացնելու համար:

<<Ինտեգրալ սպասարկման թվային ցանց>> (ԻՄԹՅ) (5) – լիովին միասնականացված թվային ցանց, որում հաղորդման բոլոր տեսակներից (օրինակ՝ հեռախոսային հաղորդումներ, տեքստ, տեղեկություն, անշարժ և շարժական պատկերներ) ստացված տվյալները մի հարակցիչից (տերմինալ) փոխանցվում են մուտքի կոմուտացվող հաղորդակցության գիծ՝ բաժանորդին կամ բաժանորդից:

<< ԻՄԹՅ>> - <<Ինտեգրալ սպասարկման թվային ցանց>>:

<<Անցախուց>> (5) – սարքավորման և <<ծրագրային ապահովման>> համադրության կողմից իրականացվող գործառույթ՝ մի համակարգում օգտագործվող տեղեկությունների ներկայացման, մշակման կամ փոխանցման ստանդարտները ուրիշ համակարգում կիրառվող այլ համապատասխան ստանդարտների փոխակերպելու նպատակով:

<<Հարմարվողական կառավարում>> (2) – կառավարման համակարգ, որը պատասխանը հարմարեցնում է համակարգի գործողության ժամանակ չափված պարամետրերին (պայմաններին) համապատասխան (աղբյուրը՝ ISO 2806-1980):

<<Գլոբալ ընդհատման թաքնվածության ժամանակ>> (4) - այն ժամանակը, որի ընթացքում համակարգչային համակարգը ճանաչում է որևէ իրադարձության հետևանքով առաջացած ընդհատումը, սպասարկում է այդ ընդհատումը և կատարում է անցում այլ առաջադրանքի մշակմանը, որը հիշողության մեջ գտնվում է ռեզիդենտային վիճակում՝ սպասելով ընդհատման:

<<Որոշման ժամանակ>> (3) - այն ժամանակը, որը պահանջվում է, որպեսզի ելքային ազդանշանը հասնի իր սահմանային արժեքից կես բիտի սահմաններում գտնվող մակարդակին՝ փոխարկիչի ցանկացած երկու մակարդակների միջև փոխարկում կատարելու ժամանակ:

<<Ընտանիք>> (3) – միկրոպրոցեսորներից կամ միկրոհամակարգչային միկրոսխեմաներից կազմված տարրերի խումբ, որն ունի բոլոր հետևյալ բաղադրիչները.

ա. Միննույն կառուցվածքը,

բ. Հիմնական հրամանների միննույն լրակազմը և

գ. Միննույն բազային տեխնոլոգիան (այսինքն միայն ծ-ԾԿլ (NMOS) կամ ծ –ԾԿլ (CMOS)):

<<Բազմաստիճան պաշտպանություն>> (5) – տարբեր աստիճանի զգայունություն ունեցող տեղեկություններ պարունակող համակարգերի դաս, որի մուտքը բաց է միայն տեղեկություններից օգտվելու տարբեր իրավունքներ և տարբեր կարիքներ ունեցող օգտագործողների համար, սակայն արգելված է մուտքի իրավունք չունեցող օգտագործողների խմբերի համար:

Հ.Ծ. <<Բազմաստիճան պաշտպանությունը>> համակարգչի պաշտպանությունն է, այլ ոչ թե դրա հուսալիությունը, որը վերաբերում է սարքավորման անսարքության կամ օպերատորի սխալների կանխմանը:

Որպես սահմանված տերմին գործածվող հապավումները կամ կրճատ անվանումները տրվում են ,Սույն Հավելվածում գործածվող տերմինների սահմանումները>> բաժնում

Հապավում կամ կրճատ անվանում	Նշանակություն
ABEC	Annular Bearing Engineers Committee Գազաստատիկ առանցքակալների ինժեների կոմիտե
AGMA	American Gear Manufacturers' Association Գործիքագործ արտադրողների ամերիկյան ասոցիացիա
AHRS	attitude and heading reference systems դիրքի և ուղղության տեղեկատու համակարգեր
AISI	American Iron and Steel Institute Ամերիկայի երկաթի և պողպատի ինստիտուտ
ALU	arithmetic logic unit մաթեմատիկական տրամաբանության միավոր
ANSI	American National Standards Institute Ամերիկայի ազգային ստանդարտների ինստիտուտ
ASTM	the American Society for Testing and Materials Փարձարկման և նյութերի Ամերիկյան միություն
ATC	air traffic control օդագնացության կառավարում
AVLIS	atomic vapour laser isotope separation ատոմական գոլորշու իզոտոպների լազերային անջատում
CAD	computer-aided-design համակարգչով նախագծված դիզայն
CAS	Chemical Abstracts Service Քիմիական ամփոփումների ծառայություն
CCITT	International Telegraph and Telephone Consultative Committee Միջազգային հեռագրային և հեռախոսային խորհրդատվական կոմիտե
CDU	control and display unit վերահսկման և ցուցադրման միավոր
CEP	circular error probable շրջանային հավանական սխալ
CNTD	controlled nucleation thermal deposition վերահսկվող միջուկաստեղծման ջերմային դիրքափոխում
CRISLA	chemical reaction by isotope selective laser activation քիմիական ռեակցիա իզոտոպների առանձնացման լազերային ակտիվացումով
CVD	chemical vapour deposition քիմիական գոլորշու դիրքափոխում
CW	chemical warfare քիմիական զենք
CW	continuous wave

(լազերների համար)	անընդհատ ալիք
DME	distance measuring equipment տարածաչափիչ սարքավորում
DS	directionally solidified ուղղորդումով բյուրեղացված
EB-PVD	electron beam physical vapour deposition Էլեկտրոնային ճառագայթով գոլորշու ֆիզիկական դիրքավորում
EBU	European Broadcasting Union Եվրոպական հեռարձակման միություն
ECM	electro-chemical machining Էլեկտրո-քիմիական սարքավորում
ECR	electron cyclotron resonance Էլեկտրոնային ցիկլոտրոնային ռեզոնանս
EDM	electrical discharge machines Էլեկտրական լիցքաթափման սարքավորում
EEPROMS	electrically erasable programmable read only memory Էլեկտրականորեն ջնջելի միայն ընթերցման համար հիշողություն
EIA	Electronic Industries Association Էլեկտրոնային արդյունաբերության ասոցիացիա
EMC	electromagnetic compatibility Էլեկտրոմագնիսական համատեղելիություն
ETSI	European Telecommunications Standards Institute Եվրոպական Հեռահաղորդակցման ստանդարտների ինստիտուտ
FFT	Fast Fourier Transform Ֆուրիեյի արագ փոխակերպում
GLONASS	global navigation satellite system համաշխարհային նավագնացության արբանյակային համակարգ
GPS	global positioning system համաշխարհային դիրքորոշման համակարգ
HBT	hetero-bipolar transistors հետերո-երկբևեռային տրանզիստորներ
HDDR	high density digital recording բարձր խտության թվային ձայնագրում
HEMT	high electron mobility transistors Էլեկտրոնների բարձր շարժունակության տրանզիստորներ
ICAO	International Civil Aviation Organisation Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպություն
IEC	International Electro-technical Commission Միջազգային էլեկտրո-տեխնիկական հանձնաժողով
IEEE	Institute of Electrical and Electronic Engineers Էլեկտրական և էլեկտրոնային ճարտարագետների ինստիտուտ

IFOV	instantaneous-field-of-view ակնթարթային տեսադաշտ
ILS	instrument landing system գործիքային վայրէջքի համակարգ
IRIG	inter-range instrumentation group միջանկյալ հեռաչափիչ սարքավորման խումբ
ISA	international standard atmosphere ստանդարտ միջազգային մթնոլորտ
ISAR	inverse synthetic aperture radar հակադարձ սինթետիկ ապերտուրայով ռադար
ISO	International Organization for Standardization Ստանդարտացման միջազգային կազմակերպություն
ITU	International Telecommunication Union Միջազգային հեռահաղորդակցման միություն
JIS	Japanese Industrial Standard Ճապոնական արդյունաբերական ստանդարտ
JT	Joule-Thomson Ջոուլ-Թոմսոն
LIDAR	light detection and ranging լույսի դետեկցիա և հեռաչափում
LRU	line replaceable unit գծայնորեն փոխարինելի միավոր
MAC	message authentication code ուղերձի ճանաչման կոդ
Mach	ratio of speed of an object to speed of sound (after Ernst Mach) առարկայի արագության և ձայնի արագության հարաբերակցություն (Էռնստ Մախի անունով)
MLIS	molecular laser isotopic separation մոլեկուլյար լազերային իզոտոպային անջատում
MLS	microwave landing systems միկրոալիքային վայրէջքի համակարգեր
MOCVD	metal organic chemical vapour deposition մետաղական օրգանական քիմիական գոյորջու տեղաշարժում
MRI	magnetic resonance imaging մագնիսական ռեզոնանսի պատկերում
MTBF	mean-time-between-failures միջին ժամանակը սխալների միջև
Mtops	million theoretical operations per second միլիոն տեսական գործողություն մեկ վայրկյանում
MTTF	mean-time-to-failure սխալի միջին ժամանակը
NBC	Nuclear, Biological and Chemical Միջուկային, կենսաբանական և քիմիական
NDT	non-destructive test

	ոչ քայքայիչ փորձարկում
PAR	precision approach radar Ճշգրիտ մոտեցման ռադար
PIN	personal identification number Անձնական ինքնության ճանաչման թիվ
ppm	parts per million մաս մեկ միլիոնից
PSD	power spectral density հզորության սպեկտրային խտություն
QAM	quadrature-amplitude-modulation կվադրատորա-ամպլիտուդային- մոդուլյացիա
RF	radio frequency ռադիո հաճախականություն
SACMA	Suppliers of Advanced Composite Materials Association Բարձրակարգ բաղադրյալ նյութերի մատակարարների ասոցիացիա
SAR	synthetic aperture radar սինթետիկ ապերտուրային ռադար
SC	single crystal եզակի բյուրեղ
SLAR	sidelooking airborne radar կողմնորոնիչ օդային ռադար
SMPTE	Society of Motion Picture and Television Engineers Կինո և հեռուստատեսային ճարտարագետների ասոցիացիա
SRA	shop replaceable assembly փոխարինելի մասերով հավաքում
SRAM	static random access memory ստատիկ պատահական ընտրությամբ հիշողություն
SRM	SACMA Recommended Methods ՍԱԿՄԱ-ի կողմից առաջարկվող մեթոդներ
SSB	single sideband մեկ կողմնային ժապավեն
SSR	secondary surveillance radar երկրորդական հետախուզման ռադար
TCSEC	trusted computer system evaluation criteria վստահելի համակարգչային համակարգի գնահատման չափանիշ
TIR	total indicated reading ընդհանուր ենթադրելի ընթերցում
UV	ultraviolet ուլտրամանուշակագույն
UTS	ultimate tensile strength ձգման դեպքում ամրության սահմանը
VOR	very high frequency omni-directional range չափազանց բարձր հաճախականության բազմառողողությունային

	տիրույթ
YAG	yttrium/aluminum garnet իտրիումի/ալյումինի ական

**Կատեգորիա 0.**  
**Միջուկային նյութեր, տեղակայանքներ և սարքավորումներ**

0A	<b>Համակարգեր, սարքավորումներ և բաղադրամասեր</b>
0A001	<<Միջուկային ռեակտորներ>> և հատուկ մշակված կամ պատրաստված սարքավորումներ և բաղադրիչներ, ինչպիսիք են.  a. <<Միջուկային ռեակտորներ>>,  b. Մետաղական իրաններ կամ դրանց գործարանային արտադրության հիմնական մասեր, ներառյալ ռեակտորի ճնշումային իրանի համար նախատեսված ռեակտորի իրանի գլխիկը՝ նախագծված կամ պատրաստված դրանցում <<միջուկային ռեակտորի>> ակտիվ գոտին զետեղելու համար  c. Հատուկ մշակված կամ պատրաստված մանիպուլյատորային սարքավորում՝ <<միջուկային ռեակտորներ>> վառելիքով լիցքավորելու կամ դրանցից վառելիքը դուրս հանելու համար  d. Հատուկ մշակված կամ պատրաստված կլանիչ գլաններ <<միջուկային ռեակտորում>> ռեակցիայի արագությունը կառավարելու համար, հենքային և կախովի կոնստրուկցիաներ, կլանիչ գլանների շարժաբեռներ և կլանիչ գլանների համար ուղղորդող խողովակներ

---

e. Հատուկ մշակված կամ պատրաստված բարձր ճնշման ռեակտորային խողովակներ՝ «միջուկային ռեակտորներում» դրանց մեջ վառելիքային տարրեր և առաջին կոնտուրի ջերմակիրը շրջանառելու համար՝ 5.1. ՄՊա-ն գերազանցող աշխատանքային ճնշման պայմաններում:

---

f. Հատուկ մշակված կամ պատրաստված ցիրկոնիումի խողովակներ կամ մետաղական ցիրկոնիումից կամ դրա համաձուլվածքներից պատրաստված խողովակների հավաքվածքներ՝ «միջուկային ռեակտորներում» օգտագործելու համար, որոնցում հաֆնիումի հարաբերակցությունը ցիրկոնիումին ըստ կշռի պակաս է 1:500-ից

---

g. Հատուկ մշակված կամ պատրաստված պոմպեր՝ «միջուկային ռեակտորների» առաջին կոնտուրի ջերմակրի շրջանառությունը պահպանելու համար

---

h. Հատուկ մշակված կամ պատրաստված «ռեակտորների ներքին մասերը»՝ «միջուկային ռեակտորում» օգտագործելու համար, ինչպիսիք են ակտիվ գոտու հենքային սյուները, վառելիքային խողովակները, ջերմային էկրանները, միջնապատերը, ակտիվ գոտու խողովակային վանդակները, դիֆուզորի թիթեղները:

*Ծանոթագրություն. 0A001.h կետում «ռեակտորի ներքին մասը» ռեակտորի իրանի ներսում գտնվող ցանկացած հիմնական կառուցվածքն է, որը կատարում է մեկ կամ ավելի այնպիսի ֆունկցիաներ, ինչպիսիք են ակտիվ գոտու պահպանումը, վառելիքային տարրերի տեղակայումը, հովացուցիչ սարքի հիմնական հոսքի ուղղորդումը, ռեակտորի իրանի ճառագայթային պաշտպանության և ակտիվ գոտում գտնվող սարքավորումների կառավարման ապահովումը*

---

i. Հատուկ մշակված կամ պատրաստված ջերմափոխանակիչներ՝ (շոգու գեներատորներ) «միջուկային ռեակտորի» առաջին կոնտուրում օգտագործելու համար.

---

j. Հատուկ մշակված կամ պատրաստված նեյտրոնների դետեկտորներ և չափիչ սարքեր՝ «միջուկային ռեակտորի» ակտիվ գոտում նեյտրոնային հոսքը որոշելու համար:

---

0A001, a 840110000

---

0A001, b 840140000

---

0A001, c 842619000  
842699000

---



0A001, d	840140000
0A001, e	730411 840140000 750712000 760820 810990000
0A001, f	810990000
0A001, g	841330800
0A001, h	840140000 840140000
0A001, i	841950000 840219
0A001, j	903010000
<b>0B</b>	<b>Փորձարկային, հսկիչ և արտադրական սարքավորումներ</b>
0B001	Տեղակայանքներ՝ <<բնական ուրանի>>, <<աղքատացված ուրանի>> և <<հատուկ ճեղքվող>> նյութերի բաժանման համար, դրա համար հատուկ մշակված կամ պատրաստված սարքավորում և բաղադրամասեր, ինչպիսիք են.  a. Հատուկ մշակված տեղակայանքներ՝ <<բնական ուրանի>>, <<աղքատացված ուրանի>> և <<հատուկ ճեղքվող>> նյութերի իզոտոպների բաժանման համար, ինչպիսիք են. <ol style="list-style-type: none"> <li>1. Գազային կենտրոնախուսիչները</li> <li>2. Գազադիֆուզիոն անջրպետները</li> <li>3. Աերոդինամիկ հարստացման տեղակայանքները</li> <li>4. Քիմիական փոխանակության տեղակայանքները</li> <li>5. Իոնային փոխանակության տեղակայանքները</li> <li>6. Ատոմական գոլորշիների մեթոդով իզոտոպների &lt;&lt;լազերային բաժանման&gt;&gt; տեղակայանքները (AVLIS)</li> <li>7. Մոլեկուլային մեթոդով իզոտոպների &lt;&lt;լազերային բաժանման&gt;&gt; տեղակայանքները (MLIS)</li> <li>8. Պլազմային բաժանման տեղակայանքները</li> <li>9. Էլեկտրամագնիսական բաժանման տեղակայանքները:</li> </ol> b. Հատուկ մշակված կամ պատրաստված գազային կենտրոնախուսիչներ , գազային կենտրոնախուսիչներում օգտագործման համար հանգույցներ

---

և բաղադրամասեր.

Ծանոթագրություն. *В 0В001.б կետում նշված՝ «խտության նկատմամբ ամրության հարաբերության բարձր նշանակություն ունեցող նյութ» նշանակում է հետևյալներից յուրաքանչյուրը.*

*ա. Մարտենսիտային հնացող պողպատները, որոնց խզման ամրության առավելագույն սահմանը 2, 050 ՄՊա է կամ ավելի,*

*բ. Այրումինի համաձուլվածքները, որոնց խզման ամրության առավելագույն սահմանը 460 Մպա է կամ ավելի, կամ*

*գ. «Բաղադրիչ» կառուցվածքներում օգտագործման համար պիտանի «մանրաթելային նյութերը», որոնց տեսակարար մոդուլի նշանակությունը  $3,18 \times 10^6$  մ-ից ավելի է, իսկ խզման ամրության առավելագույն սահմանը՝ ավելի քան  $76,2 \times 10^3$  մ:*

---

1. Գազային կենտրոնախուսիչներ

---

2. Ամբողջական ռոտորային հավաքվածքներ

---

3. Ռոտորային խողովակների գլաններ՝ 12 մմ կամ պակաս պատի հաստությամբ, 75 մմ-ից մինչև 400 մմ տրամագծով պատրաստված «խտության նկատմամբ ամրության հարաբերության բարձր նշանակություն» ունեցող նյութերից

---

4. Օղակներ կամ սիլֆոններ՝ 3 մմ կամ պակաս պատի հաստությամբ, 75 մմ-ից մինչև 400 մմ տրամագծով, որոնք նախատեսված են ռոտորային խողովակը կամ ռոտորային խողովակների հավաքվածքները ենթակալելու համար և պատրաստված են «խտության նկատմամբ ամրության հարաբերության բարձր նշանակություն» ունեցող նյութերից

---

5. 75 մմ-ից մինչև 400 մմ տրամագծով միջնապատեր՝ կենտրոնախուսակի ռոտորային խողովակի ներսում տեղադրելու համար, որոնք պատրաստված են «խտության նկատմամբ ամրության հարաբերության բարձր նշանակություն» ունեցող նյութերից,

---

6. 75 մմ-ից մինչև 400 մմ տրամագծով վերին կամ ստորին կափարիչներ, որոնք ճշգրտորեն համապատասխանում են ռոտորային խողովակի ծայրերի տրամագծերին և պատրաստված են «խտության նկատմամբ ամրության հարաբերության բարձր նշանակություն» ունեցող նյութերից.

---

7. Մագնիսական կախոցներով առանցքակալներ, որոնք կազմված են

---

---

մեղմիչ միջավայր ունեցող պահունակում կախված օդակաձև մագնիսից: Պահունակը պատրաստված է <<ՄԲ-ի նկատմամբ կոռոզիակայուն նյութից>> կամ պաշտպանված է նման նյութերից կազմված ծածկույթով, պարունակում է լիցքաթափող միջավայր, և ունի մագնիս, որը միանում է բևեռային ծայրապանակի կամ ռոտորի վերին կափարիչի վրա տեղադրված երկրորդ մագնիսին:

---

8. Հատուկ պատրաստված առանցքակալներ, որոնք պարունակում են հանգույց, դեմպֆերի /հանդարտիչի/ վրա մոնտաժված սոնի/ խցման օդ.

---

9. Մոլեկուլային պոմպեր, որոնք իրենց մեջ պարունակում են ներտաշված կամ ներսում արտաճզված սպիրալային ակոսներ և ներսում գայլիկոնված անցքեր ունեցող գլաններ

---

10. Օդակաձև ստատորներ՝ բարձր արագության, բազմաֆազային հիստերեզիսային (կամ ռեակտիվ) փոփոխական հոսանքի էլեկտրաշարժիչների համար, որոնք նախատեսված են վակուումային պայմաններում, 600-2000 Հց հաճախականության և 50-1000 ՎԱ. հզորությունների միջակայքում սինքրոնային աշխատանք ապահովելու համար:

---

11. Կենտրոնախուսիչների իրաններ/ընդունիչներ՝ դրանցում գազային կենտրոնախուսիչների ռոտորային խողովակների հավաքվածքներ տեղադրելու համար: Իրանը կազմված է մինչև 30 մմ պատի հաստությամբ կոշտ գլանից, որի ծայրերը ճշգրտորեն մշակված են առանցքակալների տեղադրման համար: Իրանները պատրաստվում են <<ՄԲ-ի նկատմամբ կոռոզիակայուն նյութերից>> կամ պաշտպանվում են նման նյութերից կազմված ծածկույթով:

---

12. Ծուղակներ, որոնք կազմված են մինչև 12 մմ ներքին տրամագիծ ունեցող փողակներից՝ ռոտորային խողովակից ՄԲ գազը Պիտոյի փողակի մեթոդով արտազատելու համար: Փողակները պատրաստվում են <<ՄԲ-ի նկատմամբ կոռոզիակայուն նյութերից>> կամ պաշտպանվում են նման նյութերից կազմված ծածկույթով:

---

13. Հատուկ մշակված կամ պատրաստված հաճախականությունների փոխակերպիչներ (կոնվերտորներ կամ ինվերտորներ) և դրանց բաղադրամասերը՝ այն գազային կենտրոնախուսիչների ստատորային շարժիչները սնուցելու համար, որոնք օժտված են բոլոր հետևյալ բնութագրերով,

- ա. Բազմաֆազային էլք 600-ից մինչև 2000 Հց միջակայքում,
  - բ. Հաճախականությունների կայունացումը 0.1%-ից ավելի լավ է,
  - գ. Ցածր գծային աղավաղումները 2%-ից պակաս են, և
  - դ. Ստանդարտ ՕԳԳ-ն 80%-ից ավելի է:
-

---

14. Միլիոնային կափույրներ պատրաստված կամ պատված <<ՄԲ-ի նկատմամբ կոռոզիակայուն նյութերից>> 10 մմ-ից մինչև 160 մմ տրամագծով

---

с. Հատուկ մշակված կամ պատրաստված հավաքվածքներ կամ բաղադրամասեր՝ գազադիֆուզիոն հարստացման ժամանակ օգտագործելու համար, ինչպես.

---

1. Գազադիֆուզիոն անջրպետներ՝ պատրաստված ծակոտկեն մետաղական, պոլիմերային կամ կերամիկական <<ՄԲ-ի նկատմամբ կոռոզիակայուն նյութերից>> 10-ից մինչև 100 մմ չափի ծակոտիներով, 5 մմ կամ ավելի պակաս հաստությամբ, իսկ խողովակավոր ձևերի համար՝ 25 մմ կամ դրանից պակաս տրամագծով:

---

2. Դիֆուզորների խցիկներ՝ պատրաստված <<ՄԲ-ի նկատմամբ կոռոզիակայուն նյութից>> կամ պաշտպանված նման նյութերից կազմված ծածկույթով:

---

3. Կոմպրեսորներ (դրական շեղումով, կենտրոնախույս և սոնու տիպի) կամ գազամղիչներ՝ մուտքի մոտ 1 խոր. մ/րոպե ՄԲ արտադրողականությամբ, իսկ ելքի մոտ մինչև 666.7 կՊա ճնշմամբ, պատրաստված <<ՄԲ-ի նկատմամբ կոռոզիակայուն նյութերից>> կամ պաշտպանված նման նյութերից կազմված ծածկույթով:

---

4. Պոտվող լիսեռների պրկիչներ՝ ՕԲ001.с.3.-ում նշված կոմպրեսորների կամ գազամղիչների համար: Նման պրկիչները սովորաբար նախագծվում են բուֆերային գազի հոսման 1000 սմ<sup>3</sup>/րոպե-ից պակաս արագության համար:

---

5. Ջերմափոխանակիչներ, որոնք պատրաստված են ալյումինից, պղնձից, նիկելից կամ ավելի քան 60 տոկոս նիկել պարունակող համաձուլվածքներից կամ դրանց համադրություններից, կամ պատված են դրանցով, նախագծված են մթնոլորտային ճնշումից ցածր ճնշման պայմաններում աշխատելու համար և ապահովում են արտահոսքը որոշող ճնշման փոփոխության արագություն՝ ժամում 10 Պա-ից պակաս՝ 100 կՊա ճնշման անկման դեպքում:

---

6. Միլիոնային տիպի կափույրներ՝ պատրաստված <<ՄԲ-ի նկատմամբ կոռոզիակայուն նյութերից>> կամ պաշտպանված նման նյութերից կազմված ծածկույթով, 40-ից մինչև 1500 մմ տրամագծով:

---

d. Հատուկ մշակված կամ պատրաստված սարքավորումներ և բաղադրամասեր՝ աերոդինամիկ հարստացման տեղակայանքներում օգտագործելու համար, ինչպես օրինակ.

---

---

1. Բաժանող ծայրափողակներ՝ կազմված ճեղքաձև ծովածածկ անցուղիներից՝ ծովածածկի 1 մմ-ից պակաս շառավղով, որոնք պատրաստված են <<UF<sub>6</sub>-ի նկատմամբ կոռոզիակայուն նյութերից>> և ունեն ներքին կտրող եզր, որը ծայրափողակի միջով հոսող գազը բաժանում է երկու շիթերի:

---

2. Տանգենցիալ մուտքային հոսքով մղվող գլանաձև կամ կոնաձև խողովակներ (մրրկախողովակներ)՝ պատրաստված <<UF<sub>6</sub>-ի նկատմամբ կոռոզիակայուն նյութից>> կամ պաշտպանված նման նյութերից կազմված ծածկույթով, որոնք ունեն 0,5 սմ-ից մինչև 4 սմ տրամագիծ, և երկարության հարաբերությունը տրամագծին կազմում է 20 : 1 կամ դրանից պակաս, ինչպես նաև մեկ կամ ավելի տանգենցիալ մուտքային անցքեր:

---

3. Կոմպրեսորներ և գազամղիչներ (դրական շեղումով, կենտրոնախույս և սոնու տիպի)՝ պատրաստված <<UF<sub>6</sub>-ի նկատմամբ կոռոզիակայուն նյութից>> կամ պաշտպանված նման նյութերից կազմված ծածկույթով, մուտքի մոտ 2 մ<sup>3</sup>/րոպե արտադրողականությամբ, և դրանց համար նախատեսված պտտվող լիսեռների խցանիչներ:

---

4. Ջերմափոխանակիչներ՝ պատրաստված <<UF<sub>6</sub>-ի նկատմամբ կոռոզիակայուն նյութերից>> կամ պաշտպանված նման նյութերից կազմված ծածկույթով:

---

5. Բաժանող տարրերի պատյաններ՝ պատրաստված <<UF<sub>6</sub>-ի նկատմամբ կոռոզիակայուն նյութից>> կամ պաշտպանված նման նյութերից կազմված ծածկույթով՝ դրանց մեջ մրրկախողովակներ կամ բաժանող ծայրափողակներ տեղադրելու համար:

---

6. Սիլֆոնային տիպի կափույրներ՝ պատրաստված <<UF<sub>6</sub>-ի նկատմամբ կոռոզիակայուն նյութից>> կամ պաշտպանված նման նյութերից կազմված ծածկույթով, 40ից մինչև 1500 մմ տրամագծով:

---

7. Համակարգեր, որոնք նախատեսված են կրող գազից (ջրածին կամ հելիում) UF<sub>6</sub>-ը անջատելու համար՝ մինչև միլիոնից մեկ մասը կամ ավելի պակաս չափով, և որոնք կարող են ներառել այնպիսի սարքավորումներ, ինչպիսիք են.

a. Կրիոգենային ջերմափոխանակիչները և կրիոսեպարատորները, որոնք ընդունակ են առաջացնել 153 K (-120 °C) կամ ավելի ցածր ջերմաստիճաններ.

b. Կրիոգենային սառեցման բլոկներ, որոնք ընդունակ են առաջացնել 153 K (-120 °C) կամ ավելի ցածր ջերմաստիճաններ.

c. Բաժանիչ ծայրափողակների կամ մրրկախողովակների բլոկներ՝ կրող գազից UF<sub>6</sub>-ը անջատելու համար.

d. UF<sub>6</sub>-ի սառը ծուղակներ, որոնք ընդունակ են առաջացնել 253 K (20 °C) կամ ավելի ցածր ջերմաստիճաններ:

---

---

e. Հատուկ մշակված կամ պատրաստված սարքավորումներ կամ բաղադրամասեր՝ քիմիական հարստացման տեղակայանքների վրա օգտագործելու համար, ինչպես.

---

1. Հեղուկից հեղուկ իմպուլսային արագ փոխանակման աշտարակներ՝ 30 վայրկյան կամ ավելի քիչ մշակման տևողությամբ և դիմացկուն աղաթթվի խտացված լուծույթների նկատմամբ (օրինակ պատրաստված կամ ծածկված համապատասխան պլաստիկ նյութերով, ինչպես օրինակ ֆտորացված ածխաջրածնային պոլիմերներով կամ ապակիներով):

---

2. Հեղուկից հեղուկ արագ փոխանակման կենտրոնախույս կոնտակտային գոտիներ 30 վայրկյան կամ ավելի քիչ մշակման տևողությամբ և դիմացկուն աղաթթվի խտացված լուծույթների նկատմամբ (օրինակ պատրաստված կամ ծածկված համապատասխան պլաստիկ նյութերով, ինչպես օրինակ ֆտորացված ածխաջրածնային պոլիմերներով կամ ապակիներով):

---

3. Էլեկտրաքիմիական մանրացման խցիկներ՝ պատրաստված լինեն աղաթթվի խտացված լուծույթների նկատմամբ կոռոզիակայուն նյութերից, ուրանը մի վալենտային վիճակից մյուսին մանրացնելու համար:

---

4. Էլեկտրաքիմիական մանրացման խցիկների սնուցման համակարգեր, օրգանական հոսքից  $U^{+4}$ -ը արտազատելու համար: Համակարգի սարքավորումների այն մասերը, որոնք շփման մեջ են գտնվում տեխնոլոգիական հոսքի հետ, պետք է պատրաստված լինեն համապատասխան նյութերից (ինչպիսիք են՝ ապակին, ֆտորացված ածխաջրածնային պոլիմերները կամ ապակիները, պոլիֆենիլ սուլֆատը, պոլիէթերի սուլֆոնը և խեժով ներծծված գրաֆիտը) կամ պաշտպանված լինեն այդ նյութերից կազմված ծածկույթով:

---

5. Մնուցման նախապատրաստման համակարգեր՝ բարձր մաքրություն ունեցող ուրանի քլորիդի սնուցող լուծիչներ արտադրելու համար, որը բաղկացած է լուծման, լուծիչով կլանման համար նախատեսված սարքավորումից և/կամ մաքրման համար իոնափոխանակման սարքավորումից, ինչպես նաև էլեկտրոլիտային խցիկներից՝  $U^{+6}$ -ը կամ  $U^{+4}$ -ը  $U^{+3}$ -ի մշակման համար:

---

6. Ուրանի օքսիդացման համակարգեր՝  $U^{+3}$ -ը  $U^{+4}$ -ի օքսիդացնելու համար:

---

f. Հատուկ մշակված կամ պատրաստված սարքավորումներ կամ բաղադրամասեր՝ իոնափոխանակային հարստացման տեղակայանքների վրա օգտագործելու համար, ինչպես օրինակ.

---

1. Արագ արձագանքող իոնափոխանակման խեժեր/աբսորբենտներ,

---

---

նան պելիկուլյար/կամ մեմբրանային, մակրոցանցաթաղանթային կառուցվածքով ծակոտկեն խեժեր, որոնցում քիմիական փոխանակման ակտիվ խմբերը սահմանափակված են՝ ոչ ակտիվ ծակոտկեն օժանդակ կառուցվածքի մակերեսի վրա տեղակայված ծածկույթով և ցանկացած ընդունելի ձևի այլ բաղադրյալ կառուցվածքներով, ներառյալ մասնիկները կամ մանրաթելերը՝ 0,2 մմ կամ դրանից պակաս տրամագծով, և քիմիականորեն կայուն՝ աղաթթվի խտացված լուծույթների նկատմամբ և նախատեսված ուրանի իզոտոպերի շատ արագ փոխանակության կինետիկա ստանալու համար (փոխանակության տևողությունը 10 վրկ. պակաս) և ընդունակ աշխատելու 373 K (100°C)-ից մինչև 473 K (200°C) ջերմաստիճանի միջավայրում:

---

2. Իոնափոխանակման աշտարակներ (գլանաձև) ավելի քան 1000 մմ տրամագծով: Այդ աշտարակները պատրաստվում են այնպիսի նյութերից (օրինակ՝ տիտանից կամ ֆտորացված ածխաջրածնային պոլիմերներից), որոնք կայուն են աղաթթվի խտացված լուծույթների առաջացրած կոռոզիայի նկատմամբ կամ պաշտպանված են այդ նյութերից կազմված ծածկույթով և ընդունակ են աշխատել 373 K (100°C)-ից մինչև 473 K (200°C) միջակայքում գտնվող ջերմաստիճանի և 0,7 ՄՊա-ից բարձր ճնշման պայմաններում:

---

3. Ռեֆլուկսի իոնափոխանակման համակարգեր (քիմիական կամ էլեկտրաքիմիական օքսիդացման կամ մանրացման համակարգեր) քիմիական մանրացման կամ օքսիդացման ազդանյութի (երի) վերարտադրման համար, որը (որոնք) օգտագործվում է (օգտագործվում են) իոնափոխանակման հարստացման կասկադներում:

---

գ. Հատուկ մշակված կամ պատրաստված սարքավորումներ կամ բաղադրամասեր՝ ատոմական գոլորշիների մեթոդով (AVLIS) լազերային բաժանման հարստացման տեղակայանքների վրա օգտագործելու համար, ինչպիսիք են.

---

1. Բարձր հզորության ժապավենային կամ ռաստրային էլեկտրոնային ճառագայթային փունջով թնդանոթներ՝ ավելի քան 2,5 կՎտ/սմ թիրախին փոխանցման հզորությամբ՝ ուրանի գոլորշիացման համակարգերում օգտագործելու համար:

---

2. Համակարգեր՝ հեղուկ հալեցված ուրանի կամ ուրանային հեղուկ համաձուլվածքների մշակման համար, որոնք կազմված են հալքանյութերից և հալքանյութերի սառեցման սարքավորումներից, որոնք կազմված են կոռոզիակայուն և ջերմակայուն նյութերից կամ պաշտպանված են դրանցից կազմված ծածկույթով: Ընդունելի նյութերն ընդգրկում են տանտալը, իտրիումի օքսիդով պատված

---

---

գրաֆիտը, հազվագյուտ հողերի այլ տարրերի օքսիդներով կամ դրանց խառնուրդներով պատված գրաֆիտը, ինչպես նաև վառարանների սառեցնող համակարգեր:

**Հ.Օ. Տես նաև 2A225**

---

3. Ագրեգատներ՝ «արտադրանքի» և «վերջնամնացուկների» հավաքման համար՝ պատրաստված կամ պատված տաքացման և ուրանի մետաղական գոլորշիների կամ հեղուկ ուրանի առաջացրած կոռոզիայի նկատմամբ կայուն նյութերով ինչպես իտրումի օքսիդով պատված գրաֆիտը կամ տանտալը:

---

4. Բաժանիչ հանգույցի պատյաններ (գլանաձև կամ ուղղանկյունաձև խցիկներ)՝ դրանում մետաղական ուրանի գոլորշիների աղբյուրը, էլեկտրոնա-ճառագայթային թնդանոթը և «արտադրանքի» ու «վերջնամնացորդների» կոլեկտորները տեղադրելու համար:

---

5. «Լազերներ» կամ «լազերային >> համակարգեր՝ ուրանի իզոտոպները անջատելու համար՝ երկարատև ժամանակահատվածներում նախատեսված սպեկտրային հաճախականությունների կայունացուցիչով աշխատելու համար:

**Հ.Օ. Տես նաև 6A005 և 6A205**

---

հ.Հատուկ մշակված կամ պատրաստված սարքավորումներ և բաղադրամասեր՝ իզոտոպների մոլեկուլային լազերային բաժանման (MLIS) կամ քիմիական ռեակցիայի (CRISLA) հարստացման տեղակայանքներում օգտագործելու համար՝ ըստ իզոտոպների ընտրվելիք լազերային ակտիվացման, ինչպիսիք են.

---

1. Գերձայնային լայնացնող ծայրափողակներ՝ UF<sub>6</sub>-ի խառնուրդները և կրող գազը / UF<sub>6</sub>-ի և կրող գազի խառնուրդները / մինչև 150 K (-123°C) կամ դրանից ցածր ջերմաստիճանները սառեցնելու համար՝ պատրաստված «UF<sub>6</sub>-ի նկատմամբ կոռոզիակայուն նյութերից»>

---

2. Հնգաֆտոր ուրանի (UF<sub>5</sub>) արտադրանքի հավաքիչներ, որոնք կազմված են գոլիչից, հարվածային կամ ցիկլոնային տիպի հավաքիչներից կամ դրանց համադրություններից և պատրաստված են «UF<sub>5</sub>/ UF<sub>6</sub>-ի նկատմամբ կոռոզիակայուն նյութերից»>

---

3. Կոմպրեսորներ, որոնք պատրաստված են «UF<sub>6</sub>-ի նկատմամբ կոռոզիակայուն նյութերից» կամ պաշտպանված են այդ նյութերից կազմված ծածկույթով, և դրանց պտտվող լիսեռների խցանները:

---

4. Սարքավորումներ՝ UF<sub>5</sub>-ի (պինդ վիճակում) և UF<sub>6</sub>-ի (գազային)

---



---

Ֆտորացման համար:

---

5. Համակարգեր՝ UF<sub>6</sub>-ը կրող գազից անջատելու համար (կրող գազը կարող է լինել ազոտը, արգոնը կամ այլ գազ), ներառյալ.

a. Կրիոգենային ջերմափոխանակիչներ և կրիոսեպարատորներ, որոնք ընդունակ են առաջացնել 153 K (-123°C) կամ դրանից ցածր ջերմաստիճաններ.

b. Կրիոգենային սառեցման բլոկներ, որոնք ընդունակ են առաջացնել 153 K (-123°C) կամ դրանից ցածր ջերմաստիճաններ.

c. UF<sub>6</sub>-ի սառը ծուղակներ, որոնք ընդունակ են առաջացնել 253 K (-20 °C) կամ ավելի ցածր ջերմաստիճաններ:

---

6. <<Լազերներ>> կամ <<լազերային>> համակարգեր՝ ուրանի իզոտոպները անջատելու համար՝ երկարատև ժամանակահատվածներում նախատեսված սպեկտրի հաճախականությունների կայունացուցիչով աշխատելու համար:

---

**Հ.Ծ. Տես նաև 6A005 և 6A205**

---

i. Հատուկ մշակված կամ պատրաստված սարքավորումներ և բաղադրամասեր՝ պլազմային բաժանումով հարստացման տեղակայանքներում օգտագործելու համար, ինչպիսիք են.

---

1. Էներգիայի միկրոալիքային աղբյուրներ և ալեհավաքներ՝ իոնների առաջացման կամ արագացման համար, որոնք օժտված են հետևյալ բնութագրերով. 30 ԳՀց-ից բարձր հաճախականություն և իոններ առաջացնելու համար 50 կՎտ-ից ավելի միջին էլքային հզորություն.

---

2. Ռադիո հաճախականության իոնային գրգռման կոճեր 100 կՀց-ից բարձր հաճախականությունների տիրույթում գործող, որոնք ընդունակ են աշխատել 40 կՎտ-ից ավելի միջին էլքային հզորությամբ.

---

3. Ուրանային պլազմայի արտադրության համակարգեր.

---

4. Համակարգեր՝ հեղուկ հալեցված ուրանի կամ ուրանային հեղուկ համաձուլվածքների մշակման համար, որոնք կազմված են հալքանյութերից և հալքանյութերի սառեցման սարքավորումներից: Հալքանյութերը և այդ համակարգի մյուս բաղադրամասերը կազմված են կոռոզիակայուն և ջերմակայուն նյութերից կամ պաշտպանված են դրանցից կազմված ծածկույթով: Ընդունելի նյութերն ընդգրկում են տանտալը, իտրիումի օքսիդով պատված գրաֆիտը, հազվագյուտ հողային այլ տարրերի օքսիդներով կամ դրանց խառնուրդներով պատված գրաֆիտը:

---

**Հ.Ծ. Տես նաև 2A225**

---

---

5. Ագրեգատներ՝ «արտադրանքի» և «վերջնամնացուկների» հավաքման համար: Այդ ագրեգատների բաղադրամասերը պատրաստված են տաքացման և ուրանի մետաղական գոլորշիների կամ հեղուկ ուրանի առաջացրած կոռոզիայի նկատմամբ կայուն նյութերից (ինչպիսիք են իտրումի օքսիդով պատված գրաֆիտը կամ տանտալը), կամ պաշտպանված են այդ մետաղներից կազմված ծածկույթով:

---

6. Բաժանիչ մոդուլի պատյաններ (զլանաձև)՝ դրանում մետաղական ուրանային պլավմայի աղբյուրը, ռադիոհաճախականության էներգետիկ սուլենոիդը և «արտադրանքի» ու «վերջնամնացորդների» կոլեկտորները տեղադրելու համար, որոնք պատրաստված են համապատասխան ոչ մագնիսական նյութերից (օրինակ՝ չժանգոտվող պողպատից):

---

յ. Հատուկ մշակված կամ պատրաստված սարքավորումներ և բաղադրամասեր՝ էլեկտրամագնիսական հարստացման տեղակայանքներում օգտագործելու համար, ինչպիսիք են.

---

1. Ուրանի իոնների առանձին կամ բազմաթիվ աղբյուրներ, որոնք բաղկացած են գոլորշու աղբյուրից, արագացուցիչի իոնիզատորից՝ պատրաստված համապատասխան ոչ մագնիսական նյութերից, ինչպիսիք են, օրինակ՝ գրաֆիտը, չժանգոտվող պողպատը կամ պղինձը, և ընդունակ են իոնների փնջում ապահովել 50 մ Ա կամ ավելի բարձր ընդհանուր հոսանք

---

2. Երկու կամ ավելի ճեղքեր և փորակներ ունեցող հավաքիչ իոնային թիթեղներ՝ հարստացված կամ աղքատացված ուրանի իոնային փնջերի հավաքման համար, որոնք պատրաստված են համապատասխան ոչ մագնիսական նյութերից, ինչպիսիք են, օրինակ՝ գրաֆիտը կամ չժանգոտվող պողպատը

---

3. Վակուումային պատյաններ ուրանի էլեկտրամագնիսական սեպարատորների համար, որոնք պատրաստված են ոչ մագնիսական նյութերից (օրինակ՝ չժանգոտվող պողպատից) և նախատեսված են 0,1 Պա կամ ավելի ցածր ճնշման պայմաններում աշխատելու համար

---

4. Ավելի քան 2 մ տրամագիծ ունեցող մագնիսական բևեռային ծայրապանակներ

---

5. Իոնների աղբյուրների համար նախատեսված սնուցման աղբյուրներ, որոնք օժտված են բոլոր հետևյալ բնութագրերով

- a. Կարող են աշխատել անընդհատ ռեժիմում
- b. Ելքային լարումը 20 000 Վ է կամ ավելի
- c. Ելքային հոսանքը 1 Ա է կամ ավելի

---

---

d. Լարման կայունացումը ավելի բարձր է, քան 8 ժամում 0,01%-ը:

**Հ.Օ. Տես նաև 3A227:**

---

6. Մագնիսների սնուցման աղբյուրներ (բարձր հզորություն, հաստատուն հոսանք), որոնք օժտված են բոլոր հետևյալ բնութագրերով.

- a. Կարող են աշխատել անընդհատ ռեժիմում՝ 500 Ա կամ ավելի բարձր հոսանքով, 100 Վ կամ ավելի բարձր լարման պայմաններում
- b. Հոսանքի կամ լարման կայունացումը ավելի բարձր է, քան 8 ժամում 0,01%-ը:

**Հ.Օ. Տես նաև 3A226:**

---

0B001, a, 1	840120000 842199000
0B001, a, 2	840120000 842139200
0B001, a, 3	840120000
0B001, a, 4	840120000
0B001, a, 5	842129000
0B001, a, 6	840120000 901320000
0B001, a, 7	840120000 901320000
0B001, a, 8	854310000
0B001, a, 9	840120000
0B001, b, 1	840120000
0B001, b, 2	840120000
0B001, b, 3	840120000
0B001, b, 4	830790000 840120000

---

---

0B001, b, 5	840120000
0B001, b, 6	840120000
0B001, b, 7	848330380
0B001, b, 8	848330380
0B001, b, 9	841410200
0B001, b, 10	850300990
0B001, b, 11	840120000
0B001, b, 12	840120000
0B001, b, 13	850239 8502 850240000 850440550
0B001, c, 1	840120000 842139900
0B001, c, 2	731010000 750810000 761100000 761290910
0B001, c, 3	841480
0B001, c, 4	848410000 848490000 848790
0B001, c, 5	841950000
0B001, c, 6	848110 848130910 848130990 848180
0B001, d, 1	840120000

---

---

OB001, d, 2	840120000
OB001, d, 3	841480
OB001, d, 4	841950000
OB001, d, 5	840120000
OB001, d, 6	848110 848130910 848130990 848180
OB001, d, 7	848110 848130910 848130990 848180
OB001, e, 1	840120000
OB001, e, 2	840120000
OB001, e, 3	840120000
OB001, e, 4	840120000
OB001, e, 5	840120000
OB001, e, 6	840120000
OB001, f, 1	382319100 382319900 391400000
OB001, f, 2	842129000
OB001, f, 3	382319100 382319900 391400000 842129000
OB001, g, 1	840120000

---

---

OB001, g, 2	840120000
-------------	-----------

---

OB001, g, 3	84198998
	846810000
	846820000

---

OB001, g, 4	840120000
-------------	-----------

---

OB001, g, 5	840120000
	901320000

---

OB001, h, 1	840120000
-------------	-----------

---

OB001, h, 2	840120000
-------------	-----------

---

OB001, h, 3	841480
	puqh 841480100

---

OB001, h, 4	840120000
-------------	-----------

---

OB001, h, 5	84198998
	846810000
	846820000

---

OB001, h, 6	840120000
	901320000

---

OB001, i, 1	854310000
	854370
	854370900
	854370590

---

OB001, i, 2	850440900
-------------	-----------

---

OB001, i, 3	851529900
	854310000
	854370
	854370900

---

OB001, i, 4	84198998
	846810000
	846820000

---

OB001, i, 5	84198998
	846810000

---

	846820000
OB001, i, 6	840120000
OB001, j, 1	854310000 854370 854370900
OB001, j, 2	840120000
OB001, j, 3	840120000
OB001, j, 4	850590100
OB001, j, 5	850440900
OB001, j, 6	850440900
OB002	<p>Հատուկ մշակված կամ պատրաստված օժանդակ համակարգեր, սարքավորումներ կամ բաղադրամասեր՝ OB001-ում նշված իզոտոպների բաժանման տեղակայանքների համար, որոնք պատրաստված են &lt;&lt;UF<sub>6</sub>-ի նկատմամբ կոռոզիակայուն նյութերից&gt;&gt; կամ պաշտպանված են այդ նյութերից կազմված ծածկույթով, ինչպիսիք են.</p> <p>a. Ավտոկլավներ, ջերմապահպանիչ կամ UF<sub>6</sub>-ը դեպի հարստացման սարք մատակարարելու համար օգտագործվող համակարգեր.</p> <p>b. Դեսուբլիմատորներ կամ սառը ծուղակներ, որոնք օգտագործվում են տաքացած UF<sub>6</sub>-ը հարստացման պրոցեսից դուրս բերելու համար՝ հետագա տեղափոխման նպատակով</p> <p>c. &lt;&lt;Արտադրանքների&gt;&gt; &lt;&lt;վերջնամնացորդների&gt;&gt; կայաններ, որոնք օգտագործվում են UF<sub>6</sub>-ը բեռնախցերի մեջ ուղղելու համար</p> <p>d. Հեղուկացման կամ պնդացման տեղակայանքներ, որոնք օգտագործվում են UF<sub>6</sub>-ը հարստացման պրոցեսից դուրս բերելու համար՝ սեղմման, սառեցման և UF<sub>6</sub>-ը հեղուկ կամ պինդ վիճակի փոխարկելու միջոցով</p> <p>e. Խողովակաշարերի և հավաքիչների հատուկ մշակված կամ պատրաստված համակարգեր UF<sub>6</sub>-ը դիֆուզիոն, կենտրոնախույս կամ ալերոդինամիկ կասկադների ներսում պահելու համար</p> <p>f.1. Խողովակաշարերի վակուումային համակարգեր կամ վակուումային հավաքիչներ, որոնց ներծծման ունակությունը 5 խոր.մ/րոպե է կամ</p>

---

ավելի

2. Վակուումային պոմպեր, որոնք հատուկ մշակված են UF6 պարունակող մթնոլորտում օգտագործելու համար

---

պլյուս-մինուս 0.05%-ը՝ (կամ ավելի փոքր) 10 աստիճան կամ ավելի բարձր միջինի դեպքում,  
3. Դիրքավորման ճշգրտությունը հավասար է կամ գերազանցում է 5 աստիճան/վրկ-ը:

*Ծանոթագրություն 1. 2B120 կետով չեն վերահսկվում հաստոցների կամ բժշկական սարքավորումների համար հատուկ մշակված կամ ձևավորված պտտվող սեղանները: Հաստոցների համար նախատեսված պտտվող սեղանների հսկողության վերաբերյալ տես 2B008 կետը:*

*Ծանոթագրություն 2. 2B120 կետում նշվող շարժման նմանակողները կամ պտտվող սեղանները շարունակում են ենթարկվել վերահսկողության անկախ նրանից, թե արդյոք արտահանման պահին սահող օղակները կամ ինտեգրված ոչ կոնտակտային սարքերը դրանցում ներկառուցված են, թե՛ ոչ:*

---

2B120 903210200  
903210890  
903289000

---

2B121 Դիրքավորող սեղաններ (սարքավորումներ, որոնք ապահովում են ցանկացած առանցքով ճշգրիտ պտտական դիրքորոշման հնարավորություն), ի լրումն 2B120 կետում նշվածների, որոնք օժտված են բոլոր հետևյալ բնութագրերով.

- a. Ունեն երկու կամ ավելի առանցք,
- b. Ապահովում են 5 աստիճան/վրկ կամ ավելի բարձր դիրքավորման ճշգրտություն:

*Ծանոթագրություն. 2B120 կետով չեն վերահսկվում հաստոցների կամ բժշկական սարքավորումների համար հատուկ մշակված կամ ձևավորված պտտվող սեղանները: Հաստոցների համար նախատեսված պտտվող սեղանների հսկողության վերաբերյալ տես 2B008 կետը:*

---

2B121 903180  
903180340  
903180910  
903180980  
903190

---

2B122 Կենտրոնախուսիչներ, որոնք կարող են զարգացնել 100 գ-ից բարձր արագացումներ և նախագծված են կամ փոփոխված սահող օղակներ կամ ինտեգրված ոչ կոնտակտային սարքեր ներառելու համար, որոնք ընդունակ են հաղորդել էլեկտրական հոսանք և/կամ ազդանշանային

---

---

ինֆորմացիա:

Ծանոթագրություն. 2B122 կետում նշվող կենտրոնախուսիչները շարունակում են ենթարկվել վերահսկողության անկախ նրանից, թե արդյոք արտահանման պահին սահող օղակները կամ ինտեգրված ոչ կոնտակտային սարքերը դրանցում ներկառուցված են, թե՛ ոչ:

---

2B122 8421  
842139900  
842191000  
842199000

---

2B201 Հաստոցներ, բացի 2B001 կետում նշվածներից, մետաղների, կերամիկայի կամ <<բաղադրանյութերի>> կտրման կամ մշակման համար, որոնք, արտադրողի տեխնիկական հատկորոշումների համաձայն, զինված են էլեկտրոնային սարքավորումներով՝ երկու կամ ավելի առանցքներով միաժամանակյա <<եզրագծային կառավարման>> համար, ինչպիսիք են.

a. Ֆրեզերային հաստոցներ, որոնք օժտված են հետևյալ բնութագրերից որևէ մեկով.

1. Ցանկացած առանցքի երկայնքով դիրքորոշման ճշգրտություն, որը, իրեն մատչելի համակշռման ամբողջ հնարավորությամբ, հավասար է կամ պակաս է ISO 230/2 (1988) (·) միջազգային ստանդարտով կամ դրան համարժեք ազգային ստանդարտով սահմանված 0.006 մմ-ից (դիրքի ընդհանուր ընտրություն), և
2. Ունեն երկու և ավելի հորիզոնական դարձովի առանցքներ:

Ծանոթագրություն. 2B201.a. կետով չեն վերահսկվում հետևյալ բնութագրերն ունեցող ֆրեզերային հաստոցները.

- a. X առանցքով տեղաշարժը 2 մ-ից ավելի է,
- b. X առանցքով դիրքի ընտրության ընդհանուր ճշգրտությունը 0.030 մմ-ից ավելին է:

b. Հղկիչ հաստոցներ, որոնք օժտված են հետևյալ բնութագրերից որևէ մեկով.

1. Ցանկացած առանցքի երկայնքով դիրքորոշման ճշգրտություն, որը, իրեն մատչելի համակշռման ամբողջ հնարավորությամբ, հավասար է կամ պակաս է ISO 230/2 միջազգային ստանդարտով կամ դրան համարժեք ազգային ստանդարտով սահմանված 0.004 մմ-ից (դիրքի ընդհանուր ընտրություն), և
2. Ունեն երկու և ավելի հորիզոնական դարձովի առանցքներ:

Ծանոթագրություն. 2B201.b. կետով չեն վերահսկվում հետևյալ բնութագրերն ունեցող հղկիչ հաստոցները.

- a. Արտաքին, ներքին և միաժամանակ արտաքին-ներքին հղկման
-

---

համար նախատեսված հաստոցները, որոնք օժտված են բոլոր հետևյալ բնութագրերով.

1. Մշակվող մասի առավելագույն արտաքին տրամագիծը կամ երկարությունը 150 մմ է,
2. Առանցքները սահմանափակված են  $x$ ,  $z$  և  $c$  -ով:

բ. X, Y, C և A առանցքներով սահմանափակված կոորդինատային հղկիչ հաստոցներ, որտեղ C-առանցքը օգտագործվում է հղկասկավառակը աշխատանքային /բանոդ/ մակերևույթին ուղղահայաց պահելու համար, որոնց ճշգրտությունը փոքր (մեծ) է ISO 230/2 (1988) <sup>(2)</sup> միջազգային ստանդարտով կամ դրան համարժեք ազգային ստանդարտով սահմանված 0.004 մմ-ից:

*Օւանդթագրություն 1. 2B201 կետով չեն վերահսկվում հատուկ նպատակի ծառայող հաստոցները, որոնք սահմանափակված են հետևյալ մասերից որևէ մեկի արտադրությամբ.*

- a. Գործիքային սարքավորումներ;
- b. Ծնկաձև կամ ճանկաձև գլաններ.;
- c. Գործիքներ կան հատիչներ;
- d. Որդանման էքստրուդերներ.

*Օւանդթագրություն 2. Հաստոց, որն ունի առնվազն երկուսը խառատային, ֆրեզերային կամ հարթեցնող կարողություններից (օրինակ, խառատային հաստոց ֆրեզերային կարողությամբ), պետք է գնահատվի ըստ յուրաքանչյուր կիրառելի հոդվածի 2B001.a., b. կամ c.*

---

2B201, a	845931000
	845939000
	845951000
	845961
	845969
	846490800
	846592000
	848610000
	848620900
	848630900
2B201, b	846011000
	846019000
	846021

---

<sup>(1)</sup>Այն արտադրողները որոնք հաշվարկում են դիրքավորման ճշգրտությունը համաձայն ISO 230/2 (1997) ստանդարտի, պետք է խորհրդակցեն այն Անդամ պետությունների իրավասու մարմինների հետ, որտեղ նրանք հիմնադրվել են:

---

846029  
846420  
846593000  
848610000  
848620900  
848630900

---

2B204 <<Իզոստատիկ մամլիչներ>>, բացի 2B004 և 2B104 կետերով հսկվողներից, ինչպիսիք են.  
a. <<Իզոստատիկ մամլիչներ>>, որոնք օժտված են բոլոր հետևյալ բնութագրերով.  
1. Ունեն 69 ՄՊա կամ ավելի բարձր աշխատանքային ճնշում,  
2. Աշխատանքային խցիկի ներքին տրամագիծը 152 մմ-ից ավելի է:  
b. 2B204. a. կետով կարգավորվող <<իզոստատիկ մամլիչների>> համար հատուկ մշակված մամլամատեր և մատրիցներ, ինչպես նաև կառավարման համակարգեր:

Տեխնիկական ծանոթագրություն.

*2B204 կետում խցիկի ներքին չափերը իրենցից ներկայացնում են խցիկի այն մասի չափերը, որտեղ ձեռք են բերվում ինչպես աշխատանքային ջերմաստիճանը, այնպես էլ աշխատանքային ճնշումը, որը չի ընդգրկում ներքին ամրանի չափերը: Այդ չափը որոշվում է հետևյալ երկու տրամագծերից ամենափոքրով. մամլիչ խցիկի տրամագիծը կամ մեկուսացված հնոցային խցիկի տրամագիծը՝ կախված այն բանից, թե նշված երկու խցիկներից ո՞րն է գտնվում մյուսի մեջ:*

---

2B204 846299100  
846299500

---

2B206 Չափերի հսկման մեխանիզմներ, համակարգեր կամ սարքավորումներ, բացի 2B006 կետով վերահսկվողներից, ինչպիսիք են.

a. Համակարգչով կամ <<թվային ծրագրային կառավարման>> բլոկով կառավարվող չափերի հսկման մեքենաներ, որոնք օժտված են հետևյալ երկու բնութագրերով.  
1. Ունեն երկու կամ ավելի կոորդինատային առանցներ, և  
2. Երկարության <<չափման սխալանքը>> հավասար է կամ փոքր է  $(1.25 + L/1000)$  մկմ-ից (L-ը միլիմետրերով չափվող երկարությունն է), որը ստուգված է 0.2 մկմ-ից ցածր <<ճշգրտություն>> ունեցող սարքով (որտեղ L-ը միլիմետրերով չափվող երկարությունն է) (տե՛ս VDI/VDE 2617, Մաս 1 և 2):

---

---

բ. Կիսազնդերի գծային և անկյունային պարամետրերի միաժամանակյա ստուգման համակարգեր, որոնք օժտված են հետևյալ երկու բնութագրերով.

1. <<Չափման սխալանքը>> ցանկացած գծային առանցքի երկայնքով հավասար է կամ փոքր է 3.5 մկմ-ից՝ 5 մմ-ի վրա, և
2. <<Անկյունային չափման սխալանքը>> հավասար է կամ փոքր է ադեղի 0.2 աստիճանից:

*Ծանոթագրություն 1. Այն հաստոցները, որոնք կարող են օգտագործվել որպես չափման միջոցներ, ենթակա են հսկողության, եթե դրանց պարամետրերը համապատասխանում են կամ գերազանցում են հաստոցների կամ չափիչ սարքերի համար սահմանված բնութագրերը:*

*Ծանոթագրություն 2. 2B204 կետում նկարագրված համակարգերը ենթակա են արտահանման վերահսկողության, եթե իրենց աշխատանքային ընդգրկույթի որևէ տեղում դրանք իրենց բնութագրերով գերազանցում են արտահանման վերահսկողության ենթակա նմուշները:*

*Տեխնիկական ծանոթագրություն.*

1. Այն սարքերը, որոնք օգտագործվում են չափերի հսկման համակարգերի ցուցմունքների ճշգրտությունը, պետք է համապատասխանեն VDI/VDE 2617, Մաս 2, 3 և 4-ում սահմանված պահանջներին:

2. 2B204 կետում կետում նշված չափման բոլոր պարամետրերը պետք է հասկացվեն պլյուս/մինուս իմաստով, այլ ոչ թե որպես լրիվ սխալանք:

---

2B206, a 903180380

2B206, b 846299100  
846299500

---

2B207 Հետևյալ <<ոբրտները>> և <<աշխատանքային օրգանները>>, բացի 2B007 կետում նկարագրվածներից.

a. <<Ռոբոտներ>> և <<աշխատանքային օրգանները>>, որոնք անվտանգության ազգային ստանդարտներին համապատասխան հատուկ մշակվել են պայթյունավտանգ միջավայրում աշխատելու համար (օրինակ նրանք, որոնք բավարարում են պայթյունավտանգ միջավայրում աշխատելու համար նախատեսված էլեկտրասարքավորումների պարամետրերի համար):

---

---

b. 2B207. a. կետով կարգավորվող <<ռոբոտների>> և <<աշխատանքային օրգանների>> համար հատուկ մշակված հսկիչներ:

---

2B207, a 847982000

2B207, b 853710100  
853710910  
853710990

---

2B209 Շրջագլման, գրտնակման գործառույթներ իրականացնող շրջագլման գրտնակավոր և ճկման հաստոցներ, բացի 2B009 կամ 2B109 կետերով հսկվողներից, և կալակներ

a. Հաստոցներ, որոնք օժտված են հետևյալ բնութագրերով.

1. Ունեն երեք կամ ավելի քարշուղիներ (ակտիվ կամ ուղղորդող),
2. Համաձայն արտադրողի տեխնիկական հատկորոշումների, կարող են սարքավորվել <<թվային ծրագրային կառավարման>> կամ համակարգչային կառավարման բլոկներով:

b. Ռոտորային շրջագլման կալակներ՝ 75-400 մմ ներքին տրամագիծ ունեցող գլանային ձևերի համար:

*Օանդազրույթուն. 2B209. a. կետն ընդգրկում է նաև այն հաստոցները, որոնք ունեն մետաղի ձևավորման համար նախատեսված միայն մեկ քարշուղի, և երկու օժանդակ քարշուղիներ, որոնք նախատեսված են կալակը պահելու համար, սակայն անմիջականորեն չեն մասնակցում դեֆորմացիայի գործընթացին:*

---

2B209, a 846229100  
846310  
848620900

2B209, b 846610150  
846610380  
848690

---

2B219 Անշարժ կամ շարժական, հորիզոնական կամ ուղղաձիգ կենտրոնախույս հավասարակշռող մեքենաներ, ինչպիսիք են.

a. Ճկուն ռոտորների հավասարակշռման համար նախատեսված կենտրոնախույս հավասարակշռող մեքենաներ, որոնք ունեն 600 մմ կամ ավելի երկարություն և օժտված են հետևյալ բնութագրերով.

1. 75 մմ կամ ավելի մեծ տրամագծով հողակապ կամ լիսեռ,
  2. 0.9-ից մինչև 23 կգ զանգվածի հավասարակշռման ունակություն,
  3. Ավելի քան 5000 պտույտ/րոպե պտտման արագությամբ
-

---

հավասարակշռելու ունակություն:

բ. Կենտրոնախույս հավասարակշռող մեքենաներ, որոնք նախագծված են սնամեջ գլանաձև ռոտորի մասերի հավասարակշռման համար և օժտված են բոլոր հետևյալ բնութագրերով.

1. 75 մմ կամ ավելի մեծ տրամագծով լիսեռ,
2. 0.9-ից մինչև 23 կգ զանգվածի հավասարակշռման ունակություն,
3. Հավասարակշռելու ունակություն՝ 0.010 կգ մմ/կգ կամ ավելի ցածր մնացորդային անհավասարակշռությամբ,
4. Փոկավոր տեսակի շարժաբեր:

---

2B219 8421  
842139900  
842191000  
842199000  
9031  
903110000  
903120000  
903149  
903149900  
903180

---

2B225 Հեռակարգավորվող մանիպուլյատորներ, որոնք կարող են օգտագործվել ճառագայթաքիմիական բաժանման օպերացիաներում հեռակարգավորվող գործողությունների ապահովման համար, տաք խցիկներում և օժտված են հետևյալ բնութագրերով.

ա. Ընդունակ են օպերատորի գործողությունները փոխանցել տաք խցիկի՝ 0.6 մ կամ ավելի մեծ հաստություն ունեցող պատի միջով (օպերացիա <<պատի միջով>>),

բ. Ընդունակ են օպերատորի գործողությունները փոխանցել տաք խցիկի՝ 0.6 մ կամ ավելի մեծ հաստություն ունեցող կափարիչի միջով (օպերացիա <<կափարիչի միջով>>):

Տեխնիկական ծանոթագրություն.

*Հեռակարգավորվող մանիպուլյատորները ապահովում են մարդ-օպերատորի գործողությունների փոխանցումը հեռակարգավորմամբ գործող ձեռքին և տերմինալ ֆիքսատորին /սնեռակին/: Դրանք կարող են լինել <<տեր/ծառա>> տեսակի համակարգեր (օպերատորի շարժումները պատճենող համակարգեր), կամ ջոյսթիքով կամ ստեղնաշարով կառավարվող մանիպուլյատորներ:*

---

2B225, a 842890950  
842890910

---

	848640000
2B225, b	842890950 842890910 848640000
2B226	<p>Վակուումային կամ հսկվող միջավայրով (իներտ գազ) ինդուկցիոն վառարաններ և դրանց համար հատուկ մշակված ուժային սնուցման սարքավորում, ինչպիսիք են.</p> <p>Հ.Ծ. Տես նաև 3B կետը:</p> <p>a. Վառարաններ, որոնք օժտված են բոլոր ստորև նշված բնութագրերով.</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Ընդունակ են զարգացնել 1.123 K (850 °C) կամ ավելի բարձր աշխատանքային ջերմաստիճան,</li> <li>2. Սարքավորված են 600 մմ կամ ավելի փոքր տրամագիծ ունեցող ինդուկցիոն կոճերով,</li> <li>3. Նախագծված են 5 կվտ-ին հավասար կամ գերազանցող մուտքային հզորությամբ:</li> </ol> <p>b. 5 կվտ-ին հավասար կամ գերազանցող անվանական մուտքային հզորություն ունեցող ուժային սարքավորում, որը հատուկ մշակված է 2B226. a. կետով վերահսկվող վառարանների համար:</p> <p><i>Չանդադրություն 2B226.a. կետով չեն վերահսկվում այն հնոցները, որոնք նախագծված են կիսահաղորդչային թիթեղների մշակման համար.</i></p>
2B226, a	8514 850440900 851420100 851420800 848610000 848620900
2B226, b	8514 850440900 851420100 851420800 848610000 848620900
2B227	Վակուումային և հսկվող մթնոլորտով մետաղագործական հալոցային վառարաններ և ձուլահալոցներ, ինչպիսիք են.



---

a. Էլեկտրաաղեղանային հալման վառարաններ, որոնք օժտված են հետևյալ երկու բնութագրերով.

1. Օգտագործում են 1000-ից մինչև 2000 խոր.սմ ծավալով էլեկտրոդներ, և

2. Ապահովում են պրոցեսը 1.973 K (1700 °C)-ից բարձր հալման ջերմաստիճանների պայմաններում:

b. Էլեկտրոնաճառագայթային հալոցային և պլազմաաղեղային վառարաններ, որոնք օժտված են հետևյալ երկու բնութագրերով.

1. Ունեն 50 կՎտ կամ ավելի բարձր հզորություն,

2. Ապահովում են պրոցեսը 1.473 K (1200 °C)-ից բարձր հալման ջերմաստիճանների պայմաններում:

c. Հսկողության և մոնիտորինգի համակարգչային համակարգեր, որոնք հատուկ սարքաբերված են 2B227. a. կամ b. կետերով կարգավորվող ցանկացած վառարանների համար:

---

2B227, a 851430190  
851420800  
851430  
848610000  
848620900

2B227, b 851430190  
851420800  
851430  
848610000  
848620900

2B227, c 851430190  
851420800  
851430  
848610000  
848620900

---

2B228 Ռոտորների պատրաստման և հավաքման համար նախատեսված սարքավորումներ, ճշտադրման սարքավորումներ, ինչպես նաև կալիչներ և ձևավոր դրոշմներ սիլֆոնների համար, ինչպիսիք են.

a. Մոնտաժային սարքավորումներ գազային կենտրոնախուսիչի ռոտորի խողովակային հատվածամասերի, դիաֆրագմերի և կափարիչների հավաքման համար:

---

*Ծանոթագրություն. 2B228. a. կետը ներառում է բարձր ճշգրտության*

---

---

*կալիչներ, դրոշմներ և սեղմիչներ:*

b. Ճշտադրման սարքավորումներ՝ գազային կենտրոնախուսիչի ռոտորի խողովակային հատվածամասերը ընդհանուր առանցքի երկայնքով կենտրոնադրելու համար:

*Տեխնիկական ծանոթագրություն. 2B228.b. կետում նման սարքավորումը կազմված է լինում համակարգչին միացած բարձր ճշգրտություն ունեցող չափման տվիչներից, որը կառավարում է գործնթացը, օրինակ՝ ռոտորի խողովակային հատվածամասերի կենտրոնադրման համար օգտագործվող պնևմատիկ ուժային գլաններից:*

c. Կալիչներ և դրոշմներ՝ ծալքավոր սիլֆոնների պատրաստման համար:

*Տեխնիկական ծանոթագրություն. 2B228. c. կետում նշված սիլֆոններն ունեն բոլոր հետևյալ բնութագրերը.*

- 1. 75-400 մմ ներքին տրամագիծ,*
- 2. 12.7 մմ կամ ավելի երկարություն,*
- 3. 2 մմ ծալքի խորություն, և*
- 4. Պատրաստված են այլումինի բարձր ամրություն ունեցող համաձուլվածքներից, մարտենսիտային-հնացող պողպատից և բարձր ամրության մանրաթելային կամ թելքանման նյութերից:*

---

2B228, a	847989 848610000 848620900 848630900 848640000 847989970 850819000 850860000
----------	---

2B228, b	903180
----------	--------

2B228, c	846694000 848690
----------	---------------------

---

2B230	<<Ճնշման տվիչներ>>, որոնք ընդունակ են չափել բացարձակ ճնշումը 0-ից մինչև 13 կՊա միջակայքում և օժտված են հետևյալ երկու բնութագրերով. a. պատրաստված են նիկելից, ավելի քան 60% (ըստ կշռի) նիկել պարունակող համաձուլվածքներից, պատրաստված են այլումինից կամ
-------	---

---

---

ալյումինային համաձուլվածքներից կամ ունեն դրանցով պաշտպանված զգայուն տարրեր,

բ. Ունեն հետևյալ բնութագրերից որևէ մեկը.

1. Ճնշման տվիչներ մինչև 13 կՊա լրիվ սանդղակով և լրիվ սանդղակի ավելի քան +/-1% <<ճշգրտությամբ>>,
2. Ճնշման տվիչներ 13 կՊա գերազանցող լրիվ սանդղակով և +/-130 Պա գերազանցող <<ճշգրտությամբ>>:

Տեխնիկական ծանոթագրություն.

2B230 կետը կիրառելիս <<ճշգրտությունը>> ներառում է գծայնությունը, հիստերեզիսը և վերարտադրելիությունը՝ շրջակա միջավայրի տարբեր ջերմաստիճանների դեպքում:

---

2B230, a 902620200

2B230, b 902620200

---

2B231 Վակուումային պոմպեր, որոնք օժտված են բոլոր հետևյալ բնութագրերով.

- a. Մուտքի տրամագիծը 380 մմ-ից պակաս չէ,
- b. Պոմպահանման արագությունը 15000 լիտր/վրկ. է կամ ավելի,
- c. Ընդունակ են ստեղծել 13 ՄՊա-ից բարձր սահմանային վակուում:

Տեխնիկական ծանոթագրություն.

1. Պոմպահանման արագությունը դրա չափման ժամանակ որոշվում է ըստ ազոտի կամ օդի:
2. Սահմանային վակուումը հանդիսանում է վակուումի այն մեծությունը, որը որոշվում է պոմպի մուտքի մոտ՝ դրա փակման ժամանակ:

---

2B231 841410  
841410200  
841410250  
841410810  
841410890

---

2B232 Զանգվածի բազմակասկադ, թեթև գազային արագացուցիչներ կամ բարձր արագության այլ նետման միջոցներ (կոճային էլեկտրամագնիսական, էլեկտրաջերմային կամ այլ բարձր տեխնոլոգիական համակարգեր), որոնք ընդունակ են ապահովել արտադրանքի 2 կմ/վրկ կամ ավելի բարձր արագություն:

---

Քիմիական արտադրական տեղակայանքներ և սարքավորումներ, ինչպիսիք են.

a. Ռեակտորներ կամ ռեակցիայի անոթներ՝ խառնիչներով կամ առանց դրանց, 0.1 մ<sup>3</sup>-ից մեծ (100 լիտր) և 20 մ<sup>3</sup>-ից (20000 լիտր) փոքր լրիվ ներքին (երկրաչափական) ծավալով, որոնցում բոլոր մակերևույթները, որոնք անմիջական շփման մեջ են գտնվում մշակվող կամ պարունակվող քիմիկատների հետ, պատրաստված են հետևյալ նյութերից որևէ մեկից.

1. 25%-ից ավելի նիկել և 20%-ից ավելի քրոմ (ըստ կշռի) պարունակող համաձուլվածքներ,
2. Ֆտորպոլիմերներ,
3. Ապակիներ (ներառյալ ապակեպատ կամ արծնապատ /էմալապատ/ ծածկույթները),
4. Նիկել կամ ավելի քան 40% (ըստ կշռի) նիկել պարունակող համաձուլվածքներ,
5. Տանտալ կամ տանտալային համաձուլվածքներ,
6. Տիտան կամ տիտանային համաձուլվածքներ, կամ
7. Ցիրկոնիում կամ ցիրկոնիումային համաձուլվածքներ:
8. Նիոբիումի (կոլումբիումի) կամ նիոբիումի համաձուլվածքներ:

b. Ռեակտորներում կամ ռեակցիայի անոթներում օգտագործվող խառնիչներ, որոնք հատկորոշված են 2B350.a. կետում, և որոնցում խառնիչի ամբողջ մակերևույթը, որը անմիջական շփման մեջ է գտնվում ռեակտորում մշակվող կամ պարունակվող քիմիկատների հետ, պատրաստված է հետևյալ նյութերից որևէ մեկով.

1. 25%-ից ավելի նիկել և 20%-ից ավելի քրոմ (ըստ կշռի) պարունակող համաձուլվածքներ,
2. Ֆտորպոլիմերներ,
3. Ապակիներ (ներառյալ ապակեպատ կամ արծնապատ ծածկույթները).
4. Նիկել կամ ավելի քան 40% (ըստ կշռի) նիկել պարունակող համաձուլվածքներ,
5. Տանտալ կամ տանտալային համաձուլվածքներ.
6. Տիտան կամ տիտանային համաձուլվածքներ, կամ
7. Ցիրկոնիում կամ ցիրկոնիումային համաձուլվածքներ:
8. Նիոբիումի (կոլումբիումի) կամ նիոբիումի համաձուլվածքներ:

c. Պահպանման պահեստարաններ, բեռնարկղեր կամ ընդունիչներ 0.1 մ<sup>3</sup>-ից մեծ (100 լիտր) լրիվ ներքին (երկրաչափական) ծավալով, որոնցում բոլոր մակերևույթները, որոնք անմիջական շփման մեջ են գտնվում դրանց մեջ պարունակվող քիմիկական նյութերի հետ, պատրաստված են հետևյալ նյութերից որևէ մեկով.

- 
1. 25%-ից ավելի նիկել և 20%-ից ավելի քրոմ (ըստ կշռի) պարունակող համաձուլվածքներ,
  2. Ֆտորպոլիմերներ,
  3. Ապակիներ (ներառյալ ապակեպատ կամ արծնապատ ծածկույթները).
  4. Նիկել կամ ավելի քան 40% (ըստ կշռի) նիկել պարունակող համաձուլվածքներ,
  5. Տանտալ կամ տանտալային համաձուլվածքներ,
  6. Տիտան կամ տիտանային համաձուլվածքներ, կամ
  7. Ցիրկոնիում կամ ցիրկոնիումային համաձուլվածքներ:
  8. Նիոբիումի (կոլումբիումի) կամ նիոբիումի համաձուլվածքներ:

d. Ջերմափոխանակիչներ կամ կոնդենսատորներ՝ ջերմափոխանակման մակերևույթի 20 մ<sup>2</sup>-ից փոքր մակերեսով, որոնցում մշակվող քիմիկատների հետ անմիջական շփման մեջ գտնվող բոլոր մակերևույթները պատրաստված են հետևյալ նյութերից որևէ մեկով.

1. 25%-ից ավելի նիկել և 20%-ից ավելի քրոմ (ըստ կշռի) պարունակող համաձուլվածքներ,
2. Ֆտորպոլիմերներ,
3. Ապակիներ (ներառյալ ապակեպատ կամ արծնապատ ծածկույթները).
4. Գրաֆիտ կամ ,ածխածնային գրաֆիտե
5. Նիկել կամ ավելի քան 40% (ըստ կշռի) նիկել պարունակող համաձուլվածքներ,
6. Տանտալ կամ տանտալային համաձուլվածքներ,
7. Տիտան կամ տիտանային համաձուլվածքներ,
8. Ցիրկոնիում կամ ցիրկոնիումային համաձուլվածքներ,
9. Սիլիցիումի կարբիդ, կամ
10. Տիտանի կարբիդ, կամ
11. Նիոբիումի (կոլումբիումի) կամ նիոբիումի համաձուլվածքներ:

e. Թորման կամ կլանման աշտարակներ 0.1 մ գերազանցող ներքին տրամագծով, որոնցում մշակվող քիմիկատների հետ անմիջական շփման մեջ գտնվող բոլոր մակերևույթները պատրաստված են հետևյալ նյութերից որևէ մեկով.

1. 25%-ից ավելի նիկել և 20%-ից ավելի քրոմ (ըստ կշռի) պարունակող համաձուլվածքներ,
  2. Ֆտորպոլիմերներ,
  3. Ապակիներ (ներառյալ ապակեպատ կամ արծնապատ ծածկույթները).
  4. Գրաֆիտ կամ ,ածխածնային գրաֆիտե,
  5. Նիկել կամ ավելի քան 40% (ըստ կշռի) նիկել պարունակող համաձուլվածքներ,
  6. Տանտալ կամ տանտալային համաձուլվածքներ,
  7. Տիտան կամ տիտանային համաձուլվածքներ, կամ
-

- 
8. Ցիրկոնիում կամ ցիրկոնիումային համաձուլվածքներ:
  9. Նիոբիումի (կոլումբիումի) կամ նիոբիումի համաձուլվածքներ:

f. Հեռակարգավորվող լցման սարքավորում, որում մշակվող քիմիկատների հետ անմիջական շփման մեջ գտնվող բոլոր մակերևույթները պատրաստված են հետևյալ նյութերից որևէ մեկով.

1. 25%-ից ավելի նիկել և 20%-ից ավելի քրոմ (ըստ կշռի) պարունակող համաձուլվածքներ,
2. Նիկել կամ ավելի քան 40% (ըստ կշռի) նիկել պարունակող համաձուլվածքներ:

g. Բազմակի խցման փականներ՝ ծորումը /հոսաթողումը/ հայտնաբերելու համար նախատեսված անցքերով, փականներ սիլֆոնային տեսակի խցանիչներով, հետադարձ (սևեռապնդման) փականներ կամ մեմբրանային փականներ, որոնցում բոլոր մակերևույթները, որոնք անմիջական շփման մեջ են գտնվում ռեակտորում մշակվող կամ պարունակվող քիմիկատների հետ, պատրաստված են հետևյալ նյութերից որևէ մեկով.

1. 25%-ից ավելի նիկել և 20%-ից ավելի քրոմ (ըստ կշռի) պարունակող համաձուլվածքներ,
2. Ֆտորպոլիմերներ,
3. Ապակիներ (ներառյալ ապակեպատ կամ արծնապատ ծածկույթները).
4. Նիկել կամ ավելի քան 40% (ըստ կշռի) նիկել պարունակող համաձուլվածքներ,
5. Տանտալ կամ տանտալային համաձուլվածքներ,
6. Տիտան կամ տիտանային համաձուլվածքներ, կամ
7. Ցիրկոնիում կամ ցիրկոնիումային համաձուլվածքներ
8. Նիոբիումի (կոլումբիումի) կամ նիոբիումի համաձուլվածքներ
9. Կերամիկական նյութեր, որոնք նշվում են ստորև.

a. Միլիկոնային կարբիդ՝ իր քաշով 80% կամ ավելի մաքրությամբ,

b. Ալյումինի օքսիդ (ալյումինա)՝ իր քաշով 99,9 % կամ ավելի մաքրությամբ,

c. Ցիրկոնիումի օքսիդ (ցիրկոնիա):

h. Բազմապատ խողովակաշարեր՝ ծորումը /հոսաթողումը/ հայտնաբերելու համար նախատեսված անցքերով, որոնցում բոլոր մակերևույթները, որոնք անմիջական շփման մեջ են գտնվում մշակվող կամ պարունակվող քիմիկատների հետ, պատրաստված են հետևյալ նյութերից որևէ մեկով.

1. 25%-ից ավելի նիկել և 20%-ից ավելի քրոմ (ըստ կշռի) պարունակող համաձուլվածքներ,
  2. Ֆտորպոլիմերներ,
  3. Ապակիներ (ներառյալ ապակեպատ կամ արծնապատ
-

---

ծածկույթները),

4. Գրաֆիտ,

5. Նիկել կամ ավելի քան 40% (ըստ կշռի) նիկել պարունակող համաձուլվածքներ,

6. Տանտալ կամ տանտալային համաձուլվածքներ,

7. Տիտան կամ տիտանային համաձուլվածքներ, կամ

8. Ցիրկոնիում կամ ցիրկոնիումային համաձուլվածքներ:

9. Նիոբիումի (կոլումբիումի) կամ նիոբիումի համաձուլվածքներ:

i. Բազմակի խցվածքով, մագնիսական շարժաբերով հերմետիկ պոմպեր, սիլֆոնային կամ դիաֆրագմային պոմպեր՝ արտադրողի հասկորոշումների համաձայն 0.6 մ<sup>3</sup>/ժամ-ից բարձր առավելագույն արտադրողականությամբ, կամ վակուումային պոմպեր՝ արտադրողի հասկորոշումների համաձայն 5 մ<sup>3</sup> /ժամ-ից բարձր առավելագույն արտադրողականությամբ (նորմալ ջերմաստիճանի (273 K (0 °C) և նորմալ ճնշման (101.3 կՊա) պայմաններում), որոնցում մշակվող քիմիկատների հետ անմիջական շփման մեջ գտնվող բոլոր մակերևույթները պատրաստված են հետևյալ նյութերից ցանկացածից.

1. 25%-ից ավելի նիկել և 20%-ից ավելի քրոմ (ըստ կշռի) պարունակող համաձուլվածքներ.

2. Կերամիկա

3. Ֆեռոսիլիցիում

4. Ֆտորպոլիմերներ

5. Ապակիներ (ներառյալ ապակեպատ կամ արծնապատ ծածկույթները)

6. Գրաֆիտ կամ ածխածնային գրաֆիտ

7. Նիկել կամ ավելի քան 40% (ըստ կշռի) նիկել պարունակող համաձուլվածքներ

8. Տանտալ կամ տանտալային համաձուլվածքներ

9. Տիտան կամ տիտանային համաձուլվածքներ, կամ

10. Ցիրկոնիում կամ ցիրկոնիումային համաձուլվածքներ

11. Նիոբիում (կոլումբիում) կամ նիոբիումի համաձուլվածքներ:

j. Վառարաններ 1C350 կետով վերահսկվող քիմիկատների այրման համար, որոնք ունեն թափոնների մատակարարման հատուկ նախագծված համակարգ և բեռնման-բեռնաթափման հատուկ մեխանիզմ, խցիկում 1273 K (1000 °C)-ից բարձր ջերմաստիճան, որոնցում թափոնային նյութերի հետ անմիջական շփման մեջ գտնվող թափոնների մատակարարման համակարգի բոլոր մակերևույթները կազմված են հետևյալ նյութերից որևէ մեկով կամ պատված են դրանցով.

1. 25%-ից ավելի նիկել և 20%-ից ավելի քրոմ (ըստ կշռի) պարունակող համաձուլվածքներ,

2. Կերամիկա,

3. Նիկել կամ ավելի քան 40% (ըստ կշռի) նիկել պարունակող համաձուլվածքներ:

---

---

Տեխնիկական ծանոթագրություն

Ածխածնային գրաֆիտը բաղադրանյութ է բաղկացած ամորֆ ածխածնից և գրաֆիտից, որտեղ գրաֆիտի պարունակությունը 8 տոկոս է կամ քաշով ավելի մեծ:

---

2B350, a 731010000  
841940000  
847982000

2B350, b 847982000  
847990960  
847990  
848690  
850870000

2B350, c 730900300  
731010000  
731100  
860900900  
860900

2B350, d 841950000

2B350, e 841940000

2B350, f 842230000

2B350, g 848180790  
848180870  
848180990

2B350, h 841990  
848690

2B350, i 841370890  
841381000  
841410  
841410200  
841410250  
841410810  
841410890

2B350, j 841780850

---



---

841790000  
851420  
841780200  
848610000  
848620900

---

2B351 Թունավոր գազերի հսկման համակարգեր, բացառությամբ 1A004 կետում նշվածների, և համապատասխան դետեկտորներ, որոնք ներառում են.

a. Անընդհատ գործողության համար նախագծված և 1C350 բաժնում նշված մարտական թունավոր ազդանյութերի կամ քիմիկատների հայտնաբերման համար պիտանի համակարգեր և դետեկտորներ, երբ նշված նյութերի խտությունը 0.3 մգ/լիտր.մ է կամ դրանից պակաս:

b. Դետեկտորներ, որոնք նախագծված են խոլինեստիրազ խմբի պրեպարատների օգնությամբ ֆոսֆորօրգանական միացությունների հայտնաբերման համար:

---

2B351, a 902710100  
902710900

2B351, b 902710100  
902710900

---

2B352 Կենսաբանական նյութերի մշակման համար նախատեսված սարքավորումներ, ինչպիսիք են.

a. Սարքավորումների հավաքակազմեր, որոնք ապահովում են կենսաբանական պաշտպանության բարձր և առավելագույն մակարդակ P3, P4:

*Տեխնիկական ծանոթագրություն. Պաշտպանության P3 կամ P4 մակարդակները (B13, B14, 13, 14) սահմանված են Առողջապահության համաշխարհային կազմակերպության <<Լաբորատոր կենսապաշտպանության ձեռնարկում>> (Ժնև, 2004թ. 3-րդ հրատարակություն):*

b. Ֆերմենտերներ, որոնք կարող են օգտագործվել պաթոգենային <<միկրոօրգանիզմների>>, վիրուսների կամ տոքսինների անընդհատ մշակման համար՝ առանց ակտիվների առաջացման ռիսկի, և ունեն 20 լիտր կամ ավելի լրիվ տարողություն:

*Տեխնիկական ծանոթագրություն. Ֆերմենտերները ներառում են կենսաառեակտորները, հեմոստատները և անընդհատ շրջատաշման համակարգերը:*

---

---

c. Կենտրոնախուսիչ սեպարատորներ /գտիչներ/, որոնք ապահովում են պաթոգենային մանրէների անընդհատ զատումը՝ առանց աէրոզոլների առաջացման ռիսկի, և օժտված են բոլոր հետևյալ բնութագրերով.

1. Արտադրողականությունը՝ 100 լ/ժամից ավելի,
2. Սարքավորումը լրիվ կամ մասնակիորեն պատրաստված է ողորկված չժանգոտվող պողպատից կամ նիկելից,
3. Երկշերտ կամ բազմաշերտ խցումային գոլորշային միջադիրներ, և
4. Գոլորշիով ախտահանման հնարավորություն՝ առանց նախնական քանդման:

*Տեխնիկական ծանոթագրություն. Կենտրոնախուսիչ սեպարատորները /գտիչները/ ներառում են դեկանտացման սարքավորումը:*

d. Ուղղահայաց (տանգենցիալ) հոսքում զտման սարքավորումներ օժտված հետևյալ բնութագրերով

1. Ուղղահայաց (տանգենցիալ) հոսքում զտման սարքավորումներ, որոնք նախատեսված են մանրէների, վիրուսների կամ տոքսինների անընդհատ զտման համար՝ առանց աէրոզոլների առաջացման ռիսկի, և օժտված են բոլոր հետևյալ բնութագրերով.

- a. Զտման մակերեսը՝ 1 քառ. մ-ից ավելի,
- b. Ունեն ստորև հատկանիշներից որևէ մեկը.
  1. Ունեն գոլորշով ախտահանման հնարավորություն՝ առանց նախնական քանդման,
  2. Օգտագործում են մեկ անգամվա օգտագործման ֆիլտրման հարմարանքներ:

*Տեխնիկական ծանոթագրություն*

*2B352.d.1.b. կետում մանրէազերծել նշանակում է սարքավորումից հեռացնել բոլոր կենսունակ բացիլներից՝ կամ ֆիզիկական (օրինակ գոլորշի) կամ քիմիական ներգործիչ նյութերի միջոցով: Վարակազերծել նշանակում է ոչնչացնել հնարավոր բացիլային վարակը սարքավորման մեջ քիմիական նյութերի կամ մանրէասպան ազդեցության միջոցով: Վարակազերծումը և մանրէազերծումը տարբերվում են սանիտացումից, վերջինս վերաբերում է մաքրման գործընթացներին, որոնք նպատակ ունեն պակասեցնել սարքավորումների բացիլային պարունակությունը առանց անպայմանորեն վերացնելու բոլոր միկրոբների վարակայնությունը և կենսունակությունը:*

2. *Խոռորնակային* (տանգենսային) հոսքի ֆիլտրման բաղադրիչներ (պրինակ մոդուլներ, տարրեր, կասետներ, փամփուշտներ, բլոկներ կամ թիթեղներ) որոնց ֆիլտրացիոն տարածքը հավասար է կամ ավելի մեծ է 0,2 մ<sup>2</sup> յուրաքանչյուր բաղադրիչի վրա և որոնք նախատեսված են

---

---

խոտորնակային (տանգենսային) հոսքի ֆիլտրմա սարքավորման համար, որոնք հասկորոշված են 2B352.d. կետում:

*Օանոթագրություն. 2B352A կետով չեն վերահսկվում հակադարձ օսմոսային սարքավորումները, ըստ արտադրողի հասկորոշման:*

e. Լիոֆիլային /լուծամետ/ չորացման սարքավորում, որի արտադրողականությունը կազմում է 10-ից մինչև 1000 կգ սառույց՝ 24 ժամվա ընթացքում:

f. Կենսաբանական պաշտպանության սարքավորում հետևյալ տեսակի.

1. պաշտպանական լրիվ կամ կիսա հագուստներ, կամ կնգուղներ, որոնք օդ են ստանում կապովի արտաքին օդի մատուցման ուղիով և գործում են դրական ճնշման տակ:

*Օանոթագրություն. 2B352.f.2. կետում նշված մեկուսացնող համակարգերն ընդգրկում են ճկուն մեկուսարանները, չորացնող բոքսերը, անաէրոբային /անօդակյաց/ խցիկները և պահպանման համար նախատեսված խցիկները:*

g. Աերոզոլային (ինհալիացիոն) խցիկներ՝ աերոզոլային միկրոբների, վիրուսների կամ տոքսինների հետազոտման համար՝ 1 խոր. մ կամ ավելի մեծ ծավալով:

---

2B352, a	841989300 846810000 846820000
2B352, b	841989300 846810000 846820000
2B352, c	842119700 848610000 848620900 848630900
2B352, d	842129000
2B352, e	841939
2B352, f,1	847989 848610000 848620900

---

	848630900
	848640000
	847989970
	850819000
	850860000
2B352, f,2	841480800
2B352, g	842489000
	842490000
	848620900
	848630900
<b>2C</b>	<b>Նյութեր</b>
	Բացակայում են
<b>2D</b>	<b>Ծրագրային ապահովում</b>
2D001	2A001 կամ 2B001-2B009 կետերով հսկվող սարքավորումների <<մշակման>>, <<արտադրություն>> կամ <<կիրառման>> համար հատուկ նախագծված կամ ձևափոխված <<ծրագրային ապահովում>>:
2D002	<p>&lt;&lt;Ծրագրային ապահովում&gt;&gt; էլեկտրոնային սարքերի համար, նույնիսկ եթե դրանք էլեկտրոնային սարքավորման կամ համակարգի մեջ են ներկատուցված, և նման սարքերին կամ համակարգերին հնարավորություն են տալիս գործել որպես &lt;&lt;թվային ծրագրային կառավարման&gt;&gt; բլոկներ, և ընդունակ են միաժամանակ կոորդինացնելու &lt;&lt;եզրագծային հսկողության&gt;&gt; ավելի քան չորս առանցքներ:</p> <p><i>Ծանոթագրություն 1. 2D002 կետով չի վերահսկվում այն &lt;&lt;ծրագրային ապահովումը&gt;&gt;, որը հատուկ նախագծված է կամ փոփոխված այնպիսի սարքեր աշխատացնելու համար, որոնք հատկորոշված չեն շրջ կատեգորիայով:</i></p> <p><i>Ծանոթագրություն 2. 2D002 կետով չի վերահսկվում այն &lt;&lt;ծրագրային ապահովումը&gt;&gt;, որը նախատեսված է 2B002 կետով հատկորոշված սարքավորման համար: Տես 2D001 կետը այն &lt;&lt;ծրագրային ապահովման&gt;&gt; համար, որը հատկորոշված է 2B002 կետով:</i></p>
2D101	<<Ծրագրային ապահովում>>, որը հատուկ մշակվել կամ ձևափոխվել է 2B104, 2B105, 2B109, 2B116, 2B117 կամ 2B119 - 2B122 կետերով հսկվող սարքավորումներում օգտագործելու համար:

---

Հ.Ծ. Տես նաև 9D004 կետը:

---

2D201 <<Ծրագրային ապահովում>>, որը հատուկ մշակվել կամ ձևափոխվել է 2B204, 2B206, 2B109, 2B207, 2B209, 2B219 կամ 2B227 կետերով հսկվող սարքավորումներում օգտագործելու համար:

---

2D202 2B201 կետով վերահսկվող սարքավորումների <<մշակման>>, <<արտադրություն>> կամ դրանցում <<օգտագործման>> համար հատուկ նախագծված կամ ձևափոխված <<ծրագրային ապահովում>>

---

2D351 <<Ծրագրային ապահովում>>, բացառությամբ 1D003 կետում նշվածների, որը հատուկ նախագծված է 2B351 կետում նշվող սարքավորումներում շահագործման համար:

---

**2E Տեխնոլոգիա**

---

2E001 <<Տեխնոլոգիաներ>>, որոնք, ընդհանուր տեխնոլոգիական ծանոթագրություններին համապատասխան, նախատեսված են 2A, 2B կամ 2D կետերով հսկվող սարքավորումների կամ <<ծրագրային ապահովման>> նյութերի մշակման համար:

---

2E002 <<Տեխնոլոգիաներ>>, որոնք, ընդհանուր տեխնոլոգիական ծանոթագրություններին համապատասխան, նախատեսված են 2A կամ 2B կետերով հսկվող սարքավորումների <<արտադրության>> համար:

---

2E003 Այլ <<տեխնոլոգիաներ>>, ինչպիսիք են.

a. Ինտերակտիվ գրաֆիկայի՝ որպես <<թվային ծրագրային կառավարման>> անբաժանելի մասի, մշակման համար նախատեսված <<տեխնոլոգիաներ>>՝ ծրագրի տարրերի նախապատրաստման կամ ձևափոխման համար,

b. մետաղամշակման արտադրական պրոցեսների՝ ստորև թվարկված տեխնոլոգիաները:

1. Հետևյալ պրոցեսներից ցանկացածի համար հատուկ նախագծված գործիքների, մամլակաղապարների կամ սեղմիչ հարմարանքների նախագծման <<տեխնոլոգիաներ>>.

a. <<Գերալաստիկ ձևավորում>>,

b. <<Դիֆուզիոն եռակցում>>, կամ

c. <<Անմիջական հիդրավլիկ մամլում>>:

2. Տեխնիկական տվյալներ, ներառյալ պրոցեսի իրագործման պարամետրերը և մեթոդը, որոնք օգտագործվում են ստորև թվարկված պրոցեսների կառավարման համար.

---

---

a. Այլումինային, տիտանային համաձուլվածքների կամ <<գերհամաձուլվածքների>> <<գերպլաստիկ ձևավորում>>.

1. Մակերևույթի նախապատրաստման վերաբերյալ տվյալներ,
2. Դեֆորմացիայի աստիճանի մասին տվյալներ,
3. Ջերմաստիճան,
4. Ճնշում:

b. <<Գերհամաձուլվածքների>> կամ տիտանային համաձուլվածքների <<դիֆուզիոն եռակցում>>.

1. Մակերևույթի նախապատրաստման վերաբերյալ տվյալներ,
2. Ջերմաստիճան,
3. Ճնշում:

c. Այլումինային կամ տիտանային համաձուլվածքների <<ուղղակի գործողության հիդրավլիկ մամլում>>.

1. Ճնշում,
2. Ցիկլի տևողություն:

d. Այլումինային, տիտանային համաձուլվածքների կամ <<գերհամաձուլվածքների>> <<տաք իզոստատիկ խտացում>>.

1. Ջերմաստիճան,
2. Ճնշում,
3. Ցիկլի տևողություն:

e. Հիդրավլիկ արտաձգիչ կաղապարման մեքենաների և համապատասխան մատրիցների <<մշակման>> կամ <<արտադրության>> <<տեխնոլոգիաներ՝ թռչող ապարատների>> իրանային կոնստրուկցիաների պատրաստման համար:

d. <<Տեխնոլոգիաներ>>՝ մեքենայական հրամանների գեներատորների (օրինակ՝ ծրագրի տարրերի) <<թվային ծրագրային կառավարման>> բլոկի ներսում գտնվող նախագծային տվյալների մշակման համար:

e. Ինտեգրացնող <<ծրագրային ապահովման>>, <<մշակման>>, <<տեխնոլոգիա՝ փորձագիտական համակարգում ներկառուցելու համար, որը գործարանային պայմաններում բարձրացնում է <<թվային ծրագրային կառավարման>> բլոկի օպերացիոն հնարավորությունները:

f. <<Տեխնոլոգիաներ>>՝ ստորև ներկայացված աղյուսակի <<Վերջնական ծածկույթ>> վերնագիրը կրող սյունակում (3) նշված ոչ օրգանական մակերևութային ծածկույթներում կամ

---

պատրաստվածքների մակերևույթի փոփոխմամբ ոչ օրգանական ծածկույթներում աղյուսակի <<Ենթաշերտեր>> սյունակում նշված ոչ էլեկտրոնային ենթաշերտերը (սուբստրատները) կիրառելու համար՝ աղյուսակի <<Ծածկույթապատման պրոցեսի անվանումը>> վերնագրով սյունակում նշված և տեխնիկական ծանոթագրություններում սահմանված պրոցեսի օգնությամբ:

Ծանոթագրություն. Աղյուսակը և տեխնիկական ծանոթագրությունը ներկայացված են 2E301 կետից հետո:

2E101	<<Տեխնոլոգիա>>, որը, ընդհանուր տեխնոլոգիական ծանոթագրություններին համապատասխան, նախատեսված է 2B004, 2B009, 2B104, 2B109, 2B116 2B119-ից 2B122 կամ 2D101 նշված սարքավորումներում կամ <<ծրագրային ապահովման>> մեջ օգտագործման համար:
2E201	<<Տեխնոլոգիա>>, որը, ընդհանուր տեխնոլոգիական ծանոթագրություններին համապատասխան, նախատեսված է 2A225, 2A226, 2B001, 2B006, 2B007.b., 2B007.c., 2B008, 2B009, 2B201, 2B204, 2B206, 2B207, 2B209.c., 2B225-2B232, 2D201 կամ 2D202 կետերում նշված սարքավորումներում կամ <<ծրագրային ապահովման>> մեջ օգտագործման համար:
2E301	2B350-2B352 կետերում թվարկված արտադրանքների <<օգտագործման>> համար պահաջվող <<տեխնոլոգիա>>:

### Ծածկույթի նստեցման տեխնիկական ընդունման աղյուսակ

1. Ծածկույթապատման պրոցեսի անվանումը (1)*	2. Ենթաշերտեր	3. Վերջնական ծածկույթ
A. Գոլորշու ֆազից քիմիական նստեցում (CVD)	<<Գերհամաձուլվածքներ>>  Կերամիկա (19) և ապակի՝ ընդլայնման փոքր գործակցով (14)  Ածխածին-ածխածին, կերամիկա և <<բաղադրանյութեր>> մետաղական <<մատրիցով	Ալյումինիդներ՝ ներքին ուղիների համար Միլիցիդներ Կարբիդներ Դիէլեկտրական շերտեր (15) Ալմաստ, Ալմաստանման ածխածին (17) Միլիցիդներ Կարբիդներ Դժվարահալ մետաղներ, Վերը թվարկված նյութերի խառնուրդներ (4) Դիէլեկտրական շերտեր (15) Ալյումինիդներ,

<p>B. Գուլորշու ֆազից ֆիզիկական նստեցում շոգեմշակմամբ (TE-PVD) գուլորշիների ֆիզիկական նստեցում (PVD)</p> <p>B.1 Էլեկտրոնային ճառագայթով նստեցում (EB-PVD)</p>	<p>Ցեմենտացված վոլֆրամի կարբիդ (16), սիլիցիումի կարբիդ (18)</p> <p>Մոլիբդեն և դրա համաձուլվածքները</p> <p>Բերիլիում և դրա համաձուլվածքները</p> <p>Տվիչների պատուհանների նյութեր (9)</p> <p>Տիտանի համաձուլվածքներ (13)</p> <p>&lt;&lt;Գերհամաձուլվածքներ&gt;&gt;</p>	<p>Ալյումինիդների համաձուլվածքներ (2), Բորի նիտրիդ Կարբիդներ, Վոլֆրամ, Վերը թվարկված նյութերի խառնուրդներ (4), Դիլեկտրական շերտեր (15) Դիլեկտրիկների շերտեր (15) Դիլեկտրական շերտեր (15) Բորիդներ Բերիլիում Դիլեկտրական շերտեր (15)</p> <p>Բորիդներ Նիտրիդներ</p> <p>Միլիցիոնումի համաձուլվածքներ Ալյումինիդի համաձուլվածքներ (2) MCrAlX (5) Ցիրկոնիումի փոփոխված տեսակներ (12) Միլիցիդներ Միլիցիդներ Ալյումինիդներ Վերը թվարկված նյութերի խառնուրդներ (4)</p>
---	--	--

1. Ծածկույթապատման պրոցեսի անվանումը (1)*	2. Տակդիրներ	3. Վերջնական ծածկույթ
<p>B1. (շարունակություն)</p>	<p>Կերամիկա և ապակի՝ ընդլայնման փոքր գործակցով (14)</p> <p>Կոռոզիակայուն պողպատներ (7)</p> <hr/> <p>Ածխածին-ածխածին, կերամիկա և &lt;&lt; բաղադրանյութեր &gt;&gt; մետաղական &lt;&lt;մատրիցով&gt;&gt;</p> <p>Ցեմենտացված վոլֆրամի կարբիդ (16), սիլիցիումի կարբիդ</p>	<p>Դիլեկտրական շերտեր (15) MCrAlX (5) Ցիրկոնիումի փոփոխված տեսակներ (12) Վերը թվարկված նյութերի խառնուրդներ (4)</p> <p>Միլիցիդներ Կարբիդներ Դժվարահալ մետաղներ, Վերը թվարկված նյութերի խառնուրդներ (4), Դիլեկտրական շերտեր (15), Բորի նիտրիդ Կարբիդներ Վոլֆրամ Վերը թվարկված նյութերի խառնուրդներ (4)</p>



<p>B.2 Գոլորշու ֆազից ֆիզիկական նստեցում իոնա-դիմադրական տաքացման միջոցով (իոնային զավանակյան ծածկույթ)</p>	<p>Մոլիբդեն և դրա համաձուլվածքները Բերիլիում և դրա համաձուլվածքները</p> <p>Տվիչների պատուհանների նյութեր (9)</p> <p>Տիտանային համաձուլվածքներ (13)</p> <p>Կերամիկա և ապակի՝ ընդլայնման փոքր գործակցով (14)</p> <p>Ածխածին ածխածին, կերամիկա և &lt;&lt;բաղադրանյութեր&gt;&gt; մետաղական &lt;&lt;մատրիցով&gt;&gt;</p>	<p>Դիէլեկտրական շերտեր (15), Դիէլեկտրական շերտեր (15), Դիէլեկտրական շերտեր (15) Բորիդներ Բերիլիում Դիէլեկտրական շերտեր (15) Բորիդներ, նիտրիդներ</p> <p>Դիէլեկտրական շերտեր (15) Ալմաստանման ածխածին (17)</p> <p>Դիէլեկտրական շերտեր (15)</p>
---	---	--

1. Ծածկույթապատման պրոցեսի անվանումը (1)*	2. Տակդիրներ	3. Վերջնական ծածկույթ
<p>B.2 (շարունակություն)</p> <p>B.3 Գոլորշու ֆազից ֆիզիկական նստեցում. գոլորշիացում լազերով</p> <p>B.4 Գոլորշու ֆազից ֆիզիկական նստեցում.</p>	<p>Ցեմենտացված վոլֆրամի կարբիդ (16), սիլիցիումի կարբիդ</p> <p>Մոլիբդեն և դրա համաձուլվածքները</p> <p>Բերիլիում և դրա համաձուլվածքները</p> <p>Տվիչների պատուհանների նյութեր (9)</p> <p>Կերամիկա և ապակի՝ ընդլայնման փոքր գործակցով (14)</p> <p>Ածխածին ածխածին, կերամիկա և &lt;&lt;բաղադրանյութեր&gt;&gt; մետաղական &lt;&lt;մատրիցով&gt;&gt;</p> <p>Ցեմենտացված վոլֆրամի կարբիդ (16), սիլիցիումի կարբիդ</p> <p>Մոլիբդեն և դրա համաձուլվածքները</p> <p>Բերիլիում և դրա համաձուլվածքները</p> <p>Տվիչների պատուհանների նյութեր (9)</p>	<p>Դիէլեկտրական շերտեր (15)</p> <p>Դիէլեկտրական շերտեր (15)</p> <p>Դիէլեկտրական շերտեր (15)</p> <p>Դիէլեկտրական շերտեր (15) Ալմաստանման ածխածին (17)</p> <p>Սիլիցիդներ Դիէլեկտրական շերտեր (15) Ալմաստանման ածխածին (17)</p> <p>Դիէլեկտրական շերտեր (15)</p> <p>Դիէլեկտրական շերտեր (15)</p> <p>Դիէլեկտրական շերտեր (15) Ալմաստանման ածխածին (17)</p> <p>Սիլիցիդների համաձուլվածքներ, Ալյումինիդների համաձուլվածքներ (2)</p>

<p>կատողա-աղեղային պարպում</p>	<p>&lt;&lt;Գերհամաձուլվածքներ&gt;&gt;</p>	<p>MCrAlX (5) Բորիդներ Կարբիդներ Նիտրիտներ Ալմաստանման ածխածին (17)</p>
<p>C. Ցեմենտացում ածխածնավորիչների օգտագործմամբ (առանց ածխածնավորիչների օգտագործման ցեմենտացման վերաբերյալ տես A կետը)</p>	<p>Պոլիմերներ (11) և &lt;&lt;բաղադրանյութեր&gt;&gt; մետաղական &lt;&lt;մատրիցով</p>	<p>Միլիցիդներ Կարբիդներ Վերը թվարկված նյութերի խառնուրդներ (4) Միլիցիդներ, այլումինիդներ, Այլումինիդների համաձուլվածքներ (2)</p>
<p>D. Պլազմային փոշեպատում</p>	<p>Ածխածին-ածխածին, կերամիկա և &lt;&lt;բաղադրանյութեր&gt;&gt; մետաղական &lt;&lt;մատրիցով&gt;&gt;</p>	<p>Միլիցիդներ, Օքսիդներ MCrAlX (5), Ցիրկոնիումի փոփոխված տեսակներ (12), Վերը թվարկված նյութերի խառնուրդներ (4) Էրոզիակայուն նիկել-գրաֆիտ, Էրոզիակայուն նիկել-քրոմ- այլումին-բենտոնիտ, Էրոզիակայուն-այլումին- սիլիցիում-պոլիէթեր, այլումինիդների համաձուլվածքներ (2) MCrAlX (5), ցիրկոնիումի փոփոխված տեսակներ (12), Վերը թվարկված նյութերի խառնուրդներ (4)</p>
<p>D. (շարունակություն)</p>	<p>Այլումինիդների համաձուլվածքներ (2)</p>	<p>Այլումինիդներ, սիլիցիդներ, կարբիդներ</p>
<p>D. (շարունակություն)</p>	<p>Դժվարահալ մետաղներ և համաձուլվածքներ (8)</p>	<p>MCrAlX (5), Ցիրկոնիումի փոփոխված տեսակներ (12), Վերը թվարկված նյութերի խառնուրդներ (4)</p>
<p>D. (շարունակություն)</p>	<p>Կոռոզիակայուն պողպատներ (7)</p>	<p>Կարբիդներ, այլումինիդներ, Միլիցիդներ, այլումինիդների համաձուլվածքներ (2) Էրոզիակայուն նիկել-գրաֆիտ, Էրոզիակայուն նիկել-քրոմ- այլումին-բենտոնիտ, Էրոզիակայուն-այլումին- սիլիցիում-պոլիէթեր</p>
<p>D. (շարունակություն)</p>	<p>Արտանային համաձուլվածքներ (13)</p>	<p>Արտանային համաձուլվածքներ (13)</p>

<p>E. Կախույթի /սուսպենզիայի/ (ապարախյուսի /շլամ/ նստեցում</p>	<p>Դժվարահալ մետաղներ</p>	<p>Դյուրահալ սիլիցիդներ, Դյուրահալ ալյումինիդներ (բացի նյութերից ջերմակայուն տարրերի համար)</p> <p>Սիլիցիդներ Կարբիդներ Վերը թվարկված նյութերի խառնուրդներ (4)</p>
<p>F. Մետաղական փոշեպատում</p>	<p>Ածխածինաձխածին, կերամիկա և &lt;&lt;բաղադրանյութեր&gt;&gt; մետաղական &lt;&lt;մատրիցով&gt;&gt;</p> <p>&lt;&lt;Գերհամաձուլվածքներ&gt;&gt;</p>	<p>Սիլիցիդների համաձուլվածքներ, Ալյումինիդների համաձուլվածքներ (2) Ազնիվ մետաղներով ձևափոխված ալյումինիդներ (3) MCrAlX (5) Ցիրկոնիումի փոփոխված տեսակներ (12) Պլատին, վերը թվարկված նյութերի խառնուրդներ (4)</p>
<p>F. (շարունակություն)</p>	<p>Կերամիկա և ապակի՝ ընդլայնման փոքր գործակցով (14)</p> <p>Տիտանային համաձուլվածքներ (13)</p> <p>Ածխածինաձխածին, կերամիկա և &lt;&lt;բաղադրանյութեր&gt;&gt; մետաղական &lt;&lt;մատրիցով&gt;&gt;</p> <p>Ցեմենտացված վոլֆրամի կարբիդ (16), սիլիցիումի կարբիդ</p> <p>Մոլիբդեն և դրա</p>	<p>Սիլիցիդներ, պլատին, վերը թվարկված նյութերի խառնուրդներ (4), դիէլեկտրական շերտեր (15), ալմաստանման ածխածին (17)</p> <p>Բորիդներ, նիտրիդներ, օքսիդներ, սիլիցիդներ, ալյումինիդներ, ալյումինիդների համաձուլվածքներ (2), կարբիդներ</p> <p>Սիլիցիդներ, կարբիդներ, դժվարահալ մետաղներ, վերը թվարկված նյութերի խառնուրդներ (4), դիէլեկտրական շերտեր (15), բորի նիտրիդ</p> <p>Կարբիդներ, վոլֆրամ, վերը թվարկված նյութերի խառնուրդներ (4), դիէլեկտրիկների շերտեր (15), բորի նիտրիդ</p> <p>Դիէլեկտրական շերտեր (15)</p> <p>Բորիդներ, դիէլեկտրական շերտեր (15) Բերիլիում Դիէլեկտրական շերտեր (15), ալմաստանման ածխածին (17)</p>

<p>G. Իոնային իմպլանտացիա</p>	<p>համաձուլվածքները</p> <p>Բերիլիում և դրա համաձուլվածքները</p> <p>Տվիչների պատուհանների նյութեր (9)</p> <p>Դժվարահալ մետաղներ և համաձուլվածքներ (8)</p> <p>Ջրակայուն մետաղներ</p> <p>Աիտանային համաձուլվածքներ (13)</p> <p>Բերիլիում և դրա համաձուլվածքները</p> <p>Ցեմենտացված վոլֆրամի կարբիդ (16)</p>	<p>Ալյումինիդներ, սիլիցիդներ, օքսիդներ, կարբիդներ</p> <p>Քրոմի, տանտալի կամ նիոբիումի (կոլումբիում) հավելանյութեր</p> <p>Բորիդներ, նիտրիդներ</p> <p>Կարբիդներ, նիտրիդներ</p>
-------------------------------	--	--

*\* Տես սույն աղյուսակին կից ծանոթագրության կետը, որը համապատասխանում է փակագծերում նշվածին:*

### **Ծածկույթի նստեցման տեխնիկական ընդունման աղյուսակին կից ծանոթագրություններ**

1. <<Ծածկույթապատման պրոցես>> տերմինը վերաբերում է ինչպես սկզբնական ծածկույթապատմանը, այնպես էլ արդեն պատված ծածկույթի թերությունների ուղղման և բարելավման աշխատանքներին:
2. <<Ծածկույթապատում ալյումինիդի համաձուլվածքներով>> տերմինն վերաբերում է մեկանգամյա կամ բազմակի ծածկույթապատմանը, որի ընթացքում ծածկույթը նստեցվում է տարրի կամ տարրերի վրա ալյումինիդացման պրոցեսից առաջ կամ դրա ընթացքում, անգամ եթե այդ տարրերի վրա ծածկույթներ են նստեցվել այլ պրոցեսների միջոցով: Այնուամենայնիվ, դա բացառում է փաթեթային ցեմենտացման միաքայլ պրոցեսի բազմակի օգտագործումը՝ ալյումինիդների համաձուլվածքներ ստանալու համար:
3. <<Ծածկույթապատում ազնիվ մետաղներով ձևափոխված ալյումինիդներով>> տերմինն ընդգրկում է ծածկույթների բազմաքայլ պատումը, որտեղ ազնիվ մետաղը կամ մետաղները մինչ այդ պատված են եղել այլ պրոցեսով՝ նախքան ալյումինիդով պատման մեթոդի կիրառումը:
4. Խառնուրդները ներառում են ներծծող նյութ, պրոցեսի ջերմաստիճանը հավասարեցնող բաղադրանյութեր, հավելանյութեր ու բազմաշերտ նյութեր, և ստացվում են աղյուսակում նկարագրված ծածկույթապատման մեկ կամ մի քանի պրոցեսների ընթացքում:

5. MCrAlX-ը համապատասխանում է ծածկույթի բարդ բաղադրությանը, որտեղ M-ը նշանակում է կոբալտ, երկաթ, նիկել կամ դրանց համադրությունները, X-ը նշանակում է հաֆնիում, իտրիում, սիլիցիում, տանտալ՝ ցանկացած քանակությամբ, կամ համապատասխանում է 0.01%-ը գերազանցող (ըստ կշռի) այլ հատուկ խառնված հավելանյութերին՝ ցանկացած համամասնություններով և համակցություններով, բացի.

a. CoCrAlY – ծածկույթներից, որոնք պարունակում են 22%-ից պակաս (ըստ կշռի) քրոմ, 7%-ից պակաս (ըստ կշռի) ալյումին և 2%-ից պակաս (ըստ կշռի) իտրիում, կամ

b. CoCrAlY – ծածկույթներից, որոնք պարունակում են 22-24% (ըստ կշռի) քրոմ, 10-12% (ըստ կշռի) ալյումին և 0.5-0.7% (ըստ կշռի) իտրիում, կամ

c. NiCrAlY – ծածկույթներից, որոնք պարունակում են 21-23% (ըստ կշռի) քրոմ, 10-12% (ըստ կշռի) ալյումին և 0.9-1.1% (ըստ կշռի) իտրիում:

6. <<Ալյումինային համաձուլվածքներ>> տերմինը համապատասխանում է այն համաձուլվածքներին, որոնց՝ խզման նկատմամբ ամրության սահմանային արժեքը հավասար է կամ գերազանցում է 190 ՄՊա՝ չափված 293 K (20 oC) ջերմաստիճանի պայմաններում:

7. <<Կոռոզիակայուն պողպատ>> տերմինը վերաբերում է Երկաթի և պողպատի ամերիկյան ինստիտուտի (American Iron and Steel Institute (AISI) ) ստանդարտ 300-ով կամ ազգային ստանդարտներով պողպատների նկատմամբ սահմանված պահանջներին համապատասխանող պողպատներին:

8. Դժվարահալ մետաղների կարգին են դասվում հետևյալ մետաղները և դրանց համաձուլվածքները՝ նիոբիում, կոլումբիում, մոլիբդեն, վոլֆրամ և տանտալ:

9. Տվիչների պատուհանների նյութեր են՝ ալյումինը (ալյումինի օքսիդը), սիլիցիումը, գերմանիումը, ցինկի սուլֆիդը, ցինկի սելենիդը, հալիումի արսենիդը, ալմաստը, հալիումի ֆոսֆիդը, շափյուղան, որոշ հալոգենային մետաղներ (յոդային կալիումը, կալիումի ֆտորիդը), իսկ 40 մմ-ից ավելի տրամագծով տվիչների պատուհանների համար՝ թալիումի բրոմիդը և թալիումի քլորոբրոմիդը:

10. Պինդ պրոֆիլների թևերի միաքայլ փաթեթային ցեմենտացման <<տեխնոլոգիան>> չի ենթարկվում սահմանափակման ըստ Կատեգորիա 2-ի:

11. Պոլիմերները ներառում են պոլիամիդներ, պոլիէթերներ, պոլիսուլֆիդներ, պոլիկարբոնատներ և պոլիուրետաններ:

12. <<Ցիբկոնիումի ձևափոխված տեսակներ>> տերմինը նշանակում է ցիբկոնիում՝ դրանում խառնված այլ մետաղների օքսիդների հավելանյութերի հետ միասին (ինչպիսիք են կալցիումի, մագնեզիումի իտրիումի, հաֆնիումի, հազվագյուտ հողերի մետաղների օքսիդները)՝ որոշակի բյուրեղագիտական ֆազերի և խառնման ֆազի կայունության պայմաններին համապատասխան:

13. <<Տիտանային համաձուլվածքներ>> տերմինն այստեղ վերաբերում է օդատիեզերական նպատակների համար օգտագործվող համաձուլվածքներին, որոնց խզման նկատմամբ ամրության սահմանային արժեքը հավասար է կամ գերազանցում է 900 ՄՊա՝ չափված 293 K (20 oC) ջերմաստիճանի պայմաններում:

14. <<Ընդլայնման փոքր գործակից ունեցող ապակիներ>> սահմանվում են որպես այն ապակիները, որոնք ունեն  $1 \times 10^{-7} \text{ կ}^{-1}$  կամ դրանից փոքր ջերմաստիճանային ընդլայնման գործակից՝ չափված 293 K (20 oC) ջերմաստիճանի պայմաններում:

15. Դիէլէկտրիկ շերտավոր ծածկույթները (դիէլէկտրիկների շերտերը) վերաբերում են բազմաշերտ մեկուսացնող նյութերին, որոնցում կոնստրուկցիայի ինտերֆերենցային հատկությունները զուգակցվում են անդրադարձման տարբեր ինդեքսների հետ, որն օգտագործվում է տարբեր ընդգրկույթներում ալիքների անդրադարձման, փոխանցման կամ կլանման համար: Դիէլէկտրիկ շերտավոր ծածկույթները կազմված են դիէլէկտրիկի չորս և ավելի շերտերից կամ դիէլէկտրիկ մետաղ <<բաղադրյալի>> շերտերից:

16. Ցեմենտացված վոլֆրամի կարբիդը չի ընդգրկում մետաղի կտրման և ձևակադապարման համար կիրառվող նյութերը, որոնք կազմված են վոլֆրամի կարբիդից/(կոբալտ, նիկել), տիտանի կարբիդից/(կոբալտ, նիկել), քրոմի կարբիդից/(նիկել-քրոմ) և քրոմի կարբիդից/նիկել:

17. Հսկողության ենթակա չեն հետևյալ օբյեկտների՝ ավաստանման ածխածնով ծածկույթապատման <<տեխնոլոգիաները>>.

մագնիսական սկավառակներ և գլխիկներ, պոլիկարբոնատային ոսպնյակներ, մեկանգամյա օգտագործման ապրանքների արտադրության սարքավորումներ, հացաթխման սարքավորումներ, ծորակների փականներ, բարձրախոսների ձայնային /ակուստիկական/ դիաֆրագմեր, մեքենայի շարժիչների մասեր, հատող գործիքներ և կտրիչներ, դրոշմիչ-մամլիչ գործիքների դրոշմներ,բարձրորակ ոսպնյակներ՝ ֆոտոխցիկների, կինոխցիկների և հեռադիտակների համար, գործավարության ավտոմատացման սարքավորումներ, բժշկական սարքավորումների լսափողներ:

18. Միլիցիումի կարբիդը չի ընդգրկում կտրիչների, այդ թվում՝ ձևավոր կտրիչների նյութերը:

19. Տվյալ կետում նշված կերամիկական նյութերը չեն ընդգրկում այն կերամիկական նյութերը, որոնք պարունակում են 5% (ըստ կշռի) կամ ավելի կավահող կամ ցեմենտ թե որպես ինքնուրույն բաղադրատարրեր, և թե՛ որպես համակցություններ:

Աղյուսակի <<Ծածկույթապատման պրոցեսի անվանումը>> սյունակում ներկայացված պրոցեսները որոշվում են հետևյալ ձևով.

a. Գոլորշիների քիմիական նստեցումը (CVD) հանդիսանում է զուտ արտաքին ծածկույթի պատման պրոցես կամ ծածկույթի պատման պրոցես՝ պատվող մակերևույթի ձևափոխմամբ, երբ մետաղը, համաձուլվածքը, բաղադրանյութը, դիէլէկտրիկը կամ կերամիկական կիրառվում են տաքացված պատրաստվածքի վրա: Գազային ռեակտիվները քայքայվում են կամ միանում են արտադրանքի մակերևույթի վրա, ինչի արդյունքում վերջինիս վրա գոյանում են ցանկալի տարրերը, համաձուլվածքները կամ կոմպաունդները /մեկուսախառնուրդները/: Նման քայքայման կամ քիմիական ռեակցիայի համար անհրաժեշտ էներգիան կարող է ապահովվել պատրաստվածքը պլազմային պարպումով կամ <<լազերի>> ճառագայթով տաքացնելու հաշվին:

*Հ.Օ. 1. Գոլորշիների քիմիական նստեցումը ներառում է հետևյալ պրոցեսները. ծածկույթի ոչ փաթեթային պատումը՝ ուղղորդված գազային հոսքով, գոլորշիների բաբախող քիմիական նստեցումը, կառավարելի ջերմային*

*Ծածկույթապատումը՝ միջուկային տրոհմամբ, կիրառելով պլազմայի հզոր հոսք, կամ գոլորշիների քիմիական նստեցումը պլազմայի մասնակցությամբ:*

*Հ.Օ. 2. <<Փաթեթ>> նշանակում է մի քանի բաղադրամասերից կազմված, փոշու մեջ ընկղմված ենթաշերտ:*

*Հ.Օ. 3. Ոչ փաթեթային պրոցեսում օգտագործվող գազային արտադրանքները (գոլորշիներ, ռեազենտներ) կիրառվում են մի քանի բազային ռեակցիաների և պարամետրերի հետ միասին, ինչպես օրինակ՝ փաթեթային ցեմենտացումը, բացի այն դեպքից, երբ արտադրանքի վրա ծածկույթը կիրառվում է առանց փոշու խառնուրդի հետ շփման:*

b. Գոլորշու ֆազից ֆիզիկական նստեցում՝ դիմադրական տաքացման միջոցով իոնացմամբ (TE-PVD). դա գուտ արտաքին ծածկույթապատման պրոցես է՝ 0.1 Պա-ից ցածր ճնշում ունեցող վակուումում, երբ ջերմային էներգիայի աղբյուրն օգտագործվում է կիրառվող նյութը գոլորշու վերածելու համար: Պրոցեսի արդյունքում խտուցքը /կոնդենսատը/ կամ ծածկույթը նստեցվում է արտադրանքի մակերևույթի համապատասխան մասի վրա:

Նստեցման պրոցեսի ընթացքում գազերի ավելացումը վակուումային խցիկում պարզապես տվյալ պրոցեսի ձևափոխությունն է:

Տվյալ պրոցեսի ձևափոխությունների մեծ մասին բնորոշ է նաև իոնային կամ էլեկտրոնային ճառագայթման կամ պլազմայի օգտագործումը՝ ծածկույթապատման ակտիվացման կամ այդ պրոցեսում մասնակցության համար: Մոնիտորների օգտագործումը՝ պրոցեսի ընթացքում օպտիկական բնութագրերի կամ ծածկույթի հաստության չափումն ապահովելու համար, կարող է դիտվել որպես տվյալ պրոցեսին բնորոշ հատկություն:

Յուրահատուկ են համարվում դիմադրական տաքացման միջոցով՝ իոնացմամբ, գոլորշիների ֆիզիկական նստեցման (TE-PVD) հետևյալ պրոցեսները.

1. Էլեկտրոնաճառագայթային ֆիզիկական նստեցում. պատրաստվածքի վրա կիրառվող նյութի տաքացման և գոլորշիացման համար օգտագործվում է էլեկտրական ճառագայթը.

2. Իոնադիմադրողական տեսակի ֆիզիկական նստեցման պրոցեսը որպես ջերմության աղբյուր օգտագործում է էլեկտրական դիմադրությունը, բախվող իոնային փնջերի հետ համասեղ՝ ծածկույթի նյութի գոլորշիների միասեռ և հսկվող հոսքի առաջացման նպատակով.

3. Լազերային գոլորշիացում, որի դեպքում ծածկը ձևավորող նյութի տաքացման համար օգտագործվում է <<լազերի>> իմպուլսային կամ անընդհատ ճառագայթը:

4. Կատոդային աղեղի կիրառմամբ ծածկույթի ձևավորման պրոցեսը ծախսվող կատոդն օգտագործում է որպես ծածկույթը ձևավորող նյութ, և կատոդի մակերևույթի վրա ունի հաստատված աղեղային պարպում, որը գոյանում է հողակցված գործարկման սարքի (տրիգերի) հետ վայրկյանական շփումից հետո:

4. <<Տեխնոլոգիաներ>>՝ <<սպեկտրի ընդլայնման>>, ներառյալ <<հաճախականության թռիչքաձև վերալարքի>> մեթոդներն օգտագործող սարքավորումների մշակման համար:

c. <<Տեխնոլոգիաներ>>, որոնք, ընդհանուր տեխնոլոգիական ծանոթագրության համաձայն, նախատեսված են հետևյալի <<մշակման>> կամ <<արտադրության>> համար:

1. Թվային տեխնոլոգիայի վրա հենվող սարքավորումներ՝ նախատեսված 15 Գբիտ/վրկ-ը գերազանցող <<թվային տվյալների փոխանցման ընդհանուր արագությամբ>> աշխատանքի համար:

*Տեխնիկական ծանոթագրություն:*

*Միացնող սարքավորման համար <<ընդհանուր թվային փոխանցման մակարդակը>> չափվում է ամենաարագ պորտով կամ գծով:*

2. Լազեր օգտագործող սարքավորումներ, որոնք ունեն հետևյալը.

a. 1750 նմ-ից ավելի ալիքային երկարություն,

b. Ընդունակ են իրականացնելու <<օպտիկական ուժեղացում>>

պրագեոդիմով ակտիվացող ֆտորային մանրաթելի

ուժեղացուցիչների (PDFFA) միջոցով, կամ

c. օգտագործում են կոհերենտ օպտիկական փոխանցման կամ կոհերենտ օպտիկական հայտնաբերման տեխնիկան (որը հայտնի է նաև որպես օպտիկական հետերոդինի կամ հոմոդինի տեխնիկա), կամ

d. Օգտագործում են կոհերենտ օպտիկական փոխանցման տեխնոլոգիա միաժամանակ 8 և ավելի անկախ ուղիներով:

e. Օգտագործում են անալոգային տեխնիկա և ունեն 2,5 ԳՀց-ն գերազանցող թողանցման շերտի լայնություն:

*Ծանոթագրություն. 5E001.c.2.e. կետով չեն հսկվում կոմերցիոն հեռուստահամակարգերի <<մշակման>> համար հատուկ*

---

---

*նախագծված սարքավորումները:*

3. <<Օպտիկական կոմուտացիա>> օգտագործող սարքավորումներ:

4. Ռադիոսարքավորումներ, որոնք ունեն հետևյալ բնութագրերից որևէ մեկը.

- a. Ունեն 256 մակարդակից բարձր քառակուսացումային լայնության մոդուլյացիա, կամ
- b. Աշխատում են մուտքային և ելքային ազդանշանի 31,8 ԳՀց-ից բարձր հաճախականություններում, կամ

Շանթագրություն. 5E001.c.4.b. կետով չեն վերահսկվում այն <<տեխնոլոգիաները>>, որոնք նախատեսված են ռադիոհաղորդակցության ծառայությունների, սակայն ոչ՝ ռադիո ալիքների որոշման նպատակով ցանկացած հաճախականությամբ աշխատանքի համար նախագծված կամ փոփոխված սարքավորումների մշակման կամ արտադրության համար:

c. Աշխատում են 1,5 ՄՀց - 87,5 ՄՀց հաճախականությունների տիրույթում և ներառում են միջամտող ազդանշանի 15 դԲ-ից բարձր խլացում ապահովող ադապտացնող եղանակներ,

5. Սարքավորումներ, որոնք աշխատում են անկախ ռեժիմում և ապահովում <<ընդհանուր կապուղային ազդանշանում>>, կամ

6. Շարժական սարքավորումներ, որոնք օժտված են ստորև նշված բոլոր հատկանիշներով.

a. Աշխատում են օպտիկական ալիքային երկարության տակ, որը մեծ է կամ հավասար 200 նմ-ին և փոքր է կամ հավասար 400 նմ-ին, և

b. Աշխատում են որպես ,լոկալ ցանցե,

d. <<Տեխնոլոգիաներ>>, որոնք, <<միկրոալիքային մոնոլիտային ինտեգրված շղթայի (MMIC) հոսանքային ուժեղացուցիչների վերաբերյալ ընդհանուր տեխնոլոգիական ծանոթագրության համաձայն, հատուկ նախատեսված են հեռահաղորդակցությունների համար և ունեն հետևյալ հատկանիշներից որևէ մեկը.

1. Գնահատված են 3,2 ԳՀց-ից մինչև 6 ԳՀց հաճախականությունների շերտում և 4 վ (36 dBm) միջին ելքային հոսանքի պայմաններում աշխատանքի համար, երբ

---

---

<<հաճախականությունների շերտի հարաբերական լայնությունը>> գերազանցում է 15%-ը,

2. Գնահատված են 16 ԳՀց-ից մինչև ներառյալ 31,8 ԳՀց հաճախականություններով և 1 վ (30 dBm) գերազանցող միջին ելքային հոսանքի պայմաններում աշխատանքի համար, երբ <<հաճախականությունների շերտի հարաբերական լայնությունը>> գերազանցում է 10%-ը,

3. Գնահատված են 6 ԳՀց-ից մինչև ներառյալ 16 ԳՀց հաճախականություններով և 0,8 վ (29 dBm) գերազանցող միջին ելքային հոսանքի պայմաններում աշխատանքի համար, երբ <<հաճախականությունների շերտի հարաբերական լայնությունը>> գերազանցում է 10%-ը,

4. Գնահատված են 31,8 ԳՀց-ից մինչև ներառյալ 37,5 ԳՀց հաճախականություններով աշխատանքի համար,

5. Գնահատված են 37,5 ԳՀց-ից մինչև ներառյալ 43,5 ԳՀց հաճախականություններով և 0,25 վ (24 dBm) գերազանցող միջին ելքային հոսանքի պայմաններում աշխատանքի համար, երբ <<հաճախականությունների շերտի հարաբերական լայնությունը>> գերազանցում է 10%-ը, կամ

6. Գնահատված են 43,5 ԳՀց-ը գերազանցող հաճախականություններով աշխատանքի համար,

e. <<Տեխնոլոգիաներ>>, որոնք, հատուկ հեռահաղորդակցությունների համար նախատեսված էլեկտրոնային սարքերի և սխեմաների մշակման կամ արտադրության վերաբերյալ ընդհանուր տեխնոլոգիական ծանոթագրության համաձայն, պարունակում են <<գերհաղորդիչ>> նյութերից արտադրված բաղադրիչներ, որոնցից առնվազն մեկի <<գերհաղորդչային>> բաղադրամասերը հատուկ նախատեսված են <<կրիտիկական ջերմաստիճան՝ $T_c$ -ից ցածր ջերմաստիճանում աշխատանքի համար, և որոնք ունեն հետևյալ հատկանիշներից որևէ մեկը.

1. Մեկ սելեկտորի հաշվով  $10^{-14}$  ջ-ից ցածր հոսանքի զրում (վատերով) և մեկ սելեկտորի հաշվով հապաղման ժամանակ (վայրկյաններով) ունեցող և <<գերհաղորդիչ>> սելեկտորներ ունեցող թվային սխեմաների համար նախատեսված հոսանքի կոմուտատոր, կամ

2. Հաճախականության ընտրությունը Q-արժեքներով (արդյունավետությամբ) ռեզոնանսային կոնտուրների վրա հիմնվող

---



---

բոլոր հաճախականություններում գերազանցում է 10 000-ը:

---

5E101 <<Տեխնոլոգիաներ>>, որոնք, ընդհանուր տեխնոլոգիական ծանոթագրության համաձայն, նախատեսված են 5A101 կետով վերահսկվող սարքավորումների <<մշակման>>, <<արտադրության>> կամ <<օգտագործման>> համար:

---

## Մաս 2.

### <<Ինֆորմացիայի պաշտպանությունը

Ծանոթագրություն 1. <<Սարքավորումներին>>, <<ծրագրային ապահովմանը>>, համակարգերին, հատուկ նշանակության <<էլեկտրոնային հավաքվածքներին>>, մոդուլներին, ինտեգրալային սխեմաներին, բաղադրիչներին և այլ սարքավորումներին վերաբերող <<ինֆորմացիայի պաշտպանության>> վերահսկողական կարգավիճակը որոշվում է Կատեգորիա 5-ի Մաս 2-ի համաձայն, նույնիսկ այն դեպքում, երբ դրանք հանդիսանում են այլ սարքավորումների բաղադրիչներ կամ <<էլեկտրոնային հավաքվածքներ>>

Ծանոթագրություն 2. Կատեգորիա 5-ի Մաս 2-ով չեն հսկվում այն արտադրանքները, որոնք փոխադրվում են օգտագործողի կողմից՝ անձնական օգտագործման համար:

Ծանոթագրություն 3. Գաղտնագրության վերաբերյալ ծանոթագրություն.  
5A002 և 5D002 կետերով չեն հսկվում հետևյալ բնութագրերն ունեցող ապրանքները.

a. Որոնցով կատարվում է ազատ մանրածախ առևտուր՝ առանց սահմանափակման, և որոնք կարող են ձեռք բերվել.

1. Արտաշուկայական գործարքների,
2. Փոստով կատարվող պատվերի,
3. Էլեկտրոնային պատվերի,
4. Հեռախոսով կատարվող պատվերի միջոցով:

b. Որոնց գաղտնագրային հատկությունները չեն կարող հեշտությամբ փոփոխվել օգտագործողի կողմից:

c. Նախագծված են այնպես, որ կարող են հեշտությամբ տեղադրվել օգտագործողի կողմից՝ առանց մատակարարի հետագա էական օգնության:

d. Անհրաժեշտության դեպքում ապրանքին վերաբերող

---

մանրամասները մատչելի են, և պահանջի դեպքում կարող են ներկայացվել այն անդամ պետության իրավասու մարմիններին, որտեղ գտնվում է արտահանող կազմակերպությունը՝ Ծանոթագրության a-ից c կետերում նշված պահանջների հետ ապրանքի համապատասխանությունը հաստատելու համար:

Տեխնիկական ծանոթագրություն. Կատեգորիա 5-ի Մաս 2-ում գույգության բիտը ընդգրկված չէ բանալու երկարության մեջ:

---

**5A2 Համակարգեր, սարքավորումներ և բաղադրիչներ**

---

5A002 <Ինֆորմացիայի պաշտպանության>> համակարգեր, սարքավորումներ և դրանց բաղադրիչներ, այդ թվում.

a. Ինֆորմացիայի պաշտպանության համար կիրառվող համակարգեր, սարքավորումներ, հատուկ նշանակության <<էլեկտրոնային հավաքվածքներ>>, մոդուլներ կամ ինտեգրալային սխեմաներ, և դրա համար հատուկ մշակված բաղադրիչներ.

Ն.Օ. Նավագացիոն գլոբալ արբանյակային համակարգերի (GPSS) վերձանման գործառույթ պարունակող կամ կիրառող ընդունիչ սարքերի (GPS կամ GLONASS) վերահսկողության վերաբերյալ տես 7A005 կետը:

1. Որոնք հատուկ մշակված կամ ձևափոխված են՝ <<գաղտնագրության>> օգտագործման համար, այնպիսի թվային մեթոդների կիրառմամբ, որոնք կատարում են գաղտնագրության ցանկացած գործառույթներ, բացի անձի կամ թվային ստորագրության իսկության հաստատումից և ունեն հետևյալ բնութագրերից որևէ մեկը.

Տեխնիկական ծանոթագրություններ.

1. Անձի կամ թվային ստորագրության իսկության հաստատման գործառույթները ներառում են դրանց հետ կապված բանալիների կառավարման գործառույթը:

2. Անձի հաստատումը ներառում է մուտքի հսկողության բոլոր կողմերը և չի ընդգրկում ֆայլերի կամ տեքստի ծածկագրումը, եթե դա անմիջականորեն կապված չէ չիազորված մուտքը կանխելու նպատակով նշանաբառերի, անձնական տարբերակիչ համարների (PIN կոդերի) կամ համանման տվյալների պաշտպանության հետ:

3. Գաղտնագրությունը չի ընդգրկում տվյալների <<ֆիքսված>> խտացումը կամ կոդավորումը:

Ծանոթագրություն. 5A002.a.1. կետն ընդգրկում է այն սարքավորումները, որոնք հատուկ նախագծված կամ ձևափոխված են <<գաղտնագրության>> օգտագործման համար՝ թվային

---

---

*մեթոդների օգնությամբ իրականացված անալոզային ալգորիթմների կիրառմամբ:*

a. <<Միմետրիկ ալգորիթմներ՝ 56 բիտից ավելի երկարություն ունեցող բանալու օգտագործմամբ:

b. <<Ասիմետրիկ ալգորիթմներ>>, որում ալգորիթմի անվտանգությունը հիմնված է հետևյալ հասկություններից մեկի վրա.

1. ամբողջական թվերի ֆակտորացում 512 բիտից բարձր (օրինակ՝ RSA),

2. դիսկրետ լոգարիթմների հաշվարկում 512 բիտից մեծ չափ ունեցող վերջնական դաշտի բազմապատկական խմբում (օրինակ՝ Դիֆֆի-Նելմանի մեթոդը Z/pZ խմբի նկատմամբ), կամ

3. դիսկրետ լոգարիթմների հաշվարկում 5A002. a.1. b.2 կետում նշվածից տարբեր և 112 բիտից բարձր խմբում (օրինակ՝ Դիֆֆի-Նելմանի մեթոդը էլիպսաձև կորի նկատմամբ):

2. Որոնք մշակված կամ ձևափոխված են գաղտնագրավերլուծական գործառույթ կատարելու համար:

3. Չի օգտագործվում:

4. Որոնք մշակված կամ ձևափոխված են ինֆորմացիա կրող ազդանշանների անցանկալի արտահոսքը (բացի նրանից, որն անհրաժեշտ է առողջության պահպանման, անվտանգության կամ էլեկտրամագնիսական ճառագայթման ստանդարտների պահպանման համար) կանխելու նպատակով:

5. Որոնք մշակված կամ ձևափոխված են <<սպեկտրի ընդլայնման>> համակարգի համար ընդլայնվող կողերի, այդ թվում՝ <<հաճախականությունների թռիչքաձև վերալարքի>> համակարգի համար թռիչքաձև կողերի առաջացման գաղտնագրային մեթոդների կիրառման համար:

6. Մշակված կամ ձևափոխված գաղտնագրային սարքերում օգտագործելու համար՝ ազդանշանի կոդավորման համար, որոնք ունեն հետևյալ տեխնիկական բնութագրերը.

a. 500 մՀ գերազանցող շերտ

b. <<մասնատված շերտերը>> 20% և ավելին

7. Չգաղտնագրվող ինֆորմացիայի տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների (ՏՀՏ) անվտանգության համակարգեր և սարքեր, որոնց

---

---

Համակարգչային անվտանգության ընդհանուր չափանիշների (ԸՉ) կամ համարժեք այլ ստանդարտի հիման վրա տրվել է <<EAL-6>> (գնահատման հավաստիացման մակարդակ) դասից բարձր գնահատական,

8. Կապի մալուխային համակարգեր, որոնք մշակված կամ ձևափոխված են չլիազորված մուտքի հայտնաբերման մեխանիկական, էլեկտրական կամ էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ:

9. Մշակված կամ ձևափոխված <<քվանտային գաղտնագրության>> համար:

*Տեխնիկական ծանոթագրություն. <<Քվանտային ծածկագրությունը>> կամ գաղտնագրությունը նույնպես հայտնի է որպես քվանտային բանալիների բաշխում (QRD):*

*Ծանոթագրություն. 5A002 կետով չեն վերահսկվում հետևյալ սարքավորումները:*

a. <<Ներկառուցված պրոցեսորով անձնական քարտերը>>.

1. Որոնց օգտագործումը սահմանափակված է այս ծանոթագրության b.-ից f. կետերում նշված սարքավորումներում կամ

2. Նախատեսված են ընդհանուր օգտագործման համար, որտեղ գաղտնագրման կարողությունը մատչելի չէ օգտագործողի համար և սահմանափակված է միայն անձնական տվյալների մուտքով:

*Հ.Ծ. Եթե <<ներկառուցված պրոցեսորով անձնական քարտեր>> ունի բազմակի գործառույթներ, ապա յուրաքանչյուր գործառույթի վերահսկողական կարգավիճակը որոշվում է առանձին:*

b. Ընդունիչ սարքավորումներ ռադիոհեռարձակման, վճարովի հեռուստատեսության կամ սահմանափակ ունկնդիրների համար նախատեսված համանման հեռարձակման համար՝ առանց թվային ծածկագրման, բացառությամբ, երբ թվային ծածկագրումը օգտագործվում է վճարման և հեռուստատեսային կամ ռադիո ալիքների կառավարման սահմանափակ գործառույթների համար:

c. Սարքավորումներ, որոնց գաղտնագրային հնարավորությունները օգտագործողներին մատչելի չեն և որոնք հատուկ նախագծված ու սահմանափակված են հետևյալ գործառույթների կատարման համար.

1. Պատճենումից պաշտպանված <<ծրագրային ապահովման>>

---

---

օգտագործում,

2. Ստորև նշվածներից ցանկացածի մատչելիության ապահովում,

a. Պատճենումից պաշտպանված և միայն ընթերցման համար մատչելի ինֆորմացիայի կրիչ,

b. Այնպիսի կրիչների վրա ծածկագրված ձևով (օրինակ՝ մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության նպատակով) պահպանվող ինֆորմացիա, որոնք հանրությանը վաճառվում են նույնական կոմպլեկտներով,

3. Պատճենահանման վերահսկում հեղինակային իրավունքով պաշտպանված աուդիո-վիդեո տվյալների նկատմամբ, կամ

4. Գաղտնագրում և/կամ վերծանում գրադարանների, դիզայնի միջոցների կամ կիսահաղորդիչային սարքերի կամ ինտեգրալային սխեմաների դիզայնի պաշտպանման համար:

d. Գաղտնագրային սարքավորումներ, որոնք հատուկ նախագծված ու սահմանափակված են բանկային գործարքների կամ «*դրամական գործառնությունների*» իրականացման համար»,

*Տեխնիկական ծանոթագրություն. 5A002 կետի Ծանոթագրություն d – ում նշված «*դրամական գործառնությունները*» ներառում են վճարումների հավաքագրումն ու հաշվարկը և վարկային գործառնությունները:*

e. Քաղաքացիական օգտագործման համար (օրինակ՝ բջջային ռադիոկապի առևտրային քաղաքացիական համակարգերում) նախատեսված դյուրաշարժ կամ շարժական ռադիոհեռախոսներ, որոնք ուղղակիորեն չեն հաղորդում գաղտնագրված տվյալներ մեկ այլ ռադիոհեռախոսին կամ սարքին (բացառությամբ ռադիոկապի բաժանորդների ցանցի (RAN) սարքերի) կամ չեն փոխանցում գաղտնագրված տվյալներ RAN սարքերի (օր.՝ ռադիո ցանցի հսկողության (RNC) կամ հիմնական կայանի հսկողության (BSC) համակարգերի միջոցով),

f. Անհաղորդալար հեռախոսային սարքավորումներ, որոնք չեն պարունակում բաժանորդների համար ծածկագրման գործառնոյթ և որոնց չուժեղացված անհաղորդալար կապի առավելագույն արդյունավետ հեռավորությունը (այսինքն՝ շարժական ապարատի և տան հեռախոսի միջև անտելե կապը) 400 մ-ից պակաս է համաձայն արադրողի հատկորոշումների:

g. Քաղաքացիական օգտագործման համար նախատեսված դյուրաշարժ կամ շարժական ռադիոհեռախոսներ և

---

---

բաժանորդագրային ցանցի համանման անլար սարքեր, որոնք համապատասխանում են գաղտնագրման միայն տպագրված կամ առևտրային ստանդարտներին (բացառությամբ կեղծման դեմ ուղղված գործառույթների, որոնք կարող են և չտպագրվել), ինչպես նաև համապատասխանում են Գաղտնագրման վերաբերյալ ծանոթագրության (5-րդ կատեգորիայի 2-րդ մասի 3-րդ ծանոթագրություն) b.-ից d. կետերի դրույթներին, և փոփոխվել են սկզբնականում չհամապատասխանեցված տվյալ սարքերի գաղտնագրային գործառույթների վրա չազդող հատկանիշներով հատուկ կիրառման համար քաղաքացիական նպատակներով օգտագործման նպատակով,

h. Մարքավորումներ, որոնք հատուկ նախատեսված են դյուրաշարժ կամ շարժական ռադիոհեռախոսների և բաժանորդագրային ցանցի համանման անլար այն սարքերի սպասարկման համար, որոնք համապատասխանում են Գաղտնագրման վերաբերյալ ծանոթագրության (5-րդ կատեգորիայի 2-րդ մասի 3-րդ ծանոթագրություն) բոլոր դրույթներին, պայմանով, որ վերոգրյալի սպասարկման համար նախատեսված սարքավորումները բավարարեն ստորև բոլոր պայմաններին.

1. Սպասարկող սարքավորումների գաղտնագրային գործառույթը չի կարող հեշտորեն փոփոխվել սարքավորումների օգտագործողների կողմից,
2. Սպասարկող սարքավորումները տեղադրվում են՝ առանց մատակարարի հետագա էական աջակցության անհրաժեշտության, և
3. Սպասարկող սարքավորումները չեն կարող փոխել սպասարկվող սարքավորումների գաղտնագրային գործառույթը,

i. Գաղտնագրման միայն տպագրված կամ առևտրային ստանդարտներին համապատասխանող անլար <<անձնական ցանցի>> սարքավորումները, որոնցում գաղտնագրման գործառույթը, արտադրողի մասնագրերի համաձայն, սահմանափակված 30 մետրը չգերազանցող աշխատանքային տիրույթով:

---

5A002	854370
	854370590
	848610000
	848620900
	848630900

---

---

848640000  
852352900

---

**5B2 Փորձարկիչ, հսկիչ և արտադրական սարքավորումներ**

---

5B002 <<Ինֆորմացիայի պաշտպանության>> փորձարկիչ, հսկիչ և արտադրական սարքավորումներ, այդ թվում.  
a. Սարքավորումներ, որոնք հատուկ մշակված են 5A002 կամ 5B002.b. կետերում նշվող սարքավորումների մշակման կամ արտադրության համար,  
b. Չափիչ սարքավորումներ, որոնք հատուկ մշակված են 5A002 կետում նշվող սարքավորումների կամ 5D002.a. կամ 5D002.c. կետերում նշվող ծրագրային ապահովման <<ինֆորմացիայի պաշտպանության>> գործառույթների գնահատման և հաստատման համար:

---

5B002 854370  
854370590  
848610000  
848620900  
848630900  
848640000  
852352900

---

**5C2 Նյութեր**  
Բացակայում են:

---

**5D2 Ծրագրային ապահովում**

---

5D002 <<Ծրագրային ապահովում>>, այդ թվում.  
a. <<Ծրագրային ապահովում>>, որը հատուկ մշակված կամ փոփոխված է 5A002 կետում նշվող սարքավորումների 5D002.c. կետում նշվող ծրագրային ապահովման <<մշակման>>, <<արտադրության>> կամ <<օգտագործման>> համար:  
b. <<Ծրագրային ապահովում>>, որը հատուկ մշակված կամ փոփոխված է 5E002 կետով վերահսկվող <<տեխնոլոգիային>> օժանդակելու համար:  
c. Հատուկ <<ծրագրային ապահովում>>, ինչպիսին է.  
1. <<Ծրագրային ապահովում>>, որն ունի 5A002 կետում նշվող սարքավորումների գործառույթների մոդելավորման կամ վերարտադրման բնութագրեր:  
2. <<Ծրագրային ապահովում>>, որն անհրաժեշտ է 5D002.c.1. կետում նշվող <<ծրագրային ապահովման>> հավաստագրման համար:

---

---

*Ծանոթագրություն. 5D002 կետով չի վերահսկվում.*

*a. 5A002 կետին կից Ծանոթագրությամբ չվերահսկվող սարքավորումներում օգտագործման համար անհրաժեշտ <<ծրագրային ապահովումը>>, <<մշակման>>, <<արտադրության>> կամ <<օգտագործման>> համար:*

*b. 5A002 կետին կից Ծանոթագրությամբ չվերահսկվող սարքավորումների գործառնություններից ցանկացածը իրականացնող <<ծրագրային ապահովումը>> <<մշակման>>, <<արտադրության>> կամ <<օգտագործման>> համար:*

---

**5E2**

**Տեխնոլոգիաներ**

5E002

<<Տեխնոլոգիաներ>>, որոնք, ընդհանուր տեխնոլոգիական ծանոթագրության համաձայն, նախատեսված են 5A002 կամ 5B002 կետերում նշվող սարքավորումների կամ 5D002.a. կամ 5D002.c. կետերում նշվող <<ծրագրային ապահովման>> <<մշակման>>, <<արտադրության>> կամ <<օգտագործման>> համար:

---

## Կատեգորիա 6. Տվիչներ և լազերներ

**6A**

**Համակարգեր, սարքավորումներ և բաղադրիչներ**

6A001

Ակուստիկ համակարգեր, սարքավորումներ և բաղադրիչներ, այդ թվում.

a. Ծովային ձայնային համակարգեր, սարքավորումներ և դրանց համար հատուկ մշակված բաղադրիչներ, ինչպիսիք են.

1. Ակտիվ (հաղորդիչ և ընդունահաղորդիչ) համակարգեր, սարքավորումներ և դրանց համար հատուկ մշակված բաղադրիչներ, ինչպիսիք են.

*Ծանոթագրություն. 6A001.a.1. կետով չեն վերահսկվում հետևյալ սարքավորումները.*

*a. Ուղղաձիգ գործողության խորության հիդրոլոկատորներ (ջրատեղորոշիչները), որոնք օժտված չեն ճառագայթի +/-20°-ից*

---



---

*բարձր տեսագրման գործառույթով և նախատեսված են սահմանափակ կիրառումների՝ ջրի խորության, մինչև սուզված կամ ընկղմված օբյեկտները կամ ձկների վտանները եղած հեռավորության չափման համար,*

*b. Չայնային ազդալուծաններ, ինչպիսիք են.*

- 1. Վթարային ձայնային ազդալուծանները,*
- 2. Ուլտրաձայնային իմպուլսների ճառագայթիչները, որոնք հատուկ մշակված են ստորջրյա դիրքի տեղափոխվելու կամ վերադառնալու համար:*

a. Խորությունը չափող լայնատեսանելի համակարգեր, որոնք նախատեսված են ծովի հատակի քարտեզագրման համար և ունեն բոլոր հետևյալ բնութագրերը.

1. Նախատեսված են չափման համար՝ ուղղաձիգից ավելի քան 200 անկյունային շեղման պայմաններում,
2. Նախատեսված են ջրի մակերևույթից ավելի քան 600 մ խորության չափման համար,
3. Նախատեսված են հետևյալ բնութագրերից ցանկացածն ապահովելու համար.

a. Մի քանի ճառագայթների միավորում, որոնցից յուրաքանչյուրն արդեն 1,9° –ից փոքր է, կամ

b. Ջրի խորության չափումների 0,3%-ից բարձր ճշգրտության ապահովում, որոնք ստացվել են շերտի սահմաններում առանձին չափումների միջինացման միջոցով:

b. Դիրքի հայտնաբերման համակարգեր, որոնք ունեն հետևյալ բնութագրերը.

1. Հաղորդման հաճախականությունը 10 կՀց-ից ցածր է,
  2. Չայնային ճնշման մակարդակը 224 դԲ (1 մկՊա/1մ)-ից բարձր է՝ 10 Հց-ից –24 (ներառյալ) կՀց միջակայքում գտնվող աշխատանքային հաճախականություն ունեցող սարքավորումների համար,
  3. Չայնային ճնշման մակարդակը 235 դԲ (1 մկՊա/1մ)-ից բարձր է՝ 24 Հց-ից 30 կՀց միջակայքում գտնվող աշխատանքային հաճախականություն ունեցող սարքավորումների համար,
  4. Ճառագայթների ձևավորումը արդեն 1 աստիճան է յուրաքանչյուր առանցքով, իսկ աշխատանքային հաճախականությունը 100 կՀց-ից ցածր է,
  5. Ունեն 5120 մ և ավելի հեռավորության վրա նպատակակետը հստակ ճանաչելու ճշգրտություն,
  6. Նախատեսված են 1000 մ-ից ավելի խորություններում նորմալ աշխատելու համար և ունեն հետևյալ բնութագրերից որևէ մեկով օժտված փոխակերպիչներ.
-

- 
- a. Ունեն ըստ ճնշման դինամիկ հարմարվելու ունակություն, կամ
  - b. Պարունակում են այլ փոխակերպիչ տարրեր, բացի կապարի տիտանատ ցիրկոնատից պատրաստվածներից,
  - c. Չայնային լուսարձակներ, որոնք ներառում են փոխակերպիչներ և միավորում են առանձին կամ որոշակի համադրությամբ գործող պիեզոէլեկտրական, մագնիսակծկումային, էլեկտրակծկումային, էլեկտրադինամիկ կամ հիդրավլիկ տարրեր, և ունեն հետևյալ բնութագրերից որևէ մեկը.

Ծանոթագրություն 1. Այլ սարքավորումների համար հատուկ մշակված՝ փոխակերպիչներ ներառող ձայնային լուսարձակների վերահսկողական կարգավիճակը որոշվում է տվյալ սարքավորման վերահսկողական կարգավիճակով:

Ծանոթագրություն 2. 6A001.a.1.c. կետով չեն հսկվում միայն ուղղաձիգ գնում իրականացնող էլեկտրոնային աղբյուրները, մեխանիկական (օրինակ՝ օդաճնշական կամ շոգեհարվածային հրացանները) կամ քիմիական (օրինակ՝ պայթուցիկ) աղբյուրները:

- 1. 0,01 մՎտ/քառ. մմ/Հց գերազանցող ակնթարթային ճառագայթվող ձայնային հզորության խտություն՝ 10 կՀց-ից ցածր հաճախականություններում գործող սարքերի համար, կամ
- 2. 0,001 մՎտ/քառ. մմ/Հց գերազանցող անընդհատ ճառագայթվող ձայնային հզորության խտություն՝ 10 կՀց-ից ցածր հաճախականություններում գործող սարքերի համար, կամ

Տեխնիկական ծանոթագրություն. Չայնային հզորության խտությունը ստացվում է էլքային ձայնային հզորությունը ճառագայթող մակերևույթի մակերեսի և աշխատանքային հաճախականության արտադրյալի վրա բաժանելու արդյունքում:

- 3. Կողային թերթիկների ճնշումը 22 դԲ-ից ավելի է:

d. Չայնային համակարգեր, սարքավորումներ և հատուկ մշակված բաղադրիչներ՝ վերջրյա նավերի և ստորջրյա ապարատների դիրքի որոշման համար, որոնք նախատեսված են 1000 մ-ից ավելի հեռավորությունների վրա աշխատելու համար՝ մինչև 1000 մ հեռավորությունների վրա չափման ժամանակ 10 մ-ից պակաս տեղորոշման ճշգրտությամբ (միջին քառակուսային շեղում – ՄՔՇ).

Ծանոթագրություն. 6A001.a.1.d. կետում չեն ընդգրկվում.

- a. երկու կամ ավելի ազդալողանների միջև <<ազդանշանների կոհերենտ մշակում>> օգտագործող սարքավորումները և վերջրյա նավերի ու ստորջրյա ապարատների հիդրոֆոնային սարքերը,
  - b. դիրքի հայտնաբերման նպատակով ձայնի տարածման
-

---

*սխալանքի ավտոմատ ուղղման գործառույթ ունեցող սարքավորումները:*

2. Պասիվ (ակտիվ սարքավորման հետ կապի առկայությունից անկախ՝ սահմանված ռեժիմում ընդունող) սարքավորումներ և հատուկ մշակված բաղադրիչներ, ինչպիսիք են.

a. Հետևյալ բնութագրերից որևէ մեկն ունեցող հիդրոֆոններ.

*Ծանոթագրություն. Այլ սարքավորումների համար հատուկ մշակված հիդրոֆոնների հսկողական կարգավիճակը որոշվում է տվյալ սարքավորման հսկողական կարգավիճակով:*

1. Որոնք ներառում են անընդհատ գործողության ճկուն տվիչներ

2. Որոնք ներառում են անընդհատ գործողության ճկուն տվիչներ կամ ընդհատ գործողության տվիչների հավաքվածքներ՝ 20 մմ-ից պակաս տրամագծով կամ երկարությամբ և տարրերի միջև 20 մմ-ից պակաս հեռավորությամբ:

3. Ունեն հետևյալ զգայուն տարրերից որևէ մեկը.

a. Օպտիկական մանրաթելեր,

b. Պիեզոէլեկտրական պոլիմերային ժապավեններ, բացառությամբ պոլիվինիլիդե-ֆտորիդի (PVDF) և նրա համա-պոլիմերների {P(VDF-TrFE) և P(VDF-TFE)}, կամ

c. Ճկուն պիեզոէլեկտրական բաղադրյալ միացություններից:

4. Ունեն ցանկացած խորության վրա  $-180$ -ից ավելի լավ հիդրոֆոնային զգայունություն՝ առանց արագացման համակշռման:

5. Մշակված են 35 մ գերազանցող խորություններում աշխատելու համար՝ արագացման համակշռմամբ:

6. Մշակված են 1000 մ-ից ավելի խորություններում աշխատելու համար:

*Տեխնիկական ծանոթագրություն.*

1. <<Պիեզոէլեկտրական պոլիմերային ժապավեն>>, որը բացահայտում է բևեռացված պոլիմերային ժապավենից կազմված տարրերը, որոնք ձգված կամ ամրացված են օժանդկաող շրջանակին:

2. <<Ճկուն պիեզոէլեկտրական բաղադրյալ միացություն>>, որը բացահայտում է պիեզոէլեկտրական կերամիկական մասնիկներից կամ մանրաթելից կազմված տարրերը՝ միացված

---

---

էլեկտրականորդն մեկուսացնող, ակուստիկորեն թափանցիկ ռետինից, պոլիմերից կամ էպոքսի բաղադրանյութից, որտեղ բաղադրանյութը բացահայտող տարրերի ինտեգրալային մասն է:

3. Հիդրոֆոնային զգայունությունը որոշվում է որպես 1 Վ հենանիշային լարման նկատմամբ միջին քառակուսային էլքային լարման հարաբերության քսանապատիկ տասնորդական լոգարիթմ, երբ նախաուժեղարար չունեցող հիդրոֆոնային սվիչը տեղադրված է 1 մկՊա միջին քառակուսային ճնշում ունեցող հարթ ալքի ձայնային դաշտում: Օրինակ, -160 դԲ (1 Վ հենանիշային լարում/մկՊա) զգայունություն ունեցող հիդրոֆոնը այդ դաշտում կտա  $10^{-8}$  Վ էլքային լարում, մինչդեռ -180 դԲ զգայունություն ունեցող հիդրոֆոնը էլքի մոտ կտա միայն  $10^{-9}$  Վ լարում: Այսպիսով, -160 դԲ զգայունությունն ավելի լավ է, քան -180 դԲ զգայունությունը:

b. Քարշակվող ձայնային հիդրոֆոնային վանդակներ, որոնք ունեն հետևյալ բնութագրերից որևէ մեկը.

1. 12,5 մ-ից պակաս հեռավորության վրա տեղադրված հիդրոֆոնային խմբեր,
2. Մշակված են կամ կարող են փոփոխվել 35 մ-ից ավելի խորություններում աշխատելու համար,

Տեխնիկական ծանոթագրություն. 6A001.a.2.b.1. և 2. կետում նշված ձևափոխման ընդունակությունը նշանակում է փաթույթի կամ ներքին միացումների փոփոխման հնարավորության առկայություն՝ հիդրոֆոնային խմբերի տեղադրությունների կամ աշխատանքային խորությունների սահմանների փոփոխության նպատակով: Այդպիսի հնարավորություններից են փաթույթի աշխատանքային գալարների ընդհանուր թվի 10%-ից ավելին կազմող պահեստային գալարների, հիդրոֆոնային խմբերի փոխդասավորության սարքաբերման բլոկի կամ սուզման խորությունը սահմանափակող սարքի առկայությունը:

3. 6A001.a.2.d. կետով վերահսկվող կառավարելի տվիչներ,
4. Ունեն երկայնքով ամրացված վանդակների միացնող մալուխներ,
5. Ունեն 40 մմ-ից պակաս տրամագծով հավաքված վանդակներ, կամ
6. Չեն օգտագործվում,
7. 6A001.a.2.a. կետում նշված հիդրոֆոնների բնութագրերը:

c. Քարշակվող ձայնային հիդրոֆոնային վանդակներում կիրառման համար հատուկ մշակված տվյալների մշակման սարքավորումներ, որոնք օժտված են այնպիսի հատկանիշներով, ինչպիսիք են օգտագործողի կողմից ծրագրավորելիությունը, մշակումը ժամանակային կամ հաճախականությունների տիրույթում և հարաբերակցումը, ներառյալ սպեկտրային վերլուծումը, թվային գտումը և ճառագայթի ձևավորումը օգտագործելով Ֆուրյեյի արագ

---

---

փոխակերպումը կամ փոխակերպման այլ տեսակները կամ պրոցեսները:

d. Կառավարելի տվիչներ, որոնք ունեն բոլոր հետևյալ բնութագրերը.

1. Ճշգրտությունը գերազանցում է +/-0.5%-ը,
2. Մշակված են 35 մ գերազանցող խորություններում աշխատելու համար, կամ ունեն կարգավորվող կամ փոխարինվող խորքային զգայուն սարք՝ նախատեսված 35 մ-ից ավելի խորություններում աշխատելու համար:

e. Հատակային-մալուխային համակարգեր, որոնք ունեն ստորև նշվածներից որևէ մեկը.

1. 6A001.a.2.a. կետում նշված միավորող հիդրոֆոններ,
2. Հիդրոֆոնային խմբերի միավորող մուլտիպլեքսայնացված ազդանշանների մոդուլներ, որոնք ունեն բոլոր ստորև նշված բնութագրերը

a. Մշակված են 35 մ գերազանցող խորություններում աշխատելու համար, կամ ունեն կարգավորվող կամ փոխարինվող խորքային զգայուն սարք՝ նախատեսված 35 մ-ից ավելի խորություններում աշխատելու համար,

b. Քարշակվող ձայնային հիդրոֆոնային վանդակների մոդուլներով աշխատանքային ռեժիմում փոխարինվելու հնարավորություն:

f. Տվյալների մշակման սարքավորումներ, որոնք հատուկ նախագծված են հատակային մալուխային համակարգերի համար և օժտված են այնպիսի հատկանիշներով, ինչպիսիք են օգտագործողի կողմից ծրագրավորելիությունը, մշակումը ժամանակիային կամ հաճախականությունների տիրույթում և հարաբերակցումը, ներառյալ սպեկտրային վերլուծումը, թվային գտումը և ճառագայթի ձևավորումը՝ օգտագործելով Ֆուրյեյի արագ փոխակերպումը կամ փոխակերպման այլ տեսակներ կամ պրոցեսներ:

b. Հարաբերակցության արագության և Դոպլերի արագության հիդրոլոկացիոն սարքավորում, որը նախատեսված է ծովի հատակի նկատմամբ սարքավորման կրիչի հորիզոնական արագության չափման համար:

1. Հարաբերակցության արագության հիդրոլոկացիոն սարքավորում, որն ունի հետևյալ բնութագրերը.

a. Նախատեսված է ծովի հատակի և սարքավորման կրիչի միջև 500մ-ից ավելի հեռավորության վրա աշխատանքի համար,

b. Ունի արագության ճշգրտություն, որը արագության 1 %-ից բարձր է,

2. Դոպլերի արագության հիդրոլոկացիոն սարքավորում, որի արագության ճշգրտությունը արագության 1 %-ից բարձր է:

---

---

Ծանոթագրություն 1. 6A001.b.կետով չեն վերահսկվում խորության չափման սարքերը, որոնք սահմանափակվում են հետևյալով.

- a. Ջրի խորության չափում,
- b. Ընկղմված կամ սուզված օբյեկտների հեռավորության չափում, կամ
- c. Ձկների հայտաբերում:

Ծանոթագրություն 2. 6A001.b.կետով չեն վերահսկվում վերջրյա նավերի վրա տեղադրման համար հատուկ նախատեսված սարքավորումները:

Սուզման արգելակման ակուստիկական համակարգեր՝ հատուկ նախատեսված կամ փոփոխված սուզորդների ստորջրյա ընթացքի խանգարման համար, որոնց ձայնային ճնշման մակարդակը մեծ է կամ հավասար 190 դԲ-ին (1 մետրի հաշվով՝ 1 ֆիՊա) 200 Հց և ցածր հաճախականությունների պայմաններում:

Ծանոթագրություն 1. 6A001.c. կետով չեն վերահսկվում սուզման արգելակման այն համակարգերը, որոնք աշխատում են ստորջրյա պայթուցիկ սարքերի, պնևմատիկ զենքի կամ հրավտանգ աղբյուրների հիման վրա:

Ծանոթագրություն 2. 6A001.c. կետը ներառում է սուզման արգելակման ակուստիկական այնպիսի համակարգեր, որոնք աշխատում են կայծային պարպիչների աղբյուրների միջոցով, որոնք հայտնի են նաև որպես ձայնի պլազմային աղբյուրներ:

---

6A001, a,1,a	901580910
6A001, a,1,b	901580910
6A001, a,1,c	901580910
6A001, a,1,d	901580110
6A001,a,2,a,	901580110 901580930 901580910 901580990
6A001, a,2,b	901580930 901580990
6A001, a,2,c	901580930 901580990
6A001, a,2,d	901580110

---

	901580930
6A001, a,2,e	901580930 901580990
6A001, a,2,f	901580930 901580990
6A001, b	901580930 901580990
6A002	<p>Օպտիկական տվիչներ, սարքավորումներ կամ դրանց բաղադրիչներ, այդ թվում.</p> <p>Հ.Ծ. Տես նաև 6A102 կետը:</p> <p>a. Տիեզերքում կիրառման համար պիտանի պինդ վիճակում գտնվող դետեկտորներ, ինչպիսիք են.</p> <p><i>Ծանոթագրություն. 6A002.a. կետի իմաստով &lt;&lt;պինդ վիճակում գտնվող դետեկտորներ&gt;&gt; ներառում են &lt;&lt;տեսափոխակերպման մատրիցներ&gt;&gt;:</i></p> <p>a. Տիեզերքում կիրառման համար պիտանի պինդ վիճակում գտնվող դետեկտորներ, որոնք ունեն ստորև բոլոր բնութագրերը.</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Առավելագույն զգայունություն 10 նմ-ից մինչև 300 նմ ալիքային երկարությունների ընդգրկույթում, և</li> <li>2. Առավելագույն զգայունության 0,1%-ից պակաս զգայունություն 400 նմ գերազանցող ալիքային երկարությունների վրա:</li> </ol> <p>b. &lt;&lt;Տիեզերքում կիրառման համար պիտանի&gt;&gt; պինդ վիճակում գտնվող դետեկտորներ, որոնք ունեն բոլոր հետևյալ բնութագրերը.</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Առավելագույն զգայունություն 900 նմ-ից մինչև 1200 նմ ալիքային երկարությունների ընդգրկույթում, և</li> <li>2. 95 նվրկ. կամ պակաս արձագանքի &lt;&lt;ժամանակի հաստատուն&gt;&gt;</li> </ol> <p>c. &lt;&lt;Տիեզերքում կիրառման համար պիտանի&gt;&gt; պինդ վիճակում գտնվող դետեկտորներ, որոնք ունեն առավելագույն զգայունություն 1200 նմ-ից մինչև 30000 նմ ալիքային երկարությունների ընդգրկույթում:</p> <p>d. &lt;&lt;Տիեզերքում կիրառման համար պիտանի&gt;&gt; &lt;&lt;տեսափոխակերպման մատրիցներ&gt;&gt;, որոնք մեկ մատրիցի հաշվով ունեն ավելի քան 2 048 տարր և որոնց զագաթնային</p>

---

արձագանքը ալիքային երկարության տիրույթում գերազանցում է 300 նմ-ը, բայց փոքր է 900 նմ-ից:

2. Պայծառության էլեկտրոնա-օպտիկական ուժեղարարներ և դրանց համար հատուկ մշակված բաղադրիչներ, ինչպիսիք են.

Ծանոթագրություն. 6A002.a.2. կետով չեն վերահսկվում ոչ էլեկտրոնա-օպտիկական ֆոտոէլեկտրոնային բազմապատկիչների խողովակները, որոնք վակուումային տարածությունում ունեն էլեկտրոնային դետեկտորային սարք, որը սահմանափակվում է միայն հետևյալով.

a. Եզակի մետաղական անոդ, կամ

b. Մետաղական անոդներ, որոնք կենտրոնների միջև տարածությունը 500 բո-ից մեծ է:

Տեխնիկական ծանոթագրություն.

<<Լիցքային բազմապատկումը>> էլեկտրոնա-օպտիկական ուժեղացման ձևերից մեկն է և սահմանվում է որպես հարվածի իոնացման աճի պրոցես: <<Լիցքային բազմապատկման>> տվիչները կարող են ընդունել էլեկտրոնա-օպտիկական ուժեղացուցիչի խողովակի, պինդ վիճակում գտնվող դետեկտորի կամ <<տեսափոխակերպման մատրիցի>> ձևը:

a. Պայծառության էլեկտրոնա-օպտիկական ուժեղացուցիչներ, որոնք ունեն բոլոր ստորև նշվածները.

1. Առավելագույն զգայունություն 400 նմ-ից մինչև 1050 նմ ալիքային երկարությունների ընդգրկույթում,

2. էլեկտրոնա-օպտիկական պատկերի ուժեղացում հետևյալի միջոցով.

a. Միկրոանցքային թիթեղ՝ անցքերի կենտրոնների միջև 15 մկմ կամ պակաս հեռավորությամբ, կամ

b. 500 բո-ից փոքր կամ հավասար ոչ բինային պիքսելային թեքություն ունեցող էլեկտրոնային տվիչ՝ հատուկ նախատեսված կամ փոփոխված <<լիցքային բազմապատկման>> ապահովման համար, բացառելով միկրոանցքային թիթեղի մեթոդի կիրառումը:

3. Լուսակատողներ, ինչպիսիք են.

a. Բազմահիմք լուսակատողներ (օր.՝ S-20 և S-25)՝ 350 մկմ/լմ լուսազգայունությամբ,

b. GaAs կամ GaInAs լուսակատողներ,

c. Այլ կիսահաղորդչային լուսակատողներ՝ III-V խմբերի միացությունների հիմքով, որոնց առավելագույն լուսազգայունությունը գերազանցում է 10 mA/W-ը:

b. էլեկտրոնա-օպտիկական պատկերի ուժեղացուցիչներ, որոնք ունեն հետևյալ բոլոր բնութագրերը.

1. Ալիքային երկարությունում գազաթնային արձագանքը գերանցացում է 1 050 նմ-ը, բայց 1 800 նմ-ից փոքր է,

---



---

2. Էլեկտրոնա-օպտիկական պատկերի ուժեղացուցում ստորև նշվածներից որևէ մեկի միջոցով.

Միկրոանցքային թիթեղ՝ անցքերի կենտրոնների միջև 12 բո կամ պակաս հեռավորությամբ, կամ

500 բո-ից փոքր կամ հավասար ոչ բինային պիքսելային թեքություն ունեցող էլեկտրոնային տվիչ՝ հատուկ նախատեսված կամ փոփոխված <<լիցքային բազմապատկման>> ապահովման համար, բացառելով միկրոանցքային թիթեղի մեթոդի կիրառումը, և

3. <<III/V բաղադրյալ միացություններով>> կեսահադորդիչային (օր.՝ GaAs կամ GaInAs) լուսակատողներ և փոխանցված էլեկտրոնային լուսակատողներ, որոնք ունեն 15 mA/W-ից բարձր առավելագույն լուսազգայունություն,  
c. Հատուկ նախագծված բաղադրիչներ, այդ թվում.

1. Միկրոանցքային թիթեղներ՝ անցքերի կենտրոնների միջև 12 բո կամ պակաս հեռավորությամբ,

2. 500 բո-ից փոքր կամ հավասար ոչ բինային պիքսելային թեքություն ունեցող էլեկտրոնային տվիչ՝ հատուկ նախատեսված կամ փոփոխված <<լիցքային բազմապատկման>> ապահովման համար, բացառելով միկրոանցքային թիթեղի մեթոդի կիրառումը:

3. <<III/V բաղադրյալ միացություններով>> կեսահադորդիչային (օր.՝ GaAs կամ GaInAs) լուսակատողներ և փոխանցված էլեկտրոնային լուսակատողներ:

Ծանոթագրություն. 6A002.a.2.3.c. կետով չեն վերահսկվում այն բարդ կիսահադորդիչային լուսակատողները, որոնք նախատեսված են ստորև նշվածների համար առավելագույն լուսազգայունություն ապահովելու համար.

a. Ալիքային երկարությունում 10 mA/W կամ պակաս զագաթնային արձագանք, որը գերազանցում է 400 նմ-ը, բայց փոքր է 1050 նմ-ից,

b. Ալիքային երկարությունում 15 mA/W կամ պակաս զագաթնային արձագանք, որը գերազանցում է 1050 նմ-ը, բայց փոքր է 1800 նմ-ից:

3. Տիեզերքում կիրառման համար ոչ պիտանի տեսափոխակերպման մատրիցներ, այդ թվում.

*Հ.Ծ. Միկրոբոլոմետրերի <<տիեզերքում կիրառման համար ոչ պիտանի>> տեսափոխակերպման մատրիցները սահմանվում են միայն 6A002.a3.i կետում:*

*Տեխնիկական ծանոթագրություն.*

---

---

*Գծային կամ երկտարածաչափ բազմատարր դետեկտորային վանդակները կոչվում են <<տեսափոխակերպման մատրիցներ>>:*  
Ծանոթագրություն 1. 6A002.a.3. կետը ներառում է լուսահաղորդիչ սխեմաները և լուսազավանական սխեմաները:

Ծանոթագրություն 2. 6A002.a.3. կետով չեն վերահսկվում.

- a. Բազմատարր (սակայն 16 տարրից ոչ ավելի) պարկուճված լուսահաղորդիչ վանդակներ, որոնցում օգտագործվում է կապարի սուլֆիդ կամ կապարի սելենիդ,
- b. Պիրոէլեկտրական դետեկտորներ, որոնք պատրաստված են ստորև նշվածներից որևէ մեկից.

- 1. Տրիգլիցինի սուլֆատ և ածանցյալներ,
- 2. Կապար-լանտան-ցիրկոնիումի տիտանատ և ածանցյալներ,
- 3. Լիթիումի տանտալատ,
- 4. Պոլիվինիլիդենի ֆտորիդ և ածանցյալներ, կամ
- 5. Ստրոնցիումի նիոբատ և ածանցյալներ:

- c. <<Տեսափոխակերպման մատրիցներ>>, որոնք հատուկ նախատեսված են կամ փոփոխված <<լիցքի բազմապատկման>> համար, իրենց նախագծով սահմանափակվում են 760 նմ-ից փոքր ալիքային երկարության դեպքում 10 mA/W կամ պակաս լուսազգայունություն և ունեն ստորև նշվող բոլոր հատկանիշները.

- 1. Զգայունության սահմանափակման ներկառուցված մեխանիզմ, որը նախատեսված չէ հեռացման կամ փոփոխման համար, և
- 2. Ստորև նշվածներից որևէ մեկը..

- a. Զգայունության սահմանափակման մեխանիզմը կազմում է դետեկտորի տարրի անբաժանելի մասը կամ միացված է վերջինիս,
- b. <<Տեսափոխակերպման մատրիցը>> աշխատում է միայն զգայունության սահմանափակման մեխանիզմի առկայության դեպքում:

*Տեխնիկական ծանոթագրություն.*

Դետեկտորի տարրի անբաժանելի մաս կազմող զգայունության սահմանափակման մեխանիզմը նախատեսված չէ հեռացման կամ փոփոխման համար առանց շարքից հանելու դետեկտորը:

*Տեխնիկական ծանոթագրություն.*

<<Լիցքային բազմապատկումը>> էլեկտրոնա-օպտիկական ուժեղացման ձևերից մեկն է և սահմանվում է որպես հարվածի

---

---

իռնացման աճի պրոցես: <<Լիցքային բազմապատկման>> տվիչները կարող են ընդունել էլեկտրոնա-օպտիկական ուժեղացուցիչի խողովակի, պինդ վիճակում գտնվող դետեկտորի կամ <<տեսափոխակերպման մատրիցի>> ձևը:

a. <<Տիեզերքում կիրառման համար ոչ պիտանի>> <<տեսափոխակերպման մատրիցներ>>, որոնք ունեն բոլոր հետևյալը.

1. Առանձին տարրեր, որոնց զագաթնային զգայունությունը ալիքային երկարության տիրույթում մեծ է 900 նմ-ից, բայց փոքր՝ 1 050 նմ-ից, և

2. Ստորև նշվածներից որևէ մեկը.

a. Զգայունության <<ժամանակի հաստատունը>> 0,5 նս-ից փոքր է, կամ

b. Հատուկ նախատեսված են կամ փոփոխված <<լիցքի բազմապատկման>> համար և ունեն 10 mA/W գերազանցող առավելագույն զգայունություն,

c. <<Տիեզերքում կիրառման համար ոչ պիտանի>> ոչ գծային (2-տարածաչափ) <<տեսափոխակերպման մատրիցներ>>, որոնց առանձին տարրերի զագաթնային զգայունությունը ալիքի երկարության տիրույթում մեծ է 1 200 նմ-ից, բայց փոքր՝ 30 000 նմ-ից,

Ն.Օ. Միլիկոնի կամ այլ նյութի հիման վրա պատրաստված <<միկրոբոլոմետրային>> <<տիեզերքում կիրառման համար ոչ պիտանի>> <<տեսափոխակերպման մատրիցները>> սահմանվում են միայն 6A002.a.3.f. կետում:

d. <<Տիեզերքում կիրառման համար ոչ պիտանի>> գծային (1-տարածաչափ) <<տեսափոխակերպման մատրիցներ>>, որոնք ունեն բոլոր ստորև նշվածները.

1. Առանձին տարրեր, որոնց զագաթնային զգայունությունը ալիքային երկարության տիրույթում մեծ է 1 200 նմ-ից, բայց փոքր՝ 3 000 նմ-ից, և

2. Ստորև նշվածներից որևէ մեկը.

a. Դետեկտորի տարրի <<սքանավորման ուղղության>> չափման և դետեկտորի տարրի <<խաչաձև սքանավորման ուղղության>> չափման միջև հարաբերակցությունը 3,8-ից փոքր է, կամ

b. Տարրում ազդանշանների վերլուծություն (SPRITE),

---

<<տեսափոխակերպման մատրիցները>> (մինչև 32 տարր ունեցող), որոնց դետեկտորային տարրերը պատրաստված են միայն գերմանիումի նյութից:

Տեխնիկական ծանոթագրություն.

6A002.a.3. կետի նպատակներով <<խաչաձև սքանավորման ուղղությունը>> սահմանվում է որպես առանցք, որը զուգահեռ է դետեկտորի գծային վանդակի տարրերին, իսկ <<սքանավորման ուղղությունը>> սահմանվում է որպես առանցք, որն ուղղահայաց է դետեկտորի գծային վանդակի տարրերին:

e. Տիեզերքում կիրառման համար ոչ պիտանի գծային (1-տարածաչափ) տեսափոխակերպման մատրիցներ, որոնց առանձին տարրերի գազաթնային զգայունությունը ալիքի երկարության տիրույթում մեծ է 3 000 նմ-ից, բայց փոքր՝ 30 000 նմ-ից,

f. Միկրոբոլոմետրային նյութերից պատրաստված տիեզերքում կիրառման համար ոչ պիտանի տեսափոխակերպման ինֆրակարմիր մատրիցներ, որոնք ունեն ալիքային երկարության տիրույթում 8,000-ից մինչև 14,000 նմ չֆիլտրված զգայունություն ունեցող առանձին տարրեր:

Տեխնիկական ծանոթագրություն.

6A002.a.3.f. կետի նպատակներով միկրոբոլոմետրը սահմանվում է որպես ջերմային պատկերման դետեկտոր, որը դետեկտորի մեջ ինֆրակարմիր ճառագայթման կլանման արդյունքում ջերմաստիճանի փոփոխության հետևանքով կիրառվում է ցանկացած կիրառելի ազդանշան ստեղծելու համար:

g. <<Տիեզերքում կիրառման համար ոչ պիտանի>> <<տեսափոխակերպման մատրիցներ>>, որոնք ունեն բոլոր ստորև նշվածները.

1. Առանձին տարրեր, որոնց գազաթնային զգայունությունը ալիքային երկարության տիրույթում մեծ է 400 նմ-ից, բայց փոքր՝ 900 նմ-ից,
2. Հատուկ նախագծված են կամ փոփոխված <<լիցքի բազմապատկում>> ապահովելու համար և 760 նմ-ից բարձր ալիքային երկարության պայմաններում ունեն 10 mA/W-ից բարձր զգայունություն, և
3. Տարրերի թիվը 32-ից մեծ է:

b. <<Պատկերի միասպեկտր սովիչներ>> և <<պատկերի բազմասպեկտր սովիչներ>>, որոնք հատուկ մշակված են հեռավորական զննման ժամանակ կիրառելու համար և ունեն հետևյալ բնութագրերից որևէ մեկը.

---

- 
1. 200 մկռադ (միկրոռադիան)-ից պակաս ակնթարթային տեսանելիության դաշտ (USF), կամ
  2. Նախատեսված են 400 նմ-ից մինչև 30000 նմ ալիքային երկարությունների ընդգրկույթում աշխատելու համար և.

- a. Ապահովում են պատկերի ելքային տվյալներ թվային ֆորմատով:
- b. Ունեն հետևյալ բնութագրերը.

1. <<Տիեզերքում կիրառման համար պիտանի>> են, կամ
2. Նախագծված են թռչող ապարատներում աշխատելու համար՝ 2,5 մկռադ (միկրոռադիան)-ից պակաս (USF) ունեցող ոչ սիլիցիումային դետեկտորներ օգտագործելու դեպքում:

Ծանոթագրություն. 6A002.b.1. կետով չեն վերահսկվում այն <<պատկերի մոնոսպեկտրային տվիչները>>, որոնց զագաթնային զգայունությունը արձանագրվում է 300 նմ-ից մեծ, բայց 900 նմ-ից փոքր ալիքային երկարության տիրույթում և որոնք ներառում են միայն ստորև նշվող <<տիեզերքում կիրառման համար ոչ պիտանի>> դետեկտորները կամ <<տիեզերքում կիրառման համար ոչ պիտանի>> <<տեսափոխակերպման մատրիցները>>.

1. Լիցքային կապի սարքեր (CCD), որոնք նախատեսված կամ փոփոխված չեն <<լիցքի բազմապատկման>> ապահովման համար, կամ
2. Մետաղական օքսիդի լրացուցիչ կիսահաղորդչային (CMOS) սարքեր, որոնք նախատեսված կամ փոփոխված չեն <<լիցքի բազմապատկման>> ապահովման համար:

- c. Պատկերի <<ուղղակի դիտման>> սարքավորումներ, որոնք ներառում են ստորև նշվածներից որևէ մեկը.

1. 6A002.a.2.a. կամ 6A002.a.2.b. կետում նշված էլեկտրոնա-օպտիկական փոխակերպիչները,
2. 6A002.a.3 կամ 6A002.e. կետում նշված <<տեսափոխակերպման մատրիցները>>:

Տեխնիկական ծանոթագրություն.

<<Ուղղակի դիտումը>> վերաբերում է պատկերի ստացման այն սարքավորումներին, որոնք մարդ-դիտողին ներկայացնում են տեսանելի պատկերը՝ առանց էլեկտրոնային ազդանշանի փոխակերպելու, և որոնք չեն կարող պատկերը գրանցել կամ պահպանել ո՛չ լուսանկարչական ձևով, և ո՛չ էլ էլեկտրոնային կամ այլ եղանակով:

Ծանոթագրություն. 6A002 c. կետով չեն վերահսկվում հետևյալ սարքավորումները, որոնք պարունակում են GaAs կամ GaInAs

---

---

*նյութերից տարբերվող նյութերի հիմքով պատրաստված լուսակատողներ.*

*a. Արտադրական կամ քաղաքացիական ազդանշանային սարքեր, էրթենկությունը կամ արտադրական շարժումը կառավարող սարքեր կամ հաշվիչ համակարգեր:*

*b. Բժշկական սարքավորումներ:*

*c. Նյութերի ստուգման, տեսակավորման կամ վերլուծման համար օգտագործվող տեխնոլոգիական սարքավորումներ:*

*d. Արտադրական վառարանների համար նախատեսված հրդեհի ազդանշանիչներ:*

*e. Լաբորատոր օգտագործման համար հատուկ մշակված սարքավորումներ:*

d. Օպտիկական տվիչների համար նախատեսված հատուկ օժանդակ բաղադրիչներ, ինչպիսիք են.

1. <<Տիեզերքում կիրառման համար պիտանի>> կրիոգենային հովացուցիչներ,

2. <<Տիեզերքում կիրառման համար ոչ պիտանի>> կրիոգենային հովացուցիչներ՝ աղբյուրի հովացման 218K (-55 օC)-ից ցածր ջերմաստիճանով, ինչպիսիք են.

- a. Փակ ցիկլի կրիոգենային հովացուցիչներ, որոնց միջին աշխատատևությունը մինչև խափանումը կամ միջին աշխատատևությունը խափանումների միջև 2500 ժամից ավելի է,
- b. Ջոուլ-Թոմսոնի ինքնակարգավորվող մինի հովացուցիչներ՝ անցուղու 8 մմ-ից պակաս արտաքին տրամագծով:

3. Օպտիկական զգայուն մանրաթելեր, որոնք բաղադրության կամ կառուցվածքային առումով հատուկ պատրաստված են կամ ծածկույթապատման միջոցով հատուկ ձևափոխված են այնպես, որ դառնան ձայնա -, ջերմա -, իներցիա -, էլեկտրամագնիսազգայուն կամ միջուկային ճառագայթման նկատմամբ զգայուն:

e. Չեն օգտագործվում:

---

6A002, a, 1	854140 854140900
-------------	---------------------

6A002, a, 2, a	854140 901380 854140900
----------------	-------------------------------

6A002, a, 2, b	854140
----------------	--------

---

	854140900
6A002, a, 3	854140 854140900
6A002, b	854140 854140900 854089000
6A002, c, 1	854020 854099000
6A002, c, 2	854099000
6A002, d, 1	901380300 901380900
6A002, d, 2	901380300 901380900
6A002, d, 3	901380300 901380900 900190000
6A002, e	901380300 901380900
6A003	Խցիկներ, համակարգեր կամ սարքավորումներ և դրանց բաղադրիչներ, այդ թվում.  Հ.Ծ. Տես նաև 6A203 կետը:  Հ.Ծ.Ստորջրյա օգտագործման համար հատուկ մշակված կամ ձևափոխված խցիկների վերաբերյալ տե՛ս 8A002.d. (N5B4) և 8A002.e. կետերը:  a. Հսկիչ-փորձարկային սարքերի խցիկներ, ինչպիսիք են.  <i>Ծանոթագրություն. 6A203.a.3-ից մինչև 6A203.a.5 կետերում նկարագրված հսկիչ-փորձարկային սարքերի խցիկների պարամետրերը պետք է գնահատվեն ըստ դրանց առավելագույն ցուցանիշների՝ օգտագործելով խցիկների արտադրողի հատկորոշումների համաձայն մատչելի &lt;&lt;էլեկտրոնային հանգույցները&gt;&gt;:</i>  1. Ժապավենի 8 մմ-ից մինչև 16 մմ ցանկացած ֆորմատ օգտագործող

---

բարձր արագության գրանցող կինոխցիկներ, որոնցում ժապավենն անընդհատ շարժվում է առաջ գրանցման ամբողջ ժամանակահատվածում և որոնք ընդունակ են գրանցել 13150 կադր/վրկ-ից բարձր արագություն:

*Ծանոթագրություն. 6A003.a.1. կետով չեն հսկվում սովորական քաղաքացիական նպատակների համար նախատեսված կինոխցիկները:*

2. Անշարժ ժապավենով մեխանիկական բարձր արագության խցիկներ, որոնք ընդունակ են գրանցել 1000000 կադր/վրկ-ից ավելի արագությամբ՝ 35 մմ ժապավենի լրիվ կադրային բարձրության համար, և համամասնորեն ավելի բարձր արագությամբ՝ կադրերի ավելի փոքր բարձրության համար, կամ համամասնորեն ավելի ցածր արագությամբ՝ կադրերի ավելի մեծ բարձրության համար:

3. Մեխանիկական կամ էլեկտրոնային լուսաժամանակագրեր՝ 10 մմ/մկմ գրանցման արագությամբ:

4. Էլեկտրոնային փոխանցող խցիկներ՝ կադրային սինքրոնացմամբ, որոնք ունեն 1000000 կադր/վրկ-ից ավելի արագություն:

5. Էլեկտրոնային փոխանցող խցիկներ, որոնք ունեն բոլոր հետևյալ բնութագրերը.

a. Էլեկտրոնային փակադակի արագությունը (ստորբավորման ունակությունը) 1 մկվրկ-ից պակաս է յուրաքանչյուր լրիվ կադրի համար,

b. Կադրավորման արագություն ապահովող ընթերցման ժամանակը վայրկյանում 125 լրիվ կադրից ավելի է,

6. Խցիկների համար նախատեսված համակցիչներ, որոնք ունեն բոլոր հետևյալ բնութագրերը.

a. Հատուկ մշակված կամ ձևափոխված խցիկների համակցիչներ, որոնք կառուցվացքային առումով կարող են համապատասխանել 6A003.a,

b. Որոնց շնորհիվ խցիկը կարող է ստանալ 6A003.a.3, 6A003.a.4, 6A003.a.5 կետերին համապատասխանող գործարանային բնութագրեր:

b. Պատկերի ձևավորման խցիկներ, ինչպիսիք են.

*Ծանոթագրություն. 6A003. b. կետով չեն վերահսկվում հեռուստատեսային խցիկները հեռարձակման համար հատուկ մշակված հեռուստատեսային կամ տեսախցիկները:*

---



---

1. Պիդմարմնային տվիչներ պարունակող տեսախցիկներ, որոնց պիկային պատկերումը ավելին չէ 10 նմ-մինչև 30000 նմ ալիքի երկարության ամպլիտուդայից և որոնք ունեն բոլոր հետևյալ բնութագրերը.

a. Ունեն հետևյալ բնութագրերից ցանկացածը.

1. Մոնոքրոմային (սև ու սպիտակ) տեսախցիկների դեպքում՝ պնդամարմին մեկ մատրիցի հաշվով ավելի քան  $4 * 10^6$  ակտիվ պիքսելներ,
2. Պնդամարմին երեք մատրից ներառող գունավոր տեսախցիկների դեպքում՝ մեկ պնդամարմին մատրիցի հաշվով ավելի քան  $4 * 10^6$  ակտիվ պիքսելներ, կամ
3. Պնդամարմին մեկ մատրից ներառող գունավոր տեսախցիկների դեպքում՝ մեկ պնդամարմին մատրիցի հաշվով ավելի քան  $12 * 10^6$  ակտիվ պիքսելներ, և

b. Ունեն ստորև նշվածներից որևէ մեկը.

1. Օպտիկական հայելիներ, որոնք սահմանվում են 6A004.a. կետում,
2. Օպտիկական վերահսկման սարքավորում, որոնք սահմանվում են 6A004.d. կետում, կամ
3. Խցիկների արտաձած հաջորդական տվյալներին ներքին կարգով հղումներ անելու կարողություն:

*Տեխնիկական ծանոթագրություն*

1. Այս կետի իմաստով թվային տեսախցիկները պետք է գնահատվեն <<ակտիվ պիքսելների>> առավելագույն թվով, որոնք օգտագործվում են շարժվող պատկերների տեսագրման համար:
2. Այս կետի իմաստով խցիկի հավաքագրած տվյալները անհրաժեշտ են խցիկի տեսողության դաշտը երկրի նկատմամբ բնորոշելու համար: Դա ներառում է 1) խցիկի տեսագծի հորիզոնական անկյունը երկրագնդի մագնիսական դաժտի ուղղության նկատմամբ 2) ուղղահայաց անկյունը խցիկի տեսագծի և երկրագնդի հորիզոնի նկատմամբ:

2. Տեսագրող խցիկներ և տեսագրող խցիկների համակարգեր, որոնք ունեն բոլոր հետևյալ բնութագրերը.

a. Օժտված են առնվազն 10 նմ-մինչև 30000 նմ ալիքի երկարության ամպլիտուդային մոդուլացիայով,

b. Գծային դետեկտորային մատրիցներ՝ յուրաքանչյուր վանդակի վրա ավելի քան 8192 տարրով:

c. Մեկ ուղղությամբ մեխանիկական տեսագրում կատարելու

---

---

ունակություն:

3. Էլեկտրոնա-օպտիկական փոխակերպիչներ պարունակող պատկերի ձևավորման խցիկներ, որոնք ունեն 6A002.a.2.a. կամ 6A002.a.2.b. կետում նշված բնութագրերը:

4. <<Տեսափոխակերպման մատրից>> ունեցող՝ պատկերի ձևավորման խցիկներ, որոնք.

a. Ներառում են 6A002.a.3a.-ից 6A002.a.3e կետերում նշված <<տեսափոխակերպման մատրիցները>>,

b. Ներառում են 6A002.a.3.f. կետում նշված <<տեսափոխակերպման մատրիցները>>,

c. Ներառում են 6A002.a.3.g. կետում նշված <<տեսափոխակերպման մատրիցները>>:

*Ծանոթագրություն 1. 6A003.b.4 կետում սահմանվող պատկերային խցիկները ներառում են <<տեսափոխակերպման մատրիցներ>> ունեցող՝ պատկերի ձևավորման խցիկները, ազդանշանի մշակման էլեկտրոնային սարքերի հետ միասին, ինտեգրալային ցանցից դուրս էներգիայի միացումից հետո առնվազն նվազագույնը անալոգ թվային ազդանշան տալու համար:*

*Ծանոթագրություն 2. 6A003.b.4 կետով չեն վերահսկվում մինչև 12 տարր պարունակող գծային <<տեսափոխակերպման մատրիցներ>> ունեցող՝ պատկերի ձևավորման խցիկները, որոնք չեն օգտագործում ժամանակային հապաղումով և ինտեգրումով տարրեր և նախատեսված են ստորև նշված կիրառումներից որևէ մեկի համար.*

a. Արտադրական կամ քաղաքացիական ազդանշանային համակարգեր, երթևեկության կամ արտադրական շարժման կառավարում կամ հաշվիչ համակարգեր:

b. Արտադրական սարքավորումներ շինություններում, սարքավորումներում և արտադրական պրոցեսներում ջերմային հոսքերը հսկելու և արտապատկերելու համար:

c. Տեխնոլոգիական սարքավորումներ նյութերի հատկությունների ստուգման, տեսակավորման կամ վերլուծության համար:

d. Լաբորատոր օգտագործման համար հատուկ նախագծված սարքավորումներ:

e. Բժշկական սարքավորումներ:

*Ծանոթագրություն 2. 6A003.b.4 կետով չեն վերահսկվում պատկերի ձևավորման այն խցիկները, որոնք ունեն ստորև նշվածներից որևէ մեկը.*

a. Կադրի առավելագույն հաճախականությունը հավասար կամ պակաս է 9 Հց-ից

---

---

b. Ունեն հետևյալ առանձնահատկությունները.

1. Ունեն նվազագույն հորիզոնական և ուղղահայաց ակնթարթային տեսադաշտ ամենաքիչը 10մռադ/պիկս (միլիռադիան/պիկսել)

2. Ունեն տեղադրված ֆիքսված կիզակետային երկարությամբ ոսպնակ որը այնպես է նախագծված որ չի կարող հեռացվել

3. Չունեն <<ուղղակի տեսադաշտի>> էկրան և

4. Ունեն հետևյալ առանձնահատկություններից որևէ մեկը.

a. Չունեն հարմարանք ընդունած տեսադաշտի տեսանելի պատկերն արտաձելու համար կամ

b. Խցիկը նախագծված է որոշակի կիրառության համար և չի կարող օգտագործողի կողմից փոփոխության ենթարկվել կամ

c. Խցիկը հատուկ նախատեսված է քաղաքացիական նշանակության մինչև 3 տոննա քաշ (փոխադրամիջոցի բրուտո քաշ) ունեցող ցամաքային փոխադրամիջոցում տեղադրման համար, և ունի բոլոր հետևյալ առանձնահատկությունները.

1. Աշխատում է միայն այն դեպքում, երբ այն.

a. Տեղադրվում է քաղաքացիական նշանակության մարդատար ցամաքային այն փոխադրամիջոցի վրա, որի համար այն նախատեսված է, կամ

b. Հհատուկ նախագծված արտոնագրված փորձարկման սարք է և

2. Պարունակում է ակտիվ մեխանիզմ, որի շնորհիվ խցիկը դադարում է աշխատելուց, երբ այն հեռացվում է փոխադրամիջոցից:

### Տեխնիկական ծանոթագրություն.

1. Ակնթարթային տեսադաշտը հատկորոշված 6A003.b.4 կետի Ծանոթագրություն 3-ում հորիզոնական և ուղղահայաց US-ների նվազագույն թվային արժեքն ունի:

Հորիզոնական ակնթարթային տեսադաշտ =  
Հոր.ակն.տադշտ/հորիզոնական դետեկցիայի տարրերի թվի վրա

Ուղղահայաց ակնթարթային տեսադաշտ =  
Ողղ.ակն.տադշտ/ուղղահայաց դետեկցիայի տարրերի թվի վրա

2. 6A003.b.4 կետի Ծանոթագրություն 3-ում սահմանվող ,ուղիղ տեսադաշտը վերաբերում է պատկեր արտաձող տեսախցիկին, որն աշխատում է ինֆրակարմիր սպեկտրում, որը տեսանելի պատկեր է ներկայացնում մարդ դիտորդին՝ օգտագործելով աչքի տեսողությանը մոտ միկրո տեսապատկեր, որը գործում է ցանկացած թեթև ռեժիմով աշխատող մեխանիզմով:

Ծանոթագրություն 4. 6A003.b.4.c.կետով չեն վերահսկվում

---

---

արտապատկերող այն խցիկները, որոնք.

a. Ունեն բոլոր հետևյալ բնութագրերը.

1. Երբ խցիկը հատուկ նախատեսված է շենքային տարածքի ներսում տեղադրվող համակարգերում կամ սարքավորումներում որպես բաղադրիչ տեղադրման համար, ապա իր նախագծմամբ այն սահմանափակվում է միայն մեկ կիրառության համար, մասնավորապես.

- a. Արդյունաբերական պրոցեսների մոնիտորինգ, որակի հսկողություն կամ նյութերի հատկանիշների վերլուծություն,
- b. Հատուկ գիտահետազոտական աշխատանքների համար նախատեսված լաբորատոր սարքավորումներ,
- c. Բժշկական սարքավորումներ,
- d. Ֆինանսական խարդախության դեպքերի բացահայտման սարքավորումներ, և

2. Աշխատում է միայն այն դեպքում, երբ այն տեղադրված է ստորև նշվածներից որևէ մեկում.

- a. Համակարգ(եր) կամ սարքավորումներ, որոնց համար այն նախատեսված է, կամ
- b. Հատուկ նախագծված արտոնագրված պահպանման համակարգ, և

6D003	<p>a. Այլ ծրագրային ապահովում, այդ թվում.</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Ձայնային ճառագայթի ձևավորման համար հատուկ մշակված &lt;&lt;ծրագրային ապահովում&gt;&gt; &lt;&lt;Ժամանակի իրական մասշտաբում&gt;&gt; պասիվ ստացման նպատակով ձայնային տվյալները մշակելու համար՝ օգտագործելով քարշակվող հիդրոֆոնային վանդակները:</li> <li>2. &lt;&lt;Ծրագրի տեքստ&gt;&gt; &lt;&lt;Ժամանակի իրական մասշտաբում&gt;&gt; պասիվ ստացման նպատակով ձայնային տվյալները մշակելու համար: օգտագործելով քարշակվող հիդրոֆոնային վանդակները:</li> <li>3. &lt;&lt;Ծրագրային ապահովում&gt;&gt;, որը հատուկ մշակված է ստորջրյա կամ սուզված համակարգերի ձայնային ճառագայթի ձևավորման համար՝ &lt;&lt;Ժամանակի իրական մասշտաբում&gt;&gt; պասիվ ստացման նպատակով ձայնային տվյալները մշակելու համար:</li> <li>4. &lt;&lt;Ծրագրի տեքստ&gt;&gt; &lt;&lt;Ժամանակի իրական մասշտաբում&gt;&gt; պասիվ ստացման նպատակով ձայնային տվյալները մշակելու համար՝ օգտագործելով ստորջրյա կամ սուզված համակարգերը:</li> </ol> <p>b. Չի կիրառվում:</p> <p>c. &lt;&lt;Ծրագրային ապահովում&gt;&gt;, որը նախատեսված է կամ փոփոխված 6A002.a.3.f. կետում սահմանվող &lt;&lt;տեսափոխակերպման մատրիցների&gt;&gt; ներառման համար և նախատեսված կամ փոփոխված է կադրերի հաճախականության սահմանափակությունը վերացնելու և 6A003.b.4. կետի 3.a. ծանոթագրությունում սահմանվող կադրերի հաճախականությունը գերազանցելու նպատակով:</p> <p>c. Չի կիրառվում:</p> <p>d. Չի կիրառվում:</p> <p>e. &lt;&lt;Ծրագրային ապահովում&gt;&gt;, այդ թվում.</p> <ol style="list-style-type: none"> <li>1. &lt;&lt;Ծրագրային ապահովում&gt;&gt;, որը հատուկ նախատեսված է</li> </ol>

---

շարժական հարթակների վրա աշխատող մագնիսական տվիչների մագնիսական և էլեկտրական դաշտերի <<հավասարակշռման համակարգերի>> համար,

2. <<Ծրագրային ապահովում>>, որը հատուկ նախատեսված է շարժական հարթակների վրա մագնիսական և էլեկտրական դաշտերի անոմալիաների բացահայտման համար,

g. <<Ծրագրային ապահովում>>, որը հատուկ նախատեսված է

ձգողականության չափիչ սարքերի կամ ձգողականության

գրադիոմետրերի կինետիկ ազդեցության ուղղման համար,

h. <<Ծրագրային ապահովում>>, այդ թվում.

1. Օդային երթևեկության կառավարման (ՕԵԿ) <<ծրագրային ապահովման>> կիրառական <<ծրագրեր>>՝ տեղադրված օդային երթևեկության կառավարման կենտրոններում շահագործվող ընդհանուր նշանակության համակարգիչներում, որոնք ունեն հետևյալ տեխնիկական հնարավորությունները.

a. Ավելի քան 150 <<համակարգային ուղիների>> համաժամանակյա վերլուծություն և արտաբերում էկրանին, կամ

b. Չորսից ավելի առաջնային ռադարներից էլքային տվյալների ընդունում,

2. <<Ծրագրային ապահովում>> ալեհավաքների շրջահոսիչների նախագծման կամ <<արտադրության>> համար, որոնք ունեն հետևյալ բոլոր բնութագրերը.

a. Հատուկ նախատեսված են 6A008.e. կետում սահմանվող՝ ճառագայթի էլեկտրոնային տեսաձրումով ֆազավորված ալեհավաքի վանդակների պաշտպանության համար,

b. Որոնց կիրառման արդյունքում կողային թերթիկների արդյունարար միջին մակարդակը ավելի քան 40 դԲ-ով ցածր է գլխավոր ճառագայթի առավելագույն մակարդակից:

*Տեխնիկական ծանոթագրություն. 6D003.d.2.b. կետում նշված կողային թերթիկների միջին մակարդակը որոշվում է ողջ վանդակի համար, բացառությամբ գլխավոր ճառագայթի և դրա երկու կողմերում գտնվող առաջին երկու կողային թերթիկների անկյունային գործակցի:*

---

6D102	<<Ծրագրային ապահովում>>, որը հատուկ մշակված է 6A108 կետով վերահսկվող արտադրանքների <<օգտագործման>> համար:
6D103	<<Ծրագրային ապահովում>>՝ տվյալների հետադիմացային մշակման համար, որը հնարավորություն է տալիս որոշել թռչող ապարատի դիրքը թռիչքի ամբողջ հետագծով, որը հատուկ մշակված կամ ձևափոխված է <<հրթիռների>> համար:  <i>Ծանոթագրություն. 6A108.b. կետում հրթիռ նշանակում է ամբողջական հրթիռային համակարգեր և մարդու կողմից չուղղորդվող օդային փոխադրական համակարգեր, որոնք կարող են տեղաշարժվել 300 կմ-ից ավելի մեծ տարածքով:</i>
<b>6E</b>	<b>Տեխնոլոգիա</b>
6E001	<<Տեխնոլոգիաներ>>, որոնք, ընդհանուր տեխնոլոգիական ծանոթագրությանը համապատասխան, նախատեսված են 6A, 6B, 6C կամ 6D կետերով հսկվող սարքավորումների, նյութերի կամ ծրագրային ապահովման <<մշակման>> համար:
6E002	<<Տեխնոլոգիաներ>>, որոնք, ընդհանուր տեխնոլոգիական ծանոթագրությանը համապատասխան, նախատեսված են 6A, 6B, կամ 6C կետերում սահմանվող սարքավորումների կամ նյութերի <<արտադրության>> համար:
6E003	<p>a. Այլ &lt;&lt;տեխնոլոգիաներ&gt;&gt;, այդ թվում.</p> <ol style="list-style-type: none"> <li data-bbox="405 1395 1465 1641">1. &lt;&lt;Տեխնոլոգիաներ&gt;&gt;՝ 99,5% կամ ավելի բարձր միասեռության հասնելու նպատակով օպտիկական մակերևութների մշակման և ծածկույթապատման համար, որոնք նախատեսված են գլխավոր առանցքի 500 մմ-ից ավելի տրամագիծ կամ երկարություն ունեցող օպտիկական ծածկույթների համար՝ <math>5 \times 10^{-3}</math>-ից պակաս կորստով (կլանում կամ ցրում):</li> </ol> <p><b>Հ.Օ. Տես նաև 2E003.F կետը:</b></p> <ol style="list-style-type: none"> <li data-bbox="405 1776 1465 1977">2. Օպտիկական սարքերի պատրաստման &lt;&lt;տեխնոլոգիաներ&gt;&gt;, որոնք օգտագործում են ալմաստների միակետ պտտման մեթոդները՝ 0,5 քառ.մ-ից ավելի մակերես ունեցող ոչ տափակ մակերևութների վրա մշակման 10 նմ-ից բարձր վերջնական միջին քառակուսային ճշգրտություն ստանալու համար:</li> </ol> <p>b. &lt;&lt;Տեխնոլոգիաներ&gt;&gt;, որոնք անհրաժեշտ են մասնագիտացած</p>



---

ախտորոշիչ գործիքների կամ թիրախների <<մշակման>>, <<արտադրության>> կամ փորձարկային սարքավորումներում <<օգտագործման>> համար՝ <<գերբարձր հզորության լազերների>> փորձարկման կամ <<գերբարձր հզորության լազերների>> ճառագայթներով ճառագայթվող նյութերի կայունության փորձարկման և գնահատման նպատակով:

---

6E101 <<Տեխնոլոգիաներ>>, որոնք, ընդհանուր տեխնոլոգիական ծանոթագրության համապատասխան, նախատեսված են 6A002, 6A007.b. և c., 6A008, 6A102, 6A107, 6A108, 6B108, 6D102 կամ 6D103 կետերում սահմանվող սարքավորումների կամ <<ծրագրային ապահովման>> <<օգտագործման>> համար:

*Ծանոթագրություն. 6E101 կետում սահմանվում են միայն 6A008 կետում սահմանվող սարքավորումների <<տեխնոլոգիաները>>, երբ դրանք նախատեսված են օդային կիրառության համար և պիտանի են հրթիռներում օգտագործման համար:*

---

6E201 <<Տեխնոլոգիաներ>>, որոնք, ընդհանուր տեխնոլոգիական ծանոթագրությանը համապատասխան, նախատեսված են 6A003, 6A005.a.2.a., 6A005.b.3., 6A005.b.4., 6A005.b.6., 6A005.c.2., 6A005.d.3.c., 6A005.d.4.c., 6A202, 6A203, 6A205, 6A225 կամ 6A226 կետերում սահմանվող սարքավորումների <<օգտագործման>> համար:

---

## և ավիացիոն էլեկտրոնիկա

---

### 7A Համակարգեր, սարքավորումներ և բաղադրիչներ

*Հ.Ծ. Ստորջրյա ապարատների ինքնադեկասարքերի վերաբերյալ տես Կատեգորիա 8-ը:*

*Ռադիոտեղորոշման սարքավորումների վերաբերյալ տես Կատեգորիա 6-ը:*

---

7A001 Արագացումաչափեր, որոնք նախատեսված են նավագնացության կամ ուղղորդման ինտեգրոն համակարգերի համար և ունեն ստորն նշված բնութագրերից որևէ մեկը, և դրանց համար հատուկ մշակված բաղադրիչներ.

a. Գծային արագացումաչափեր՝ օժտված հետևյալ բնութագրիչներով.

1. Հատուկ նախագծված գծային արագացումների մակարդակի վրա գործելու համար, որոնք հավասար են կամ պակաս են 15գր-ից և օժտված հետևյալ բնութագրիչներից որևէ մեկով:

a. <<Շեղման>> <<կայունությունը>> 130 միկրո գրամից ցածր է հաստատագրված չափաբերված մեծության համեմատ՝ 1 տարի ժամանակաշրջանի ընթացքում կամ

b. <<Մասշտաբային գործակցի>> <<կայունությունը>> միլիոնում 130 մասից ցածր է հաստատագրված չափաբերված մեծության համեմատ՝ 1 տարի ժամանակաշրջանի ընթացքում:

2. Նախատեսված են գծային արագացումների 15 գր. գերազանցող մակարդակների պայմաններում աշխատելու համար և օժտված հետևյալ բնութագրիչներով

a. <<Շեղման>> <<կայունությունը>> 5000 միկրո գրամից ցածր է հաստատագրված չափաբերված մեծության համեմատ՝ 1 տարի ժամանակաշրջանի ընթացքում կամ

b. <<Մասշտաբային գործակցի>> <<կայունությունը>> միլիոնում 2500 մասից ցածր է հաստատագրված չափաբերված մեծության համեմատ՝ 1 տարի ժամանակաշրջանի ընթացքում:

3. Նախատեսված են գծային արագացումների 100 գր. գերազանցող մակարդակների պայմաններում աշխատելու համար

b. Անկյունային կամ պտույտային արագացումաչափերը նախագծված են

---

---

100 գր-ից ավելի բարձր գծային արագացումների պայմաններում աշխատելու համար:

---

7A001, a    901420  
                  901420200  
                  901420800  
                  903289000

7A001, b    901420  
                  901420200  
                  901420800  
                  903289000

7A001, c    901420  
                  901420200  
                  901420800  
                  903289000

---

7A002        Ստորև նշված բնութագրերից ցանկացածն ունեցող հոլակներ և դրանց համար հատուկ մշակված բաղադրիչներ.

Հ.Ծ. Տես նաև 7A102 կետը:

*Հ.Ծ. անկյունային կամ պտույտային արագացումաչափերի համար տես 7A001.b. կետը:*

a. 1 g ազդեցության պայմաններում չափված <<դրեյֆի (հոսընթացի) արագացման>> <<կայունությունը>> 1 ամսվա ընթացքում՝ հաստատագրված չափաբերված մեծության համեմատ, ավելի պակաս (լավ) քան 0.5 աստիճան ժամում արժեքով, երբ դրանք նախատեսված են ընդհուպ մինչև 100 գրամ գծային արագացման մակարդկաների:

b. 0,0033 աստիճանի կամ դրանից պակաս պատահական <<անկյունային դեգերումով>> ժամի քառակուսի արմատի համեմատ կամ

*Ծանոթագրություն. 7A002.b. կետով չեն վերահսկվում պտտվող զանգվածային հոլակները:*

*Տեխնիկական ծանոթագրություն. Պտտվող զանգվածային հոլակները այն հոլակներն են, որոնք օգտագործում են անընդհատ պտտվող զանգվածը անկյունային պտույտը բացահայտելու համար:*

c. Վայրկյանում 500 աստիճանի ակվ դրանից ավելի արագացման դիապազոնով և օժտված հետևյալ բնութագրիչներով.

---

---

1. ց ազդեցության պայմաններում չափված <<դրեյֆի (հոսընթացի) արագացման>> <<կայունությունը>> 3 ամսվա ընթացքում՝ հաստատագրված չափաբերված մեծության համեմատ, ավելի պակաս (լավ) քան 40 աստիճան ժամում արժեքով, կամ

2. 0,02 աստիճանի կամ դրանից պակաս պատահական <<անկյունային դեգերումով>> ժամի քառակուսի արմատի համեմատ, կամ

d. Նախատեսված են ընդհուպ մինչև 100 գրամ գծային արագացման մակարդկաների համար:

---

7A002, a      901420  
                  901420200  
                  901420800  
                  901480000  
                  901490000  
                  903289000

7A002, b      901420  
                  901420200  
                  901420800  
                  901480000  
                  901490000  
                  903289000

---

7A003            Իներցիոն համակարգեր և հատուկ մշակված բաղադրիչներ, այդ թվում.

Հ.Ծ. Տես նաև 7A103 կետը:

a. Նավագնացության իներցիոն համակարգեր (հարթակային կարդանային և անհարթակ անկարդանային) և իներցիական սարքավորումներ, որոնք մշակված են թռչող ապարատների, վերգետնյա փոխադրամիջոցների կամ տիեզերական ապարատների նավիգացիայի, դիրքի որոշման, ուղղորդման կամ կառավարման համար և ունեն ստորև նշված բնութագրերից որևէ մեկը, և դրանց համար հատուկ մշակված բաղադրիչներ.

1. Նորմալ ճշտումից հետո ժամում 0,8 ծովային մղոն նավագնացության սխալ (զուտ իներցիական) (50-տոկոսանոց կամ դրանից փոքր շրջանային հավանական սխալ (ՇՀՄ)), կամ

2. Նախատեսված են 10 ց-ից բարձր գծային արագացումների պայմաններում աշխատելու համար:

---

---

b. Հիբրիդ նավագացիոն իներցիոն համակարգեր ներկառուցված Համաշխարհային արբանյակային համակարգի(երի) (GNSS) կամ <<Տվյալային համակարգով նավիգացիայով>> (DBRN) նավիգացիայի, դիրքի որոշման, ուղղորդման կամ կառավարման համար և ունեն ստորև նշված բնութագրերից որևէ մեկը, և դրանց համար հատուկ մշակված բաղադրիչներ. ըստ նորմալ ճշտումի, INS նավիգացիոն դիրքի ճշտություն GNSS-ի կամ DBRN-ի կորցնելուց հետո մոտավորապես չորս րոպե ընթացքում 10 մետր կամ դրանից փոքր շրջանային հավանական սխալով (ՇՀՍ):

c. Իներցիոն չափման սարքավորումներ դիրքի և իրական հյուսիսի որոշման համար՝ օժտված հետևյալ բնութագրերից որևէ մեկով, ինչպես նաև դրանց համար հատուկ նախատեսված բաղադրիչներ.

1. Ունեն դիրքի կամ իրական հյուսիսի որոշման այնպիսի ճշգրտություն, որը փոքր է կամ հավասար (ավելի լավ է) 0,07 աստ/վրկ (լայն.) (45 աստիճան լայնության վրա համարժեք է 6 արկ/ր միջին քառակուսուն), կամ
2. Ունեն 1 մվրկ կամ ավելի տևողության համար 900 գ կամ ավելի շոկային մակարդակ չաշխատող վիճակում,

d. Իներցիոն չափման սարքավորումներ, ներառյալ իներցիոն չափման կայանքները (IMU) և իներցիոն չափման տեղեկատու համակարգերը (IRS), որոնք ներառում են 7A001 կամ 7A002 կետում սահմանվող արագացումաչափերը կամ հոլովակները և դրանց համար հատուկ նախատեսված բաղադրիչները:

*Օանթագրություն 1. 7A003.a. և 7A003.b. ենթակետերում նշված պարամետրերը կիրառելի են միջավայրի հետևյալ պայմաններից ցանկացածի դեպքում.*

*a. 7,7. g (ՄՔՄ) ընդհանուր մեծությամբ մուտքային պատահական թրթռում առաջին 0,5 ժամվա ընթացքում և 3 ուղղահայաց առանցքներից յուրաքանչյուրում 1,5 ժամ տևող ընդհանուր փորձարկման ժամանակ, երբ պատահական թրթռումները բավարարում են հետևյալ պահանջները.*

1. *հզորության սպեկտրային խտությունը (ՀՄԽ) 0.04 g/Հg է 15-ից մինչև 1000 հաճախականությունների միջակայքում,*
  2. *ՄՄԽ-ն թուլանում է 0,04 g/Հg-ից մինչև 0,01 g/Հg 1000-2000 Հg հաճախականությունների միջակայքում:*
-

---

*b. Շուրջ մեկ կամ ավելի առանցքների նկատմամբ անկյունային արագությունը գերազանցում է 2.62 ռադ/վրկ-ը (150 աստիճան/վրկ), կամ*

*3. Ազգային ստանդարտներում նշված պայմաններում, որոնց դրույթները կարող են համարժեք լինել այս ծանոթագրության 1. և 2. կետերին:*

Ծանոթագրություն 2. 7A003 կետով չեն վերահսկվում իներցիոն նավիգացիայի այն համակարգերը, որոնք հավաստագրված են մասնակից պետության քաղաքացիական մարմինների կողմից քաղաքացիական նշանակության օդանավերի վրա օգտագործման համար:

Ծանոթագրություն 3. 7A003.c.1. կետով չեն վերահսկվում տեղորիդային այն համակարգերը, որոնք ներառում են քաղաքացիական նպատակներով հետազոտությունների կատարման համար հատուկ նախատեսված իներցիոն սարքավորումներ:

Տեխնիկական ծանոթագրություն.

1. 7A003.b. կետը վերաբերում է այն համակարգերին, որոնցում ԻՆՀ-ն և ինքնուրույնաբար աշխատող նավիգացիոն այլ հարմարանքները ներկառուցված են միասնական կայանքում՝ աշխատանքի ավելի բարձր արդյունավետության ապահովելու նպատակով:

2. Շրջանային սխալանքի հավանականության ցուցիչ (CEP)՝ շրջանային սովորական բաշխվածության դեպքում կատարված առանձին չափումների 50 տոկոսը պարունակող շրջանի շառավիղ կամ այն շրջանի շառավիղ, որի ներսում պարունակվում է դիրքի որոշման 50 տոկոս հավանականություն:

---

7A003, a	9014 901420 901410000 901420200 901420800
----------	---

7A003, b	9014 901420 901410000 901420200 901420800
----------	---

---

7A004	Հոլակային աստղադիտական կողմնացույցներ, որոնք ավտոմատ
-------	--

---

---

ուղեկցման միջոցով որոշում են երկնային մարմինների կամ արբանյակների դիրքը կամ կողմնորոշումը՝ 5 անկյունային վայրկյաններին հավասար կամ դրանից ցածր ճշգրտությամբ՝ ըստ ազիմուտի:

Հ.Ծ. Տես նաև 7A104 կետը:

---

7A004 9014  
901420  
901410000  
901420200  
901420800  
901480000

---

7A005 Գլոբալ նավագնացադիտական արբանյակային համակարգերի (GPS կամ GLONASS) ընդունիչ սարքավորումներ, որոնք ունեն հետևյալ բնութագրերից որևէ մեկը, և դրանց համար հատուկ մշակված բաղադրիչներ.

Հ.Ծ. Տես նաև 7A105 կետը:

- a. Օգտագործում են վերծանում, կամ
- b. Ունեն ակտիվացված ուղղվածության դիագրամի գրոսկան դիրքի կառավարումով:

---

7A005 9014  
901420  
901410000  
901420200  
901420800

---

7A006 Օդանավի վրա օգտագործվող բարձրաչափեր, որոնք գործում են 4,2-4,4 Գհց (ներառյալ) հաճախականությունների ընդգրկույթից դուրս և ունեն հետևյալ բնութագրերից որևէ մեկը.

Հ.Ծ. Տես նաև 7A106 կետը:

- a. <<Մնուցման կառավարում>>, կամ
- b. Օգտագործում են փոփոխական ֆազով լայնույթային մոդուլյացիա:

---

7A006 8525  
8526  
852550000

---

---

852610000  
852691800  
852580990

---

7A008

Ստորջրյա սոնարային նավարկման համակարգեր, որոնք օգտագործում են Դոպլերի արագության կամ կորելյացիոն արագության ուղղորոշման սարքեր, ներկառուցված ուղղորոշիչ աղբյուրի մեջ, որի դիրքորոշման ճշգրտությունը հավասար է կամ պակաս է (ավելի լավ է) 3 % Շրջանային հավանական սխալից:

*Օանթագրություն. 7A008 կետով չեն վերահսկում այն համակարգերը, որոնք հատուկ նախագծված են մակերևութային փոխադրական ապարատների վրա տեղադրելու համար կամ այն համակարգերը, որոնք պահանջում են ակուստիկ բույեր դիրքորոշման տվյալների ճշգտման համար:*

*Հ.Ծ. Ակուստիկ համակարգերի համար տես 6A001.a. և 6A001.b. կետերը, կորելյացիոն արագության և Դոպլերի արագության սոնար սարքավորման համար:*

*Տես այլ ծովային համակարգերը 8A002 կետում:*

---

7A008

901420  
901420800  
903289000  
901420800  
901420800

---

7A101

Գծային արագացումաչափեր, բացի 7A001 կետում նկարագրվածներից, որոնք ունեն հետևյալ բնութագրերը.

a. Գծային արագացումաչափեր, մշակված իներցիոն նավագնացային համակարգերի և դրանց ղեկավարման համար, որոնք կարող են օգտագործվել հրթիռների և հատուկ մշակված դրանց բաղադրիչների համար, հետևյալ բնութագրերով.

a. Գծային սխալանքի առավելագույն սահմանը ամբողջ սանդհակի ցանկացած հատվածում՝ 1, 25 g

b. Գծային սխալանքի առավելագույն սահմանը ամբողջ սանդհակում՝ 1, 25 g:

*Օանթագրություն. 7A101 կետում չեն դիտարկվում այն արագացումաչափերը, որոնք հատուկ նախագծված և ստեղծված են՝ որպես տվիչներ հորատման ժամանակ չափումների անցկացման համար և նախատեսված են հորատանցքերի շահագործման ժամանակ օգտագործման համար:*

---



---

Տեխնիկական ծանոթագրություն.

1. 7A101 կետում հրթիռը նշանակում է ամբողջական հրթիռային համակարգեր և անօդաչու թռիչքների համակարգեր, որոնք կարող են աշխատել 300 կմ-ից ավելի հեռավորության վրա,
2. 7A101 կետում շեղման և մասշտաբի գործոնի չափումը նշանակում է 1 տարվա ժամանակաշրջանում հաստատուն չափաբերման նկատմամբ մեկ սիգմային հավասար ստանդարտ շեղում,

---

7A101 901420  
901420800

---

7A102 Բոլոր տեսակի հոլակները, բացի 7A002 կետում քննարկվածներից, որոնք կարող են օգտագործվել <<հրթիռներում>> և ունեն 0.5°-ից փոքր սխալանք <<դրեյֆի արագության>> <<կայունություն՝ չափված 1 g ազդեցության պայմաններում, և դրանց համար հատուկ մշակված բաղադրիչներ:

Տեխնիկական ծանոթագրություն.

1. 7A101 կետում հրթիռը նշանակում է ամբողջական հրթիռային համակարգեր և անօդաչու թռիչքների համակարգեր, որոնք կարող են աշխատել 300 կմ-ից ավելի հեռավորության վրա,
2. 7A102 կետում կայունությունը սահմանվում է որպես որոշակի մեխանիզմի կամ կատարողականության գործակցի՝ շարունակաբար հաստատուն աշխատանքային պայմաններում անփոփո մնալու ունակություն (IEEE STD 528-2001, 2.247-րդ պարբերություն):

---

7A102 903289000

---

7A103 Ստորև թվարկված սարքեր, նավագնացության սարքավորումներ և համակարգեր, բացառությամբ 7A003 կետում նշվածների, և դրանց համար հատուկ մշակված բաղադրիչներ.

- a. Արագացումաչափերը կամ հոլակները օգտագործող իներցիոն կամ այլ սարքավորումներ, և նշված սարքավորումներ ներառող համակարգեր, այդ թվում.
  1. 7A001.a.3., 7A001.b. կամ 7A101 կետերում սահմանվող արագացումաչափեր կամ 7A002 կամ 7A102 կետերում սահմանվող հոլակներ օգտագործող իներցիոն կամ այլ սարքավորումներ, կամ.
  2. 7A001.a.1. կամ 7A001.a.2. կետում սահմանվող արագացումաչափեր, որոնք ունեն բոլոր հետևյալ բնութագրերը.
    - a. Նախատեսված են իներցիոն նավիգացիոն համակարգերում կամ բոլոր տեսակների ուղղորդող համակարգերում, ինչպես նաև

---

հրթիռներում օգտագործման համար,

b. Ունեն 1 250 միկրո գ-ից փոքր (ավելի լավ) շեղման կրկնություն, և

c. Ունեն 1 250-ից փոքր (ավելի լավ) մմ մասշտաբի գործոնի կրկնելիություն,

*Ծանոթագրություն. 7A103.a. կետով չեն վերահսկվում 7A001 կետով վերահսկվող արագացումաչափեր պարունակող սարքավորումները, երբ նման արագացումաչափերը դիտվում են որպես հատուկ մշակված և նախագծված տվիչներ՝ հորատման ժամանակ չափումների անցկացման համար, որոնք նախատեսված են հորատանցքերի շահագործման ժամանակ օգտագործելու համար:*

b. Թռիչքի ինտեգրված գործիքային համակարգեր, որոնք ներառում են հողակային կայունարարներ կամ ավտոմատ օդանավավարության համակարգեր, որոնք մշակված կամ ձևափոխված են 9A004 կետով վերահսկվող տիեզերական ապարատներում կամ 9A104 կետով վերահսկվող զննող հրթիռներում օգտագործելու համար:

c. Թռիչքի նավագնացության համակարգեր՝ մշակված կամ ձևափոխված նավագնացության մեջ օգտագործելու համար, որոնց տեղորոշման սխալքը հավասար, կամ փոքր է, քան 200 մ CEP համակարգում:

*Տեխնիկական ծանոթագրություն.*

Սովորաբար ինտեգրված նավիզացիոն համակարգը ներառում է հետևյալ բաղադրիչները.

1. Իներցիոն չափման սարքա (օր.՝ դիրքի և ուղղության տեղեկատու համակարգ, իներցիոն տեղեկատու կայանք կամ իներցիոն նավիզացիոն համակարգ),
2. Թռիչքի ողջ ընթացքում պարբերաբար կամ շարունակաբար դիրքի և/կամ արագության արձանագրման մեկ ակմ ավելի արտաքին տվիչներ (օր.՝ արբանյակային նավիզացիոն ընդունիչ, բարձրության ռադարային չափիչ և/կամ Դոպլերի ռադար), և
3. Ինտեգրող համակարգչային սարքավորումներ և ծրագրեր,

d. Դիրքի որոշման եռառանցքանի մագնիսական տվիչներ՝ նախատեսված կամ փոփոխված թռիչքի կառավարման կամ նավիզացիոն համակարգերում ինտեգրման համար, որոնք ունեն հետևյալ բոլոր բնութագրերը, ինչպես նաև դրանց համար հատուկ նախատեսված բաղադրիչներ,

1. Քայլքի առանցքներում ներքին թեքության ( $^{\circ}$  90 աստիճան) և պտույտի ( $^{\circ}$  180 աստիճան) հավասարակշռում,
-

---

2. ° 80 աստիճան լայնության վրա կամ տեղական մագնիսական դաշտում կարող են ապահովել 0,5 աստիճանից ավելի լավ (պակաս) միջին քառակուսու ազիմուտային ճշգրտություն:

Օանթագրություն. 7A103.d. կետում նշվող թռիչքի կառավարման և նավիգացիայի համակարգերը ներառում են գիտակայունարարները, ավտոմատ օդաչուների և իներցիոն նավիգացիայի համակարգերը:

Տեխնիկական ծանոթագրություն.

1. 7A103 կետում հրթիռը նշանակում է ամբողջական հրթիռային համակարգեր և անօդաչու թռիչքային համակարգեր, որոնք կարող են աշխատել 300 կմ-ից ավելի հեռավորության վրա,

---

7A103, a 901420800

7A103, b 901420800

---

7A104 Հոլակային աստղադիտական կողմնացույցեր և այլ սարքեր, բացի 7A004 կետով վերահսկվողներից, որոնք ավտոմատ ուղեկցման միջոցով որոշում են երկնային մարմինների կամ արբանյակների դիրքը կամ կողմնորոշումը, և դրանց համար հատուկ մշակված բաղադրիչներ:

---

7A104 901480000

---

7A105 Գլոբալ նավագնացադիտական արբանյակային համակարգեր (GNSS, օր.՝ GPS, GLONASS, կամ Galileo) ընդունիչ սարքավորումներ, որոնք ունեն ստորև բնութագրերը, ինչպես նաև դրանց համար հատուկ նախատեսված բաղադրիչներ.

a. Մշակված կամ ձևափոխված 9A004 կետում սահմանվող տիեզերային արձակման համակարգերում, 9A012 կետում սահմանվող անօդաչու ինքնաթիռներում կամ 9A104 կետում սահմանվող հրթիռային զոնդերում օգտագործման համար, կամ

b. Մշակված կամ ձևափոխված օդային նավագնացության կիրառություններում օգտագործման համար, որոնք ունեն հետևյալ բնութագրերը.

1. 600 մ/վարկ արագությունների դեպքում ունակ են տրամադրելու նավագնացային տվյալներ,

2. Կիրառում են գաղտնագրային տվյալներ և նախատեսված են կամ փոփոխված ռազմական կամ պետական քաղաքացիական ծառայությունների համար՝ GNSS-ի պաշտպանված ազդանշաններից / տվյալներից օգտվելու նպատակով,

3. Հատուկ նախատեսված են խաթարումներից պաշտպանության

---

---

միջոցների կիրառմամբ (օր.՝ ալեհավաքային դիագրամ կամ էլեկտրոնային կառավարմամբ ալեհավաք) ակտիվ կամ պասիվ պատասխան միջոցառումների միջավայրում աշխատելու նպատակով:

*Շանթագրություն.* 7A105.b.2. և 7A105.b.3. կետով չի վերահսկվում GNSS ծառայությունների առևտրային, քաղաքացիական կամ ,կենսական ապահովությանե (օր.՝ տվյալների ամբողջականության, թռիչքների ապահովության) համար նախատեսված սարքավորումները:

---

7A105	852691 852691800 852692000 901420 901420800
-------	---

---

7A106	Ռադարային կամ լազերա-ռադարային տեսակի բարձրաչափեր, բացի 7A006 կետում սահմանվածներից, որոնք հատուկ մշակված կամ ձևափոխված են 9A004 կետով վերահսկվող տիեզերական ապարատներում կամ 9A104 կետով վերահսկվող զննող հրթիռներում օգտագործելու համար:
-------	--

---

7A106	8526 852610000 901320000
-------	--------------------------------

---

7A115	Պասիվ տվիչներ որոշակի էլեկտրամագնիսական աղբյուրի (դիրքի որոշման սարքավորում) կամ տեղանքի առանձնահատկությունների ուղղորոշման (պելենգումի) համար, որոնք մշակված կամ ձևափոխված են 9A004 կետով վերահսկվող տիեզերական ապարատներում կամ 9A104 կետով վերահսկվող հրթիռային զննողներում օգտագործման համար:
-------	---

*Շանթագրություն.* 7A115 կետում ընդգրկվում են հետևյալ սարքավորումների համար նախատեսված տվիչները.

- Տեղանքի քարտեզագրման սարքավորումներ,
- Պատկերի ձևավորման տվիչներ (ինչպես ակտիվ, այնպես էլ պասիվ),
- Պասիվ ինտերֆերաչափեր:

---

7A115	901420 901420200 901420800
-------	----------------------------------

---

7A116	Թոփչքի կառավարման համակարգեր, որոնք հատուկ նախատեսված կամ փոփոխված են 9A004 կետով վերահսկվող տիեզերական ապարատներում կամ 9A104 կետով վերահսկվող հրթիռային զոնդերում օգտագործման համար, ինչպիսիք են.
	a. Թոփչքի կառավարման հիդրավլիկ, մեխանիկական, էլեկտրասոպտիկական կամ էլեկտրամեխանիկական համակարգերը (թոփչքի հեռակառավարումը),
	b. Տարածության մեջ դիրքի հսկման սարքավորումները:
	c. Թոփչքի կառավարման փորձարկային, հսկիչ և արտադրական սարքավորումներ որոնք հատուկ պատրաստված կամ ձևափոխված են վերգետնյա փորձարկումների համար 10 g կամ ավելի թռթռատենդային արագացումների և 20Հց-ից 2ԿՀց հաճադություններում չափումներ իրականացնելու համար:
7A116, a	903281000 903289000 903290000
7A116, b	903281000 903289000 903290000
7A117	<<Հրթիռներում>> օգտագործվող <<ուղղորդման համակարգեր>>, որոնց ճշգրտությունը կարող է հասնել թոփչքի ամբողջ հեռավորության 3,33%-ին կամ պակաս (օրինակ՝ 300 կմ ընդգրկույթում “СЕР” 10 կմ կամ պակաս):
7A117	880390200 880390300
<b>7B</b>	<b>Փորձարկային, հսկիչ և արտադրական սարքավորումներ</b>
7B001	Փորձարկումների, չափաբերման և կարգավորման սարքավորումներ, որոնք հատուկ մշակված են 7A կետով վերահսկվող սարքավորումների համար: <i>Ծանոթագրություն. 7B001 կետով չեն վերահսկվում փորձարկումների, չափաբերման և կարգավորման այն սարքավորումները, որոնք նախատեսված են տեխնիկական սպասարկման I և II մակարդակների համար:</i>
	<i>Տեխնիկական ծանոթագրություն.</i>
	<i>1. I մակարդակի տեխնիկական սպասարկում.</i>

---

Նավագնացության իներցիոն սարքի վնասվածքը թռչող ապարատի վրա հայտնաբերվում է ցուցասարք ունեցող հսկիչ սարքավորման ցուցմունքի կամ համապատասխան ենթահամակարգից ստացվող ազդանշանի համաձայն: Արտադրողի հրահանգների համաձայն՝ անսարքությունը կարող է տեղայնացվել փոխարինվող բլոկի մակարդակի վրա: Օպերատորը հեռացնում է այդ բլոկը և այն փոխարինում պահեստայինով:

*2. II մակարդակի տեխնիկական սպասարկում.*

Անսարք վիճակում գտնվող սարքը վերանորոգման համար ուղարկվում է արտադրամաս (արտադրող ֆիրմայի կամ II մակարդակի տեխնիկական սպասարկման համար պատասխանատու օպերատորին): Արտադրամասում վնասված սարքը տարբեր համապատասխան միջոցներով փորձարկումների է ենթարկվում, որպեսզի ստուգվի և տեղայնացվի արտադրամասում փոխարինման ենթակա սարքի վնասված մոդուլը: Սարքի վնասված մոդուլը հեռացվում է և փոխարինվում աշխատող պահեստային մոդուլով: Այնուհետև սարքի վնասված մոդուլը (կամ, հնարավոր է, ամբողջ սարքը) վերադարձվում է արտադրողին:

---

7B001	903180 903210 903120000 903210200 903210810 903210890
-------	--

---

7B002	Սարքավորումներ, որոնք հատուկ մշակված են օդակային <<լազերային>> հոլակների հայելիների բնութագրերը գնահատելու համար, ինչպիսիք են.
-------	--

Հ.Օ. Տես նաև 7B102 կետը:

a. Անդրադարձաչափներ՝ որոնց չափման սխալը ավելի փոքր է քան 10 միլիոներորդականը:

b. Պրոֆիլաչափեր՝ 0,5 նմ (5 անգստրեմ) կամ դրանից փոքր սխալանքով չափման ճշգրտությամբ:

---

7B002	903180
-------	--------

---

7B003	Սարքավորումներ, որոնք հատուկ մշակված են 7A117 կետով վերահսկվող սարքավորումների <<արտադրության>> համար:
-------	--

---

---

Ծանոթագրություն. 7B003 կետում ընդգրկվում են.

- a. Հոլանդի կարգավորման համար նախատեսված փորձարկային սարքավորումները,
- b. Հոլանդի դինամիկ հավասարակշռման համար նախատեսված տեղակայանքները,
- c. Հոլանդի շարժիչի փորձարկման տեղակայանքները,
- d. Հոլանդի աշխատանքային նյութի լցման և պոմպահանման տեղակայանքները,
- e. Հոլանդի առանցքակալների համար նախատեսված կենտրոնախուսիչները,
- f. Արագացումաչափի առանցքակալների չափաբերման տեղակայանքները:

---

7B003	842119
	841370590
	842199000
	842119700
	842119200
	842123000
	903110000
	903120000
	903180
	903180380
	903180980
	848610000
	848620900
	848630900

---

7B102	Անդրադարձաչափեր, որոնք հատուկ մշակված են <<լազերային>> հոլակների հայելիների բնութագրերը գնահատելու համար և ունեն 50 միլիոնէրորդական կամ դրանից փոքր չափման սխալանք:
-------	---

---

7B102	903180980
-------	-----------

---

7B103	<<Արտադրական ֆոնդեր>>, ինչպիսիք են.
-------	-------------------------------------

---

- a. <<Արտադրական տարածքներ>>՝ հատուկ նախատեսված 7A117 կետում սահմանվող սարքավորման համար;
  - b. <<Արտադրական հնարավորություններ>>՝ հատուկ նախատեսված 7A117 կետում սահմանվող սարքավորման և այլ փորձարկման, չափագրման և ճշգրտման սարքավորումների համար,
-

---

բացի նրանցից, որոնք հասկոչուողով են 7B001 - 7B003 կետերում, նախագծված կամ փոփոխված 7A կատեգորիայում բնութագրված սարքավորման հետ:

---

7C            **Նյութեր**  
                  Չկան

---

7D            **Ծրագրային ապահովում**

---

7D001        <<Ծրագրային ապահովում>>, որը հատուկ մշակված կամ ձևափոխված է 7A կամ 7B կետերով հսկվող արտադրական սարքավորումների մշակման կամ արտադրության համար:

---

7D002        <<Ծրագրերը՝ նավագնացության ցանկացած ինտեգրիկական սարքավորման մեջ կամ դիրքի և ուղղության հսկման համակարգերում (ԴՈՒՀՀ) օգտագործելու համար, ներառյալ 7A003 կամ 7A004 կետերով չհսկվող ինտեգրիկական սարքավորումները:

*Ծանոթագրություն. 7D002 կետով չեն վերահսկվում հարթակային կարդանային ԴՈՒՀՀ-ներում օգտագործման համար նախատեսված ծրագրերը:*

*Տեխնիկական ծանոթագրություն. Օդում գտնվող թռչող ապարատի ԴՈՒՀՀ-ն, որպես կանոն, նավագնացության ինտեգրիկական համակարգերից (ԻՆՀ) տարբերվում է նրանով, որ ԴՈՒՀՀ-ն ներկայացնում է օդում գտնվող ապարատի դիրքի և ուղղության մասին տվյալներ, սակայն սովորաբար տեղեկություններ չի տալիս ԻՆՀ-ից ստացված՝ արագացմանը, արագությանը և կորորդինատներին առնչվող տեղեկությունների վերաբերյալ:*

---

7D003        Այլ <<ծրագրային ապահովում>>, ինչպես.

a. <<Ծրագրային ապահովում>>, որը հատուկ մշակված կամ ձևափոխված է՝ համակարգերի գործող բնութագրերը բարելավելու կամ նավագնացական սխալը նվազեցնելու համար՝ մինչև 7A003 և 7A004 կետերում նշված մակարդակները:

b. <<Ծրագրեր>>՝ հիբրիդային ինտեգրված համակարգերի համար, որոնք բարելավում են համակարգերի գործող բնութագրերը կամ նվազեցնում են նավագնացական սխալը մինչև 7A003 կետում նշված մակարդակները՝ ինտեգրիկական սարքավորման ստորև նշված տվյալներից որևէ մեկի հետ մշտապես միավորելու միջոցով.

---

1. Ռադարի կողմից ըստ Դոպլերի էֆեկտի որոշված

---



---

արագությունները,

2. Գլոբալ նավագնացադիտական արբանյակային համակարգերի (GPS կամ GLONASS) հսկիչ տվյալները, կամ

3. Տեղանքի ռելիեֆի մասին տեղեկություններ պարունակող տվյալների բազան:

c. <<Ծրագրեր>>՝ ինտեգրված ավիացիոն կամ հրթիռային համակարգերի համար, որոնք միավորում են չափող տվիչների տվյալները և օգտագործում են <<փորձագիտական համակարգեր>>:

d. <<Ծրագրեր>>՝ հետևյալ սարքավորումների <<մշակման>> համար.

1. Թռիչքի կառավարման թվային համակարգեր՝ <<թռիչքի ընդհանուր կառավարման>> համար:

2. Թռիչքի և շարժիչների կառավարման ինտեգրված համակարգեր:

3. Թռիչքի հեռակառավարման կամ ազդանշանային լույսերով կառավարման համակարգեր:

4. Խափանման նկատմամբ կայուն և ինքնավերալարելի թռիչքի կառավարման համակարգեր:

5. Օդանավում տեղադրված ավտոմատ սարքավորումներ, որոնք կառավարում են կողմնորոշումը:

6. Օդային տեղեկատվական համակարգ, որը հիմնված է հաստատուն տվյալների վրա:

7. Պրոյեկցիոն դիսփլեյներ՝ (ցուցասարքեր) ռաստրային տեսակի գլխիկներով, կամ եռաչափ դիսփլեյներ:

e. Ավտոմատացված նախագծման համակարգերի <<ծրագրային ապահովում>>, որը հատուկ մշակված է <<թռիչքի կառավարման ակտիվ համակարգերի>>, հեռավորական կամ ազդանշանային լույսերով ուղղաթիռի բազմակոորդինատ կառավարման համակարգերի կամ ուղղաթիռների <<ուղղության կամ հակապտույտի կառավարման՝ հսկվող շրջանառությամբ համակարգերի>> <<մշակման>> համար, որոնց <<տեխնոլոգիաները>> հսկվում են 7E004.b., 7E004.c.1. կամ 7E004.c.2. կետերով:

---

7D101 <<Ծրագրային ապահովում>>, որը հատուկ մշակված կամ ձևափոխված է 7A001-7A006, 7A101-7A106, 7A115, 7A116.a., 7A116.b., 7B001, 7B002, 7B003, 7B102 կամ 7B103 կետերով վերահսկվող սարքավորումներում <<օգտագործելու>> համար:

---

7D102 Ինտեգրված <<ծրագրային ապահովում>>, ինչպես.  
a. Ինտեգրված <<ծրագրային ապահովում>>՝ 7A003.b. կետում նկարագրված սարքավորումների համար:  
b. Ինտեգրված <<ծրագրային ապահովում>>, որը հատուկ մշակված է 7A103.a. կետում նկարագրված սարքավորումների համար:  
c. Ներկառուցված ծրագրեր, որոնք հատուկ ստեղծված են 7A103.c կետում

---

---

նկարագրված սարքավորումների համար:

---

7D103 <<Ծրգրային ապահովում>>, որը հատուկ մշակված է 7A117 կետում նկարագրված <<ուղղորդման համակարգերի>> մոդելավորման կամ նմանակման համար կամ դրանք 9A004 կետով վերահսկվող տիեզերական ապարատներում կամ 9A104 կետով վերահսկվող զննող հրթիռներում ինտեգրելու համար:

*Ծանոթագրություն. 7D103 կետում նկարագրված <<ծրագրային ապահովում>> հսկվում է նաև այն դեպքում, երբ այն միավորված է 4A102 կետում նկարագրված սարքավորումների հետ:*

---

**7E Տեխնոլոգիաներ**

---

7E001 <<Տեխնոլոգիաներ>>, որոնք, ընդհանուր տեխնոլոգիական ծանոթագրությանը համապատասխան, նախատեսված են 7A, 7B կամ 7C կետերով հսկվող սարքավորումների կամ ծրագրային ապահովման <<մշակման>> համար:

7E002 <<Տեխնոլոգիաներ>>, որոնք, ընդհանուր տեխնոլոգիական ծանոթագրությանը համապատասխան, նախատեսված են 7A կամ 7B կետերով հսկվող սարքավորումների <<արտադրության>> համար:

7E003 <<Տեխնոլոգիաներ>>, որոնք, ընդհանուր տեխնոլոգիական ծանոթագրությանը համապատասխան, նախատեսված են 7A001-ից մինչև 7A004 կետերով հսկվող սարքավորումների վերանորոգման, կապիտալ վերանորոգման և վերականգնման համար:

*Ծանոթագրություն. 7E003 կետով չի հսկվում այն <<տեխնոլոգիաների>> տեխնիկական սպասարկումը, որոնք անմիջականորեն կապված են I և II մակարդակների տեխնիկական սպասարկման նկարագրության մեջ նշված անսարք կամ շահագործման համար ոչ պիտանի տիպային փոխարինվող տարրերի չափաբերման, ապամոնտաժման կամ փոխարինման հետ:*

---

7E004 Այլ տեխնոլոգիաներ, ինչպիսիք են.

a. <<Տեխնոլոգիաներ>>՝ հետևյալի մշակման կամ <<արտադրության>> համար.

1. Օդանավի վրա տեղադրված ավտոմատ ուղղորդման (պելենգումի) սարքավորումներ, որոնք աշխատում են 5 ՄՂց-ից բարձր հաճախականություններում:
  2. Օդային տեղեկատվական համակարգեր, որոնք հիմնված են միայն
-

---

մակերեսային հաստատուն տվյալների վրա, այսինքն՝ համակարգեր, որոնք ի վիճակի են գործել առանց ստանդարտ օդային նմուշների:

3. Պրոյեկցիոն դիսփլեյներ (ցուցասարքեր)՝ ռաստրային տեսակի գլխիկներով, կամ եռաչափ դիսփլեյներ՝ <<թռչող ապարատների>> համար:

4. Նավագնացության իներցիական համակարգեր կամ հոլակային աստղադիտական կողմնացույցներ, որոնք պարունակում են 7A001 կամ 7A002 կետերով հսկվող արագացումաչափեր կամ հոլակներ:

5. Էլեկտրական կատարող մեխանիզմներ (այսինքն՝ էլեկտրամեխանիկական, էլեկտրահիդրոստատիկ և ինտեգրված կատարող բլոկներ), որոնք հատուկ մշակված են <<թռիչքի ուղղակի կառավարման>> համար:

6. <<Թռիչքի կառավարման համակարգի օպտիկական տվիչների խումբ>>, որոնք հատուկ մշակված են <<թռիչքի կառավարման ակտիվ համակարգերում>> կիրառելու համար:

b. <<Թռիչքի կառավարման ակտիվ համակարգերի>> (ներառյալ հեռակառավարվող կամ ազդանշանային լույսերով կառավարվող թռիչքները) մշակման <<տեխնոլոգիաներ>>, որոնք ներառում են.

1. Բազմաթիվ միկրոէլեկտրոնային հաշվողական տարրերի (օդանավում տեղադրված համակարգերի) միջև կապի փոխդասավորությունների նախագծում, որը թույլ է տալիս <<ժամանակի իրական մասշտաբում>> իրականացնել կառավարմանը:

2. Չափող տվիչների տեղադրությունից կամ թռչող ապարատի հիմնակմախքի դինամիկ բեռնվածությունից կառավարման կախվածության համակշռում, օրինակ՝ տվիչների թրթռային ֆոնի կամ ծանրության կենտրոնի նկատմամբ տվիչների տեղակայվածության շեղման համակշռում:

3. Հավելուրդային տվյալների կամ պահուստային համակարգերի էլեկտրոնային կառավարում՝ սխալի որոշման, խափանման նկատմամբ կայունության ապահովման, սխալի տեղայնացման կամ համակարգի վերակառուցման համար:

*Օանթագրություն. 7E004.b.3. կետով չեն հսկվում ֆիզիկական հավելուրդի նախագծման <<տեխնոլոգիաները>>:*

4. Թռչող ապարատի կառավարում, ինչը թույլ է տալիս ինքնավար կերպով ժամանակի իրական մասշտաբում փոփոխել ուժերի և մոմենտների կառուցվածքը:

5. Թռիչքի կառավարման թվային համակարգի, նավագնացության համակարգի և շարժիչի կառավարման համակարգի տվյալների

---

---

ինտեգրում <<թոփչքի ընդհանուր կառավարման>> թվային համակարգում:

Ծանոթագրություն. 7E004. b.5. կետով չեն վերահսկվում.

a. <<Տեխնոլոգիաներ>>՝ թոփչքի կառավարման, նավագնացության և շարժիչի տվյալների հսկողության այն թվային համակարգերի <<մշակման>> համար, որոնք միավորվել են թոփչքի կառավարման թվային համակարգում՝ <<թոփչքի հետագծի օպտիմալացման>> համար:

b. Նավագնացության այն ավիացիոն միջոցների <<մշակման>> տեխնոլոգիաները, որոնք նախատեսված են բացառապես ԳԲՀ (գերբարձրհաճական) ընդգրկույթում գործող ուղեծրային համաուղղված ռադիոփարոսների, հեռաչափիչ սարքերի, <<կույր>> վայրէջքի համակարգի, ԳԲՀ ընդգրկույթի վայրէջքի համակարգի կամ վայրէջքամուտի համակարգի համար:

6. Թոփչքի թվային կառավարման ամբողջական համակարգը կամ <<փորձագիտական համակարգեր>> օգտագործող կառավարող համակարգերի աշխատանքի կազմակերպման բազմատվիչ համակարգը:

Հ.Ծ. Շարժիչների կառավարման լիովին ինքնավար էլեկտրոնաթվային համակարգերի (ՖԱԴԵԿ) վերաբերյալ տես 9E003.a.9 կետը:

c. <<Տեխնոլոգիաներ>>՝ հետևյալ ուղղաթիռային համակարգերի <<մշակման>> համար.

1. Հեռավորական կամ ազդանշանային լույսերով կառավարման բազմակողմանի միջոցներ, որոնք հետևյալ գործառնություններից առնվազն երկուսը միավորում են մեկ կառավարող տարրում:

- a. Տանող պտուտակի կառավարում,
- b. Պտույտի կառավարում,
- c. Ընթացաշեղման կառավարում:

2. <<Ուղղորդված շարժման ժամանակ պտտման մոմենտի և ոլորող ճիգի կառավարման համակարգ>>

3. Պտտվող թիակներ՝ <<աերոդինամիկ պրոֆիլի փոփոխական երկրաչափությամբ>> կառավարվող թիակներով համակարգերի համար:

---

7E101 <<Տեխնոլոգիաներ>>, որոնք, ընդհանուր տեխնոլոգիական ծանոթագրությանը համապատասխան, նախատեսված են 7A001-7A006, 7A101-7A106, 7A115-7A117, 7B001, 7B002, 7B003, 7B102, 7B103, 7D101-7D103 կետերով հսկվող սարքավորումների հետ օգտագործելու համար:

---

7E102	<p>&lt;&lt;Տեխնոլոգիաներ&gt;&gt;, որոնք նախատեսված են ավիացիոն էլեկտրոնիկան և էլեկտրական ենթահամակարգերը արտաքին աղբյուրների էլեկտրամագնիսական իմպուլսներից և ռադիոխանգարումներից պաշտպանելու համար:</p> <p>a. Պաշտպանական համակարգերի նախագծման &lt;&lt;տեխնոլոգիաներ&gt;&gt;  b. Պաշտպանված էլեկտրական սխեմաների և ենթահամակարգերի փոխդասավորությունների նախագծման &lt;&lt;տեխնոլոգիաներ&gt;&gt;  c. 7E102. a. և 7E102. b. կետերում օգտագործվող պաշտպանվածության չափանիշի որոշման &lt;&lt;տեխնոլոգիաներ&gt;&gt;:</p>
7E104	<p>&lt;&lt;Տեխնոլոգիաներ&gt;&gt;՝ թռիչքի հսկողության, ուղղորդման և շարժիչի տվյալները թռիչքի կառավարման համակարգում ինտեգրելու համար՝ հրթիռային համակարգի հետագծի օպտիմալացման նպատակով:</p>

## Կատեգորիա 8. Ծովագնացություն

<b>8A</b>	<b>Համակարգեր, սարքավորումներ և բաղադրիչներ</b>
8A001	<p>Ստորջրյա ապարատներ և վերջրյա նավեր, ինչպիսիք են.</p> <p><i>Ծանոթագրություն. Ստորջրյա ապարատների սարքավորումների հսկողական կարգավիճակը գնահատելու համար տես.</i></p> <ul style="list-style-type: none"> <li>- <i>Կատեգորիա 5, Մաս 2 &lt;&lt;Ինֆորմացիայի պաշտպանություն&gt;&gt;՝ ծածկագրված ինֆորմացիայի փոխանցման սարքավորումների համար,</i></li> <li>- <i>Կատեգորիա 6՝ տվիչների համար,</i></li> <li>- <i>Կատեգորիա 7 և 8՝ նավագնացության սարքավորումների համար,</i></li> <li>- <i>Կատեգորիա 8A՝ ստորջրյա սարքավորումների համար:</i></li> </ul> <p>a. Մարդու կողմից նավավարվող, հեռակառավարվող ստորջրյա ապարատներ, որոնք նախագծված են 1000 մ գերազանցող խորություններում նավարկելու համար:</p> <p>b. Մարդու կողմից նավավարվող, անհեռակառավարելի ապարատներ, որոնք ունեն հետևյալ բնութագրերից որևէ մեկը.</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Նախագծված են &lt;&lt;ինքնավար նավարկության&gt;&gt; համար և ունեն բեռնունակություն. <ol style="list-style-type: none"> <li>a. Իրենց սեփական կշռի (կշիռը օդում) 10% կամ ավելի չափով,</li> <li>b. 15 կՆ կամ ավելի:</li> </ol> </li> <li>2. Նախագծված են 1000 մ գերազանցող խորություններում նավարկելու համար:</li> </ol>

---

3. Ունեն բոլոր հետևյալ բնութագրերը.

- a. Նախատեսված են չորս կամ ավելի մարդկանցից կազմված մշտական անձնակազմի համար,
- b. Նախատեսված են 10 ժամվա ընթացքում կամ ավելի երկար ժամանակում <<ինքնավար նավարկության>> համար,
- c. Ունեն 25 ծովային մղոն կամ ավելի <<գործողության շառավիղ>>,
- d. Ունեն 21 մ կամ ավելի երկարություն:

Տեխնիկական ծանոթագրություն.

1. 8A001.b. կետի նկատմամբ կիրառվող <<ինքնավար նավարկություն>> տերմինը նշանակում է, որ ապարատները լրիվ սուզված են առանց շարժաերկփողի, դրանց բոլոր համակարգերը գործում են և ապահովում նավարկության նվազագույն արագություն, որի դեպքում կարելի է անվտանգ կառավարել սուզման պրոցեսը (հաշվի առնելով անհրաժեշտ դինամիկան ըստ սուզման խորության) միայն խորության դեկերի օգտագործմամբ՝ առանց վերջրյա օժանդակող նավի կամ բազայի (առափնյա, հատակի կամ սպասարկու նավի) անհրաժեշտության. ապարատներն ունեն սուզված և վերջրյա վիճակներում շարժումն ապահովող շարժիչային համակարգ:

2. 8A001.b. կետում նշվող <<գործողության շառավիղ>> կազմում է այն առավելագույն տարածության կեսը, որը կարող է հաղթահարվել ստորջրյա ապարատի կողմից:

c. Մարդու կողմից չնավավարվող, հեռակառավարվող ստորջրյա ապարատներ, որոնք նախագծված են 1000 մ գերազանցող խորություններում նավարկելու համար, և ունեն հետևյալ բնութագրերից որևէ մեկը.

1. Նախագծված են ինքնագնաց մանրի համար՝ 8A002. a.2. ենթակետով վերահսկվող շարժիչների կամ քարշային կայանքների կիրառմամբ:

2. Ունեն տվյալների փոխանցման թելքաօպտիկական գծեր:

d. Մարդու կողմից չնավավարվող, անհեռակառավարելի ստորջրյա ապարատներ, որոնք ունեն հետևյալ բնութագրերից որևէ մեկը.

1. Նախագծված են ժամանակի իրական մասշտաբում ցանկացած աշխարհագրական կողմնորոշիչին հասնելու խնդիրների լուծման համար (ուղեգծի որոշում)՝ առանց մարդու մասնակցության:

2. Ունեն ձայնային տվյալների կամ հրամանների փոխանցման ուղի:

3. Ունեն տվյալների կամ հրամանների փոխանցման թելքաօպտիկական գիծ՝ 1000 մ գերազանցող երկարությամբ:

---

---

e. Փրկության օվկիանոսային համակարգեր՝ 5 ՄՆ-ից ավելի ամբարձիչ ուժով՝ 250 մ գերազանցող խորություններից օբյեկտները փրկելու համար, և օժտված հետևյալ բնութագրերից որևէ մեկով.

1. Դիրքի դինամիկ կառավարման համակարգեր, որոնք ընդունակ են պահպանել դիրքը նավագնացության համակարգի կողմից ֆիքսված որևէ տվյալ կետից 20 մ-ի սահմաններում:

2. Հատակամերձ նավագնացության և նավագնացության ինտեգրման համակարգեր՝ 1000 մ գերազանցող խորությունների համար՝ որևէ տվյալ կետից 10 մ-ի սահմաններում դիրքորոշման ճշգրտությամբ:

f. Օդաբարձով ամֆիբիա նավեր (լրիվ փոփոխելի մակերեսային փոխդասավորությամբ), որոնք ունեն բոլոր հետևյալ բնութագրերը.

1. Լրիվ բեռնվածության դեպքում 30 հանգույցներից ավելի առավելագույն նախագծային արագություն, երբ ալիքի բարձրությունը 1.25 մ է կամ ավելի (ծովային ալեկոծության 3 աստիճան):

2. 3830 Պա ամորտիզացնող ճնշում;

3. Դատարկ և ամբողջովին բարձված նավի ջրատարողության հարաբերակցությունը 0,70 է:

g. Օդաբարձով ամֆիբիանավեր (անփոփոխելի մակերեսային փոխդասավորությամբ), լրիվ բեռնվածության դեպքում 40 հանգույցներից ավելի առավելագույն նախագծային արագությամբ, երբ ալիքի բարձրությունը 3,25 մ է կամ ավելի (ծովային ալեկոծության 5 աստիճան):

h. Ստորջրյա թևերով նավեր՝ թևի ավտոմատ կառավարման ակտիվ համակարգերով, 40 հանգույցներից ավելի առավելագույն նախագծային արագությամբ, երբ ալիքի բարձրությունը 3,25 մ է կամ ավելի (ծովային ալեկոծության 5 աստիճան):

i. Նավեր՝ ջրագծի հատման փոքր մակերեսով, որոնք ունեն հետևյալ բնութագրերից որևէ մեկը.

1. Լրիվ բեռնվածության դեպքում 500 տոննան գերազանցող ջրատարողություն՝ լրիվ բեռնվածության ժամանակ 35 հանգույցներից ավելի առավելագույն նախագծային արագությամբ, երբ ալիքի բարձրությունը 3,25 մ է կամ ավելի (ծովային ալեկոծության 5 աստիճան), կամ

2. Լրիվ բեռնվածության դեպքում 1500 տոննան գերազանցող ջրատարողություն՝ լրիվ բեռնվածության ժամանակ 25 հանգույցներից ավելի առավելագույն նախագծային արագությամբ, երբ ալիքի բարձրությունը 4 մ է կամ ավելի (ծովային ալեկոծության 6 աստիճան):

*Տեխնիկական ծանոթագրություն.*

*Նավը դասվում է <<ջրագծի հատման փոքր մակերեսով>> նավերի*

---

---

*կարգին, եթե օպերացիոն նախագծային սուզման դեպքում դրա ջրագծի հատման մակերեսը փոքր է հետևյալ մեծությունից. 2X (օպերացիոն նախագծային սուզման դեպքում նավի ունեցած ջրատարողություն) 2/3:*

---

8A001, a	890690100 890690990
8A001, b	890690100 890690990
8A001, c	890690100 890690990
8A001, d	890690100 890690990
8A001, e	890590100 890690100
8A001, f	890690100 890690990
8A001, g	890690100 890690990
8A001, h	890690100 890690990
8A001, i	890690100 890690990

---

8A002 Ծովագնացության համակարգեր կամ սարքավորումներ, ինչպիսիք են.

*Օանդթագրություն. Ստորջրյա հաղորդակցության համակարգերի վերաբերյալ տես Կատեգորիա 5, Մաս 1 (Հեռահաղորդակցություն):*

a. Համակարգեր և սարքավորումներ, որոնք հատուկ նախագծված կամ ձևափոխված են 1000 մ գերազանցող խորություններում նավարկելու նպատակով նախատեսված ստորջրյա ապարատների համար, ինչպիսիք են.

1. Բարձր ճնշմանը դիմանալու ընդունակություն ունեցող հատվածամասեր կամ իրաններ՝ 1.5 մ գերազանցող խցիկի ներքին տրամագծով,
  2. Հաստատուն հոսանքի էլեկտրաշարժիչներ կամ քարշային տեղակայանքներ,
-



---

3. Մալուխների հարակցիչներ և միակցիչներ, որոնք օգտագործում են օպտիկական մանրաթել և ունեն սինթետիկ նյութերից կազմված ուժային տարրեր:

4. Բաղադրիչներ, որոնք պատրաստված են 8C001 կետում հասկերոշված նյութերից

Տեխնիկական ծանոթագրություն.

*Այս կետով վերահսկվող առարկաները չպետք է ազատվեն սինտակտիկ փրփուրի արտահանման վերահսկումից,ով որը բնորոշված է 8C001 կետով, երբ կատարվել է արտադրության միջանկյալ փուլը և առարկան դեռ վերջնական բաղադրիչային ձևին չի հասել:*

b. Համակարգեր և սարքավորումներ, որոնք հատուկ նախագծված կամ ձևափոխված են 8A001 կետում նկարագրված ստորջրյա ապարատների շարժման ավտոմատ կառավարման համար, որոնք օգտագործում են նավագնացության տվյալները և ունեն օժանդակ կառավարման միջոցներ՝ փակ հաղորդաշղթայով.

1. Ընդունակ են կառավարել ապարատի շարժումը ջրասյան 10 մ-ի սահմաններում,

2. Ընդունակ են պահպանել ապարատի դիրքը ջրասյան 10 մ-ի սահմաններում, կամ

3. Ընդունակ են պահպանել ապարատի դիրքը 10 մ-ի սահմաններում ծովի հատակի վրայով կամ տակով անցկացված ճոպանին հետևելու դեպքում:

c. Օպտիկա-մարաթելային պատյանավոր հարակցիչներ կամ միակցիչներ:

d. Ստորջրյա դիտարկման համակարգեր, որոնք ներառում են.

1. Հեռուստատեսային համակարգեր և հեռուստատեսային խցիկներ, ինչպիսիք են.

a. Հեռուստատեսային համակարգեր (ներառյալ խցիկը, մոնիտորինգի և ազդանշանի հաղորդման սարքավորումը), որոնց լուծունակությունը՝ չափված օդային միջավայրում, 800 գծից ավելի է, և որոնք հատուկ նախագծված կամ ձևափոխված են ստորջրյա նավի հեռակառավարման համար,

b. Ստորջրյա հեռուստախցիկներ, որոնց լուծունակությունը՝ չափված օդային միջավայրում, 1100 գծից ավելի է,

c. Հեռուստատեսային խցիկներ՝ լուսավորվածության ցածր աստիճան ունեցող օբյեկտների նկարահանման համար, որոնք հատուկ նախագծված կամ ձևափոխված են ջրի տակ օգտագործելու համար և ունեն բոլոր ստորն թվարկված բաղադրիչները.

1. Պատկերի ուժեղացման խողովակներ, որոնք հսկվում են 6A002.a.2.a. կետով, և

---

---

2. Ավելի քան 150000 <<ակտիվ պիկսել>> պինդմարմնային ընդունիչի մակերեսի վրա:

Տեխնիկական ծանոթագրություն.

*Հեռուստատեսության մեջ օգտագործվում է IEEE 208/1960 ստանդարտը կամ դրա ցանկացած համարժեքը:*

2. Ստորջրյա նավերի հեռակառավարման համար հատուկ նախագծված կամ ձևափոխված համակարգեր, որոնք օգտագործում են հակադարձ ցրման էֆեկտի նվազեցման միջոցները, ներառյալ ճառագայթիչները՝ հեռավորության որոշակի ընդգրկույթում ազդանշանի թողանցմամբ, կամ <<լազերային>> համակարգերը:

e. Լուսադիապոզիտիվ խցիկներ, որոնք հատուկ նախագծված կամ ձևափոխված են 150 մ կամ ավելի խորություններում ստորջրյա կիրառման համար, ժապավենի 35 մմ կամ ավելի ֆորմատով, և որոնք ունեն ստորև նշվածներից որևէ մեկը.

1. Ժապավենի անոտացում՝ խցիկի նկատմամբ արտաքին հանդիսացող աղբյուրի տվյալներով,
2. Հակադարձ կիզակետային հեռավորության ավտոմատ ուղղում, կամ
3. Ավտոմատ համակշռմամբ կառավարում, որը հատուկ նախագծված է 1000 մ գերազանցող խորություններում ստորջրյա նկարահանման խցիկների գործունակությունն ապահովելու համար:

f. Էլեկտրոնային համակարգեր, որոնք հատուկ նախագծված կամ ձևափոխված են ստորջրյա օգտագործման համար և ընդունակ են թվային ձևով պահպանել ավելի քան 50 լուսակայված կադր:

1. Պատկերի հստակեցման խողովակներ, որոնք սահմանվում են 6A002.a.2.a. կամ 6A002.a.2.b. կետում և աշխատում են պատկերի էլեկտրոնային ուժեղացման մեթոդով, բացառությամբ միկրոանցքային տակդիրի մեթոդը, կամ
2. Տիեզերքում կիրառման համար ոչ պիտանի տեսափոխակերպման մատրիցներ՝ սահմանված 6A002.a.3.g. կետում,

g. Լուսավորման համակարգեր, որոնք հատուկ նախագծված կամ ձևափոխված են ստորջրյա օգտագործման համար:

1. Ստորբադիտական լուսային համակարգեր՝ մեկ բռնկման ժամանակ 300 Ջ լուսարձակման էներգիայով և վայրկյանում 5 բռնկումից ավելի արագությամբ:
  2. Արգոնաաղեղային լուսային համակարգեր, որոնք հատուկ
-

---

նախագծված են 1000 մ գերազանցող խորություններում  
օգտագործելու համար:

h. Ստորջրյա կիրառման համար հատուկ նախագծված <<ռոբոտներ>>, որոնք կառավարվում են <<ներկառուցված ծրագրով կառավարվող>> մասնագիտացված ԷՀՄ-ների օգտագործման միջոցով և ունեն բոլոր ստորն նշվածները.

1. Տվիչներից ստացված ինֆորմացիայի օգտագործումով <<ռոբոտները>> կառավարող համակարգեր, որոնք չափում են արտաքին օբյեկտի նկատմամբ գործադրվող ճիգը կամ պտտող մոմենտը, մինչև արտաքին օբյեկտն ընկած հեռավորությունը և ռոբոտի ու արտաքին օբյեկտի միջև շփումային (տակտիլային) փոխազդեցությունը, կամ

2. 250 Ն կամ ավելի մեծ ճիգ կամ 250 Ն մ կամ ավելի մեծ ոլորող մոմենտ ստեղծելու ունակություն, և տարրերի կառուցվածքներում տիտանի կամ <<մանրաթելային կամ թելքանման>> բաղադրանյութերի հիմքով համաձուլվածքների օգտագործում:

i. Հեռակառավարվող հողակապավոր մանիպուլյատորներ, որոնք հատուկ նախագծված կամ ձևափոխված են ստորջրյա նավերի հետ օգտագործելու համար և ունեն բոլոր ստորն նշվածները.

1. Տվիչներից ստացված ինֆորմացիայի օգտագործումով մանիպուլյատորները կառավարող համակարգեր, որոնք չափում են արտաքին օբյեկտի նկատմամբ գործադրվող ճիգը կամ պտտող մոմենտը, մինչև արտաքին օբյեկտն ընկած հեռավորությունը և մանիպուլյատորի ու արտաքին օբյեկտի միջև շփումային (տակտիլային) փոխազդեցությունը, կամ

2. Համամասնական կառավարում՝ <<տանող-տարվող>> (<<գլխավոր-ենթակառուցված) մեթոդով կամ կառավարում <<ներկառուցված ծրագրով կառավարվող>> մասնագիտացված ԷՀՄ-ների օգտագործմամբ, որոնք ունեն <<գործողությունների ազատության>> 5 կամ ավելի աստիճան:

*Օանթագրություն. Գործողության ազատության աստիճանների քանակը որոշելիս հաշվի են առնվում միայն այն գործառնությունները, որոնք ունեն համամասնական կառավարում՝ դիրքային հակադարձ կապի կիրառմամբ կամ ներկառուցված ծրագրով կառավարվող>> մասնագիտացված ԷՀՄ-ների օգտագործմամբ:*

j. Մթնոլորտից մեկուսացված էներգետիկ տեղակայանքներ, որոնք հատուկ նախագծված են ստորջրյա կիրառման համար, ինչպիսիք են.

---

---

1. Մթնոլորտից մեկուսացված՝ Բրայտոնի կամ Ռենկինի ցիկլերով շարժիչներ, որոնք ունեն բոլոր ստորև նշվածները.

a. Քիմիական գազագոտիչներ (սկրուբերներ) կամ կլանիչներ (աբսորբերներ), որոնք հատուկ նախագծված են ածխածնի երկօքսիդը, ածխածնի օքսիդը և շարժիչի վերաշրջանառվող արտանետումների մասնիկները հեռացնելու համար:

b. Համակարգեր, որոնք հատուկ նախագծված են միատոմային գազի կիրառման համար:

c. Սարքեր կամ խլարարներ, որոնք հատուկ նախագծված են ջրի տակ 10 ԿՀց-ից ցածր հաճախականություններում ադմուլկի նվազեցման համար, կամ հատուկ մոնտաժված (հավաքակցված) սարքեր՝ արտանետման հարվածները մեղմելու համար.

d. Համակարգեր, որոնք հատուկ նախատեսված հետևյալի համար.

1. Ռեակցիայի արդյունքների մեկուսացում կամ վառելիքի փոխակերպում,
2. Ռեակցիայի արդյունքների պահպանում, և
3. Ռեակցիայի արդյունքների արտանետում 100 ԿՊա կամ ավելի ճնշման պայմաններում:

2. Մթնոլորտից մեկուսացած համակարգեր՝ դիզելային շարժիչներով, որոնք ունեն բոլոր հետևյալ բնութագրերը.

a. Քիմիական գազագոտիչներ կամ կլանիչներ, որոնք հատուկ նախագծված են ածխածնի երկօքսիդը, ածխածնի օքսիդը և շարժիչի վերաշրջանառվող արտանետումների մասնիկները հեռացնելու համար,

b. Համակարգեր, որոնք հատուկ նախագծված են միատոմային գազի կիրառման համար,

